



ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Պրակ Ե

ԼԻՆԳՎԱ
ԵՐԵՎԱՆ
2014



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ЛИНГВИСТИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В.Я. БРЮСОВА

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ЛИТЕРАТУРЫ И КУЛЬТУРЫ

Выпуск 5

ЛИНГВА
Ереван
2014

ՀՏԴ 820/89.0:008
ԳՄԴ 83.3+71
Գ 870

Տպագրվում է ԵՊԼՀ գիտական խորհրդի որոշմամբ:
Печатается по решению Ученого совета ЕГЛУ
им. В.Я.Брюсова.

Գլխավոր խմբագիր՝ Գ. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

Կառաբեգովա Ե.Վ.	բ.գ.դ., պրոֆեսոր
Խաչատրյան Ն .	բ.գ.թ., պրոֆեսոր
Դավթյան Ս.Ս.	բ.գ.թ., դոցենտ
Գուլանյան Կ.,	բ.գ.թ., դոցենտ
Ապրեսովա Ս.	բ.գ.թ.

Ա Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ– Եր.:
Լինգվա, 2014, պրակ 5, գլխ. խմբագիր՝ Գ. Գասպարյան, 312
էջ

Гл. редактор Г.Р.Гаспарян д.ф.н., профессор

Редакционная коллегия:

Карабегова Е.В.	д.ф.н., профессор;
Хачатрян Н.М.	к.ф.н., профессор;
Давтян С.С.	к.ф.н., доцент.
Гуланян К.Г.	к.ф.н., доцент
Апресова С.В.	к.ф.н.

ՀՏԴ
ԳՄԴ

ISBN 978- 9939-56- 116-5

©Լինգվա,2014

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ

Սույն պրակը հանդիսանում է գրականության և մշակույթի տեսության ու պատմության խնդիրներին նվիրված գիտական հոդվածների հերթական ժողովածուն, որ պարբերաբար հրատարակում է Երևանի Վ.Յու.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի գրականագիտության ամբիոնը:

Խմբագրական հանձնախմբին ներկայացված նյութերը ենթարկվել են ընտրության, հրատարակվել են միայն այն հոդվածները, որոնք համապատասխանել են ներկա հրատարակության պահանջներին:

Խմբագրական հանձնախումբը մասնակցության համար շնորհակալություն է հայտնում Ռուսաստանի, Վրաստանի և Հայաստանի գիտնականներին՝ հետազա արդյունավետ համագործակցության ակնկալիքով:

ОТ РЕДАКЦИОННОЙ КОЛЛЕГИИ

Настоящий том является очередным сборником научных статей, посвященных проблемам теории и истории литературы и культуры, периодически публикуемых кафедрой литературоведения ЕГЛУ им. В.Я.Брюсова.

Научные статьи, представленные в редакционную коллегию, были подвергнуты строгому отбору, и опубликованы только те из них, которые отвечают требованиям настоящего издания.

Редакционная коллегия благодарит за участие ведущих ученых из России, Грузии и Армении и надеется на дальнейшее плодотворное сотрудничество.

Բովանդակություն
Содержание
Contents

Յանա Անանյան	Դեկոնստրուկտիվիզմը և մետահորինվածքը ժամանակակից ֆրանսիական գրականության մեջ	8
Наталья Пахсарьян	Современные дискуссии о концепции мировой литературы в художественно-филологическом романе-диалоге Ж. Давида	14
Անի Զանիկյան	Մարգրիտ Դյուրասի «Գրել» ստեղծագործությունը որպես հեղինակի գրական հավատամք	25
Наталья Хачатрян	Лотреамон: «неистовая» модель французской неоромантической поэзии	31
Լուիսե Մուսիսանյան	Անձի հայեցակարգը Մոդիանոյի վեպերում	45
Карине Гуланян	Проблема идентификации и самоидентификации в романе П.Акройда «Мильтон в Америке»	53
Արամ Թոփչյան	Շեքսպիրի «Համլետ»-ի աղբյուրների շուրջ	60
Нанули Какауридзе .	Рецепция Шекспира в литературной теории штюрмеров	77
Գայե Քարապետյան	Тема христианства в «Хрониках Нарнии» Клайва Стейплза Льюиса	90
Թամարա Անտոնյան	Է. Օլբրիի ուշ շրջանի թատերգության անձնահատկությունները	100
Գայանե Եղիազարյան	Կարոտի ընկալումները հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում	107
Տրբուի Արзумանյան.	К вопросу о жанровых различиях литературной сказки, фэнтези и героической фантастики	114

Елена Карабегова	«Магическая рукопись» как гипотекст в художественной системе австрийского романа XX века	124
Лали Антидзе	Некоторые аспекты в размышлениях Э.Фромма	143
Арусяк Григорян	Тема войны в творчестве Вольфганга Борхерта	148
Արմինե Մկրտչյան	Քահանայի կերպարը Թ.Ֆոնտանեի ստեղծագործություններում	158
Տիգրան Սիմյան	Դադաիզմը Գերմանիայում (տրամանարությունը, նշանագիտությունը)	165
Համիկ Եղիազարյան	Գիրքը՝ որպես գործող անձ ՌԻ.Էկոյի «Վարդի անունը» վեպում	179
Սոնյա Ապրեսովա	Էրզիստենցիալիզմի ավանդույթները Ժ.Սարամադոյի «Կուրություն» վեպում	185
Հայկանուշ Շարություն	Ժ. Դե Ս.Սարամադոյի աղմկահարույց վեպը	192
Ирина Атаджанян	Русская повесть XVII века и роман Достоевского «Преступление и наказание»	203
Тамара Теперик	Ода Горация «К Мельпомене»: выбор Б.Пастернака и выбор М. Л. Гаспарова	211
Эльмира Даниелян	Аллюзии войны в прозе В.Брюсова военных лет	219
Анна Чулян	Тема Испании в путевых очерках К.Бальмонта	225
Константин Мартиросян	Художественное осмысление религиозных символов в творчестве А.П.Чехова	234
Ирина Погосян	Стихотворение Ваана Терьяна «Мне наирянка улыбнулась тонкостанная...» в переводе К.Бальмонта	242
Нана Трапидзе	У истоков грузинского постмодернизма (Псевдоагиографическая хроника «Любовь Мучеников» Д. Барбакадзе)	251
Нина Геташвили	Гомер и Овидий в интерпретации западноевропейских художников XX века	256

<i>Вера Кальчурина</i>	Образ Петрушки в контексте эстетики дягилевских сезонов и современного российского искусства	265
<i>Փոհար Վարդույան</i>	Հայոց հին հավատքի անդրադարձները ներկայիս ժողովրդական տոնակարգում	282
<i>Карен Тохатян</i>	Наскальные изображения Великой Армении: астрономические рисунки и строения	290
<i>Мовсес Демирчян</i>	Рациональное и иррациональное в политической культуре современного армянского общества	301
<i>Information about the authors</i> <i>Տեղեկություն հեղինակների մասին</i> <i>Сведения об авторах</i>		308

**ԴԵԿՈՆՍՏՐՈՒՏԻՎԻԶՄԸ ԵՎ ՄԵՏԱՀՈՐԻՆՎԱԾՔԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Դեկոնստրուկտիվիզմը որպես այդպիսին ի հայտ է գալիս ֆրանսիացի պոստստրուկտուրալիստների գործերում 20-րդ դարի երկրորդ կեսին, երբ արևմտյան նոր դարաշրջանի (XVII-XIX դդ.) և մոդեռնիստական մտքին բնորոշ դետերմինիզմի ունիվերսալիստական և ուացիոնալիստական հայեցակարգերն ենթարկվել են բազմակողմանի քննադատությանը: Երթին և կանոնակարգմանը չենթարկվող իրականության գիտակցումը, որի առաջին վկայությունները կարելի է նկատել դեռ 20-րդ դարի սկզբին, բերում է անկայունության և անկանխատեսելիության հասկացությունների առաջադրմանը, որոնք էլ ավելի համոզիչ են դառնում Հեյզենբերգի հայտնի անորոշության սկզբունքի բացահայտման շնորհիվ: Պոստստրուկտուրալիզմից ածանցված և պոստմոդեռնիզմի հիմքը դարձած դետստրուկտիվիզմը կամ դեկոնստրուկցիան որպես տեսություն հրաժարվում է գոյի, կեցության հասկացության հիմնախնդիրների ուսումնասիրությունից, անգամ հերքում է «գոյ» հասկացությունը որպես այդպիսին, անդրադառնալով այդ հերքման պարզաբանմամբ և տեքստի մեկ այլ տեքստի միջոցով անվերջ մեկնաբանությանը:

Այսպես՝ ֆրանսիացի փիլիսոփա Ժակ Դերիդան, հանդիսանալով դեկոնստրուկտիվիզմի հեղինակն ու հիմնադիրը, փիլիսոփայությանը վերաբերվում է որպես տեքստային քննադատության ձև: Դեկոնստրուկցիայի էությունը, նրա համոզմամբ, կայանում է նրանում, որ տեքստի ցանկացած ընկալումն ու մեկնաբանությունն ապարդյուն են, եթե ընթերցողը ակտիվորեն չի մասնակցում վերջնական տեքստի արարմանը: Այսպես արարումը տարվում է ընթերցող-հետազոտողի և տեքստի միջև սերտ երկխոսության մեջ: Ընթերցողը/հետազոտողն ու տեքստը ի հայտ են գալիս որպես մեկ ամբողջություն՝ յուրատիպ ինտերտեքստ, որը ինքնուրույնաբար հանգեցնում է նոր երևակայական ուղիների:

Պոստմոդեռնիզմի և դեկոնստրուկտիվիզմի ավելի ուշ շրջանի մեկ այլ վառ ֆրանսիացի ներկայացուցիչ Ժան Բոդրիյարը, ազդարարելով արտադրության և ապրանքների սպառման շուրջ կենտրոնացած աշխարհի վերջը, պնդում է, որ պոստմոդեռն վիճակում և ՋԼՄ-ների ազդեցության տակ աշխարհը հանձնվել է «խաբուսիկ երևույթների» (*simulacres*) իշխանությանը, որոնց միջոցով և արդյունքում պատկերացումները փոխարինելու են գալիս իրականությանը¹:

Դեկոնստրուկտիվիզմի ազդեցության ներքո պոստմոդեռնիստական գրողները, իրենց հերթին, խուսափում են անգամ տեքստի միանշանակ

¹ Baudillard J. *Simulacres et simulation*. Paris: 1981

իմաստ ունենալու հնարավորությունն ընդունելուց: Գրողների ուշադրության կենտրոնում է հայտնվում բուն տեքստային խաղը, հորինվածքի/արարման բուն գործընթացը և մեխանիզմների բացահայտումը, ընթերցողի կողմից տեքստի ընկալման հնարավոր տարբերակները: Այսպես՝ գրական ստեղծագործությունը պոստմոդեռնիստական երանգ է ստանում, երբ վերացարկվելով գոյաբանական որևէ մտադրությունից (գրվածքի «իմաստից»)՝ հեղինակը ստեղծագործում, արարում է խաղային, լեզվախաղային կամ հեզնական հարթություններում:

Որպես արդյունք՝ պոստմոդեռնիզմը և, մասնավորապես, պոստմոդեռնիստական գրականությունը ստեղծում և ընթերցողին են ներկայացնում մասնատված, մոդուլային, կոդավորված և մի քանի մեկնաբանություն ենթադրող իրականություն, իսկ ավելի ճիշտ՝ իրականության հորինվածք, որում ժամանակի միակ միավորը տվյալ ներկա պահն է: Այս դեպքում ապակետրոնացված սյուժեն ի հայտ է բերում իր իսկ տարբերակների մի շարք, որում առանցքային ինքնությունը իր տեղն է զիճում ռիզոմային ինքնությանը, մետահորինվածքին, հիբրիդացմանը:

Փիլիսոփայական դեկոնստրուկցիայի տեսությանը համահունչ՝ ժամանակակից գրականության մեջ առավել հանգամանորեն մշակվեց մետատեքստուալություն կոչվող գրական տեխնիկան: Գրական մասնատման նման՝ մետատեքստուալությունը, լինելով հին հնարք և սկիզբ առնելով դեռ Դիդրոյից² և «Հազար ու մի գիշեր»³ երկից, ներկայումս ձեռք է բերում այնպիսի մեծ մասսայականություն, որ հաճախ գրականագետներն⁴ այն համարում են պոստմոդեռնիզմին առավել բնորոշ առանձնահատկություններից մեկը:

Մետատեքստուալության առանցքն է հանդիսանում այն գրական հնարքը, որի օգտագործման դեպքում հեղինակը մեկ ստեղծագործության շրջանակներում հղում է կատարում դեպի ա) ինքն իրեն, այլ կերպ ասած դիմում է «ինքնահղմանը», բ) ընթերցողին՝ փորձելով վերջինին համամասնակից դարձնել հորինվածքին, գ) մեկ այլ տեքստին կամ սյուժեին:

Մետահորինվածքի տեսակներն են.

վեպ՝ վեպ ընթերցող մարդու մասին,

վեպ, որի հիմնական սյուժեն համանուն վեպն է,

վեպ կամ պատմվածք, որը հղում է կատարում նույն գրքի տարբեր տարրերին;

ոչ գծային վեպ, որը կարող է ընթերցվել տարբեր եղանակներով,

պատմություն, որը ընդառաջելով ընթերցողի ակնկալիքները

դարձնում է նրան ստեղծագործության հերոս;

տեքստ տեքստում:

² Jacques le fataliste et son maître, Denis Didrot, 1778

³ «Հազար ու մի գիշեր» ժողովածուն կազմված է բազմաթիվ «հեքիաթ հեքիաթի մեջ» պատմվածքներից, ինչպես նաև արտացոլված և միմյանց կապված կերպարներից

⁴ Օրինակ Ժանետ Պատերսոն, Քվեբեկ

«Տեքստ տեքստում» տեխնիկան վկայակոչելիս, պետք է հատուկ նշել մտահորինվածքի մասնավոր «միզանաբիմ» (*Ֆր. mise-en-abyme*) հնարքը: Այդ ռեկուրսիվ (ինքնարտացոլող) գեղարվեստական տեխնիկան անվանում են նաև «երազ երազի մեջ», «պատմվածք պատվածքի մեջ», բեմականացում բեմականացման մեջ», «կինոնկար կինոնկարի մեջ» կամ «նկար նկարի մեջ»:

1950-ական թվականներին կազմավորված «Նոր վեպ/ Nouveau Roman»⁵ գրական շարժմանը պատկանող ֆրանսիացի հեղինակների վեպերին բնորոշ էր ժանրային և ոճային նորարարությունը, որը հաճախ ներառում էր մետահորինվածքի, մետատեքստուալության բազմաթիվ տարրեր: «Նոր վեպ»-ում լայն տարածում ստացավ միզանաբիմ հնարքը: Այսպես՝ շարժման հայտնի ներկայացուցիչ Ռոբ Գրիյեն իր «Լաբիրինթոսի» պատումում, դիմելով ինքնարտացոլման և միզանաբիմ հնարքին, կերտում է որոշակի աննշան փոփոխություններով անվերջ կրկնվող ստատիկ դրվագ: Ընթերցման ընթացքում պարզ է դառնում, որ հենց այդ փոփոխություններն են դառնում «գործողության» զարգացման շարժիչ ուժը:

Մետահորինվածքին հաճախ են դիմում նաև ֆրանսիական ՈւԼԻՊոն⁶ փորձարարական գրականության խմբակի/արհեստանոցի անդամները⁷: Այսպես՝ ֆրանսիացի գրող Ժակ Ռուբոյի մետատեքստուալ գլուխգործոց՝ «Գեղեցկուհի Գորտենզիա» (*La Belle Hortense*) վեպի բուն պատմվածքի չափաբաժինը աննշան տեղ է զբաղեցնում մեկնաբանությունների ընդհանուր ծավալի համեմատ:

Մեկ այլ հեղինակ և մետահորինվածքի վարպետ՝ Իտալո Կալվինոն, թեպետ ազգությամբ իտալացի է, բայց նույնպես հանդիսանում է ՈւԼԻՊո խմբակի ներկայացուցիչ: Նրա «Եթե մեկ անգամ ձմեռային երեկոյան ճանապարհորդը... » գլուխգործոցը լիիրավ կարելի է դասել մետատեքստուալության և տեքստային դետրուկցիայի խորհրդանշական գործերի շարքում:

«Տեքստ տեքստի» մեջ և «վեպ՝ վեպ գրող մարդու մասին» մետահորինվածքը հանդիպում է ՈւԼԻՊո խմբակի մեկ այլ անդամ՝ Ժորժ Պերեկի «*W կամ մանկության հուշեր*» երկում, որում հեղինակը զուգահեռաբար շարադրում է իր մանկության կենսագրությունը և մանուկ հասակում գրած հակաուտոպիական պատմությունը՝ շարունակ մեջ բերելով կյանքի տարբեր շրջաններում գրած տեքստերը, ինչպես նաև հղում կատարելով հեղինակին և, վեպի կերպարների միջոցով, իր հարազատներին: Ուշագրավ է նաև Ժորժ Պերեկի «*Կյանք. Օգտագործման*

⁵ Ալեն Ռոբ Գրիյե, Նատալի Սարոտ, Միշել Բյուտոր, Մարգրիտ Դյուրաս, Ժան Ռիկարդու, Կլոդ Սիմոն

⁶ OULiPo/ Ouvroir de Littérature Potentielle - «Փորձարարական գրականության արհեստանոց»-ը 1960 թ. մի խումբ գրողների և մաթեմատիկոսների կողմից հիմնած գրական խմբակ

⁷ Ըստ Ժաք Ռուբոյի Ուլիպոյի անդամ գրողը նման է «մի առնետի, որն ինքն իր համար կառուցում է լաբիրինթոս, որից ապա փորձում է գտնել ելքը»:

եղանակ» վեպը որպես ոչ գծային գիպերտեքստային՝ մի քանի տասնյակ վեպերից կազմված գործ, որը կարելի է ընթերցել ցանկացած վեպից սկսած՝ չհետևելով գրվածքի գծայնությանը: Վեպն ունի «շրջանակող» ֆաբուլա և բազում ինքնա- և մետահղումներ, հանդիպում է միզանաբիմ հնարով գոված դրվագներ: Օրինակ, գլուխներից մեկում պատմվում է աստիճանավանդակին կանգնած ընթերցող տղայի մասին, ապա, կինոկամերայի էֆֆեկտն օգտագործելով, հեղինակը անդրադառնում է բացված գրքին և պատմում ընթերցվող գրքի պատմությունը:

Առհասարակ, միզանաբիմ («պատմություն պատմության մեջ», «նկար նկարի մեջ») երևույթի էությունը վառ կերպով բացահայտված է նույն գրողի «Սիրողի աշխատասենյակ» («Կունստկամերա»)՝ փոքրածավալ վեպում, որը կառուցված է վերնագրին շարունակական հղման մետատեքստի վրա: Վեպի կենտրոնում գերմանացի գործարար, գեղանկարների կոլեկցիոներ Հերման Ռաֆկեի հավաքածուի ցուցահանդեսն է Պենսիլվանիայի Պիտսբուրգ քաղաքում: Այդ ցուցահանդեսի «սենսացիան» Հայնրիխ Կուրցի կողմից ստեղծած «Սիրողի աշխատասենյակը» կտավն է, որում պատկերված է ինքը՝ կոլեկցիոներ Ռաֆկեն, նստած մի սենյակում, որի պատերին փակցված են իր հավաքածուի կտավները: Պերեկը մանրամասնորեն նկարագրում է կտավի մեջ պատկերած կտավները՝ շարունակաբար ընդգծելով, որ դրանք կարծես թե բոլորն էլ իրական հավաքածուի կտավները լինեն: Ապա նկարագրվում է նկարչի կողմից օգտագործած միզանաբիմ հնարքը, որը ի դեպ ընկած է նաև գրքի հիմքում:

«Անշուշտ այցելուներից շատերը կփորձեն համեմատել բնօրինակները Հայնրիխ Կուրցի կողմից ստեղծած նրանց մանրակրկիտ փոքրացրած պատճենների հետ: Եվ այստեղ է, որ նրանց սպասում է հրաշալի անակնկալ, քանի որ նկարիչը իր կտավը զետեղել է կտավի մեջ, և կոլեկցիոները, նստած իր աշխատասենյակում, դիմացի պատին, հայացքի ուղղությամբ տեսնում է կտավ, որը պատկերում է իրեն, իր կտավների հավաքածուին նայելիս; ապա կրկին անգամ վերարտադրած են բոլոր կտավները, և այդպես շարունակ՝ երկրորդ, երրորդ անդրադարձում՝ մինչ կտավի վրա կերևան վրձնի լույս աննշան հարվածներ: «Սիրողի աշխատասենյակ» կտավը իր տեսակի մեջ յուրաքանչյուր թանգարանի լույս զվարճալի պատկերումը չէ. իրար հաջորդող արտացոլումների խաղի և աստիճանաբար հանգչող կրկնությունների միջոցով ստեղծած ասես առեղծվածային հմայքի շնորհիվ, այս գործը վերածվում է հրաշապարումների մի աշխարհի, որում իր գայտակղիչ գրավչանքի զորությունը ուժգնանում է մինչև անվերջություն, և որում պատկերման նյութի ծայրահեղությանը հասցրած ճշգրտությունը, որը սակայն բոլորովին ինքնանպատակ չէ, անսպասելիորեն հանգում է Հավերժական վերադարձի գլխապտույտ ոգուն»⁹:

⁸ Perce G.. Un cabinet d'amateur. Editions Balland. Points. 1979

⁹ Perce G. Un cabinet d'amateur. Editions Balland. Points. 1979.p.19.

Պերեկն իր վեպը կառուցում է նույն այդ սկզբունքի վրա, զուր չէ, որ կտավն ու վեպը ունեն նույն վերնագիրը: Վեպում հավաքածուի ցուցահանդեսն ու նրա հետագա աճուրդը ստանում են շրջանակի, շրջանակող պատմության, «կտավի» դեր, որը առիթ է հանդիսանում է կտավների և կտավների մեջ կտավների մասին անվերջ տեղեկություններ և նկարագրություններ շարադրելու համար: Վեպի կտավները մեկընդմեջ փոխադարձաբար արտացոլվում են մետատեքստային հղումների շնորհիվ: Սակայն վեպի ավարտին ընթերցողին սպասում է հիասթափություն, քանի որ բացահայտվում է կտավների գերակշռող մասի կեղծ լինելու հանգամանքը: Վեպի վերջին պարբերությունը փաստում է, որ փորձաքննությունն ապացուցեց կտավների հիմնական մասի կեղծ լինելը, ինչպես կեղծ են նաև տվյալ հորինված պատմվածքի մանրամասների գերակշռող մասը և որ վեպը գրվել է սոսկ երևութական իրականության հանդեպ ունեցած սիրուց դրդված¹⁰:

Այսպիսով ժորժ Պերեկի կողմից օգտագործած վերոնշյալ «հորինվածք հորինվածքի մասին» գրական հնարքը, մեր կարծիքով, առավել ակնհայտորեն բացահայտում է մետատեքստուալությանը բնորոշ ընդհանուր բնութագրական սկզբունքը:

Яна Ананян

ДЕКОНСТРУКТИВИЗМ И МЕТАНАРРАЦИЯ В СОВРЕМЕННОЙ ФРАНЦУЗСКОЙ ЛИТЕРАТУРЕ

В статье рассматриваются пути развития философской мысли II половины XX века в работах постструктуралистов, прослеживается проявление разработанных ими новых понятий и категорий в разных областях жизнедеятельности, в том числе – в литературе. Особое внимание уделяется понятиям «деконструктивизм» и «декострукция текста», которые получили свое отражение в литературе в виде открытой интерпретации текста, его сложного структурирования, вовлеченности читателя в процесс самого построения текста, метатекстуальности и метанаррации. Основные положения статьи доказываются на литературном материале современного французского романного дискурса, в частности – произведения Жоржа Перека «Кабинет любителя» («Кунсткамера»).

Yana Ananyan

DECONSTRUCTIVISM AND METANARRATIVE IN CONTEMPORARY FRENCH LITERATURE

The article deals with the development of philosophical thought of the second half of XX century in the works of poststructuralist, observes new concepts and categories in different areas of life, included in the literature. Special attention is paid to the concepts of "deconstructivism" and "text deconstruction", which are reflected in the literature as the form of an open interpretation of the text, its complex structure,

¹⁰ Item. p. 85.

involvement in the process of the text reader, metafiction and metanarrative. The key states of the given paper are proven through the literary material of the modern French novel discourse, in particular – the novel of Georges Perec "A Gallery Portrait".

СОВРЕМЕННЫЕ ДИСКУССИИ О КОНЦЕПЦИИ МИРОВОЙ ЛИТЕРАТУРЫ В ХУДОЖЕСТВЕННО-ФИЛОЛОГИЧЕСКОМ РОМАНЕ- ДИАЛОГЕ Ж. ДАВИДА

Традиционно филологи сетуют – или просто констатируют, что в отличие от терминов точных наук, литературоведческие термины сложны, многозначны, неустойчивы, порой разноречивы и требуют постоянного переопределения. Однако в теории и истории литературы есть определенное количество понятий, которые используются если не как аксиоматические, то все же как вполне определенные в своих параметрах и смыслах. На мой взгляд, одним из таких понятий является *Weltliteratur* – мировая литература. По крайней мере, в нашем литературоведении, насколько я могла заметить, последние – они же, собственно, практически, первые фундаментальные исследования по проблеме всемирной литературы, относятся к 1980-м годам: это монография В.А. Аветисяна «Гете и проблемы мировой литературы» (1980), на основе которой автор защитил диссертацию в 1987 г., и книга С.В. Тураева «Гете и формирование концепции мировой литературы» (1989). Немногочисленные отдельные статьи по тем или иным аспектам названного понятия, появившиеся позднее указанных книг, скорее конкретизируют положения названных работ, чем вносят в их концепции что-то принципиально новое, поэтому позволю себе их не перечислять.

Совсем иначе обстоит дело в западном литературоведении. Здесь вокруг понятия – концепции – состава «мировой литературы» самые горячие споры развернулись как раз на рубеже XX – XXI столетий. Как утверждает Дидье Кост, автор рецензии на монографию Ж. Давида, помещенной на сайте «Фабула»¹¹, происходящий процесс глобализации культуры, литературы, истории заставляет задуматься, можно ли применять и сегодня методы, работавшие в филологии последние 50 лет, какие новые задачи стоят на повестке дня исследователей – и какие традиционные понятия вновь актуальны? Ученый отмечает сильнейшим образом возросший интерес западных литературоведов к понятию «мировая литература», к его политическому, этическому и эстетическому содержанию.

При этом французские, точнее, франкоязычные филологи упрекают себя за своего рода отставание в деле проблематизации

¹¹ Coste D. En attendant Charlotte // Acta Fabula. 14 janvier 2013. – URL : www.fabula.org/revue/document7416.php

гётевского термина, поскольку книга профессора Женевского университета Жерома Давида «Призраки Гёте: метаморфозы “мировой литературы”», вышедшая в 2011 году¹² – лишь третий труд на эту тему: первый – известная (и переведенная на русский язык) работа Паскаль Казанова «Мировая республика литературы» (1999)¹³, а второй – коллективная монография К. Прадо и Т. Самуайо «Где находится мировая литература?» (2005)¹⁴.

В самом деле, в англоязычном литературоведении исследований на эту тему не просто больше: они фиксируют постоянно ведущиеся дискуссии по поводу названного понятия, его содержания, границ, эволюции, соотношения с другими понятиями и т.п.

Но книга Ж. Давида представляет интерес не просто потому, что подключает франкоязычных литературоведов к актуализации дискуссии вокруг гетевской концепции, она важна и тем, как это осуществляется ученым. Книга состоит из следующих разделов: Пролог – В аэропорту. Часть первая. Космополитизм. Веймар. 1827. Брюссель, 1847. Часть вторая Педагогические идеи. Чикаго, 1911. Петроград, 1918. Часть третья. Ученый спор. Нью-Хейвен через Стамбул, 1952. Нью-Йорк (и Париж). 1999. Эпилог. Франкфурт, 2011. Как пояснил сам Ж. Давид в интервью Лионелю Рюффелю¹⁵, ему предложили написать для издательства «Прэри ординэр» написать исследование о «мировой литературе». Предложение исходило от издателя Никола Вьейказа, который видел актуальность проблемы, бурно обсуждавшейся в англоязычной науке, и предлагал синтезировать имеющиеся точки зрения. Ж. Давид столкнулся с необходимостью найти, как он говорит, верный тон для такого труда: нужен ли такой синтез, кому он будет адресован? Все ли потенциальные читатели осознают важность понятия «всемирная литература»? В результате он решает построить книгу как своего рода филологический диалог (под впечатлением чтения Дидро), пригласить к этому диалогу Франко Моретти – современного критика-марксиста (разумеется, такое приглашение – воображаемое), не просто излагать различные концепции гетевского понятия, пытаться

¹² David J. Spectres de Goethe. Les métamorphoses de la « littérature mondiale ». P., 2011.

Далее цитаты по этому изданию даны с указанием страниц в скобках.

¹³ Casanova P. La République mondiale des Lettres. P., 1999

¹⁴ Où est la littérature mondiale? / Chr. Pradeau et T. Samoyault éd. Saint-Denis, 2005

¹⁵ Prendre soin de la « littérature mondiale », par Lionel Ruffel et Jérôme David / Atelier de théorie littéraire. – URL:

www.fabula.org/atelier.php?Prendre_soin_de_la_litterature_mondiale

искусственно синтезировать их, а выявлять проблемные точки этих концепций, размышлять о них в процессе воображаемой дискуссии.

Составленная автором аннотация также представляет собой воображаемый диалог:

Литературный агент: В двух словах, о чем история?

Он (т.е. один из собеседников в книге Ж.Д.) Два персонажа спорят об исторических формах употребления понятия «мировая литература».

Я (т.е. сам Ж.Д.): От Гёте до П. Казанова.

Литературный агент: Назовите мне несколько ключевых слов.

Он: О, легко! Речь идет о современных формах гуманизма, об амбициях и страхах, связанных с идущей в течение двух веков глобализацией, об амбивалентности критики самой категории универсальности.

Литературный агент: А какие еще фигурируют имена?

Я: Карл Маркс, Эрих Ауэрбах, Эдвард Саид, Дэвид Дэмош, Франко Моретти. Не считая тех, которые вне контекста ничего вам не скажут (См. текст на обороте обложки).

Монография открывается прологом «В аэропорту», в котором некто (Он) вступает в диалог с автором (Я) по поводу понимания им гётевского термина «Weltliteratur». Три части монографии («Космополитизм», «Педагогические идеи», «Ученый спор») содержат анализ основных вех развития концепта «мировая литература». В первой части в разделе «Веймар, 1827» собеседники анализируют содержание этого понятия у Гёте. По мнению Ж. Давида («Я»), термин «Weltliteratur» тесно связан с поэтикой «веймарского классицизма», не случайно писатель использует слово «allgemein» (всеобщий, универсальный), размышляя о культурной интеграции Франции, Англии и Италии и полагая, что Германии необходимо включиться в этот процесс. «Там, где Гёте пишет «allgemeine Literatur», французские переводчики предлагают нам читать “littérature universelle ». «Он» выступает за иной перевод – «littérature mondiale» (мировая литература), не видя различия между этими понятиями.

Ж. Давид указывает, что термин «Weltliteratur» не фигурирует в текстах Гёте до 1820-х годов, он лишь постепенно становится необходим Гёте в его рефлексии о литературе. Ученый полагает, что смысловым горизонтом понятия «мировая литература» у Гёте явился гердеровский термин «человечество» (Humanität). Данное понятие охватывает разнообразие литератур, однако наибольшее значение в этом разнообразии имеет античное искусство. Неверно думать, что Гёте до конца понимал и принимал, например, китайскую литературу, он

относился к ней иронически отстраненно, был «пленником гуманистической иллюзии» (с. 49). Рассуждения Гёте о «мировой литературе» близки позднему Гердеру, он считал, что различные «просвещенные» круги людей во всем мире, в конце концов, объединятся и будут развивать совместную, общечеловеческую культуру, что ни одна культура не развивается в изоляции.

Собеседники упоминают о концепции Ф. Моретти в связи с уточнением форм взаимодействия различных литератур друг с другом. Итальянский филолог использует для характеристики подобного взаимодействия образ дерева, подчеркивая общий индоевропейский корень у всех культур. Одновременно он прибегает и к метафоре волны, анализируя механизм распространения литературных традиций одной европейской страны на другие.

В разделе «Брюссель, 1847» Ж. Давид обращается к тому толкованию понятия «мировой литературы», которое дает ранний К. Маркс. В «Манифесте коммунистической партии» и в «Немецкой идеологии» Маркс и Энгельс, рассматривая коммунизм не как реальное положение вещей, а как идеал, по отношению к которому реальность находится в состоянии конфронтации, имеют в виду под «человечеством» буржуазное общество. Маркс в «Манифесте» связывает понятие «мировой литературы» и «мирового рынка» и потому трактует это понятие как «совокупность национальных и региональных литератур» (с. 76). При этом ни Маркс, ни Энгельс в своих сочинениях не говорили о качестве литературных произведений, «мировая литература» была для них не нормативной эстетической, а социальной категорией. Поэтому, в отличие от Гёте, различавшего «плохую» и «хорошую» мировую литературу, Маркс обобщенно рассматривает «Weltliteratur» как всестороннее и универсальное явление, выполняющее ту же роль, что и средства массовой информации, и носящее характер «буржуазного космополитизма».

Вторую часть монографии открывает раздел «Чикаго, 1911». В нем собеседники уточняют, как трактовался термин «мировая литература» в работах английского филолога рубежа XIX – XX веков Ричарда Моултона¹⁶. Участвуя в программе «расширения университета», Моултон работал в Англии и в США и обращался в своих работах к академической и студенческой среде. Для ученого «мировая литература» являлась репрезентацией высоких достижений человеческой цивилизации, воплощенных в творениях Гомера, Еврипида, Вергилия, Шекспира,

¹⁶ Moulton R.G. Adress on the University Extention Movement. – Philadelphie, 1890; Moulton R.G. World Literature and its Place in General Culture. – New York, 1911.

Милтона, Данте и Гёте. С современной точки зрения предложенный Моултоном канон слишком узок. Но этот канон «великих книг» предназначался для курса лекций, служащих введением в историю английской литературы, помогал вписать английскую литературу в контекст других литератур, служил развитию эстетического вкуса. Моултон стремился выработать критерии отбора лучших сочинений «мировой (world) литературы» и дифференцировал это понятие от термина «universal (всеобщая) literature». По Моултону, «всеобщая литература» – это простая сумма всех литературных сочинений, тогда как «мировая литература» для каждой страны – своя, поскольку предполагает отбор лучших сочинений с точки зрения англичанина, японца, американца, француза и т.п. Таким образом, Моултон вводит в понятие «мировой литературы» эстетический и национально-исторический критерии.

В разделе «Петроград, 1918» исследуются идеи российских писателей и ученых послереволюционной эпохи. Одной из важных вех практического воплощения этих идей был проект Горького по изданию серии книг «Библиотека всемирной литературы»(1918), публикация Литературной энциклопедии (1929-1939), учреждение Института мировой литературы в 1936 г. Но еще до этих событий об идее «мировой литературы» говорил Замятин в своей автобиографии, рисуя обстановку в Петрограде 1917-1918 годов. Именно тогда родился амбициозный издательский проект публикации шедевров мировой литературы, доказательством чему служат и записи в дневнике К. Чуковского в ноябре 1918. Поэзию в задуманном М. Горьким проекте курировал Николай Гумилев, расстрелянный в 1921 г. В списке примерно из 120 имен писателей наряду с русскими фигурировали английские, немецкие, итальянские и французские авторы. При этом «библиотека всемирной литературы» должна была отличаться от «народной библиотеки», рассчитанной на массового читателя, установкой на публикацию значительных в художественном отношении сочинений.

Под «мировой литературой» понималась такая, которая была создана в той или иной стране, но по своему эстетическому уровню оказалась востребована во всем мире. В 1930-е гг. выражение «мировая литература» было заменено на сочетание «всемирная литература», по-видимому, чтобы избежать ассоциации с «мировой революцией». На съезде писателей в 1934 году Карл Радек, выступив с речью «Современная мировая литература и долг пролетарского искусства», говорил о «капиталистической, буржуазной мировой литературе» как об утратившей монополию. Как и Маркс, Радек связывал «мировую

литературу» с «мировой буржуазией» и полагал, что «буржуазная мировая литература» утратила свое значение, не отвечает потребностям пролетариата. Советская литература должна была ответить на эти потребности, обращаясь к методу социалистического реализма. Поэтому Радек отрицательно относится к роману Джойса «Улисс», в которой тщательно описаны детали повседневности, но нет героического пафоса и понимания величия революционных преобразований. Таким образом, в 1930-е гг. «мировая литература» оказалась подчиненной идее «мировой революции» и должна была служить этой идее. Кроме того, она, по существу, потеряла смысл мирового явления, распадаясь на «буржуазную» и «революционную».

В третьей части монографии («Ученый спор») дискуссия ведется вокруг концепции «мировой литературы» немецкого филолога Э. Ауэрбаха. Работая в 1930-е гг. в Стамбульском университете, Ауэрбах был сосредоточен на осмыслении европейского канона «мировой литературы», сохраняя дистанцию по отношению к интеллектуальной жизни турецкой столицы. В переписке с В. Беньямином он высказывал беспокойство по поводу разделенности мира на отдельные цивилизации и одновременно – огорчался распространением того варианта модернизации, который «интернационализирует тривиальное», создает своего рода «эсперанто культуры» (с. 151). По мнению «Я», Ауэрбах испытывает ностальгию по гётевскому смыслу *Weltliteratur* и превращает «гуманиста гётевского типа» в идеал, к которому должно стремиться. Переехав в США, Ауэрбах все больше размышляет о «мировой филологии», о том, как воспитать специалиста-гуманитария в духе «исторического гуманизма». Когда в 1969 г. появился перевод на английский язык статьи Ауэрбаха «Филология мировой литературы»¹⁷, сделанный наиболее близким учеником ученого – Э. Саидом, в тексте был сохранен термин «*Weltliteratur*», поскольку в выражении «world literature» затушевывался гётевский смысл немецкого термина. Для Гёте, полагает Э. Саид вслед за Э. Ауэрбахом, *Weltliteratur* – это «всеобщая, универсальная литература», выражающая единство Человечества, пронизывающая все национальные литературы, но не разрушающая их индивидуальности. В более позднем переводе «Филология и *Weltliteratur*» превратилась в «Филологию мировой (world) литературы». «Он» полагает, что подобная замена правомерна. Однако «Я» возражает, поскольку убежден, что *Weltliteratur* в своем исходном гётевском значении лишено искажающих идеологических коннотаций. Филология

¹⁷ Auerbach E. *Philologie der Weltliteratur // Weltliteratur. Festgabe für Fritz Strich zum 70. Geburtstag / W. Muschg, E. Staiger dir.* – Berne: Francke Verlag, 1952. – S. 39 – 50.

мировой литературы по Ауэрбаху ставит вопрос о мировых культурных обменах, поэтому Ж. Давид сожалеет, что этого ученого считают в первую очередь немецким филологом второй трети XX в., тогда как он является для американской литературной науки основоположником компаративистики.

В следующем разделе третьей части книги («Нью-Йорк и Париж, 1999») констатируется всплеск интереса к трактовке «мировой литературы» в 1990 – 2000-е гг., вызвавший к жизни целый ряд исследований этого понятия. Особый интерес вызывает концепция Дэвида Дэмроша, который в полемике с идеями Ф. Моретти отстаивает правомерность построения образа «своей (my) мировой литературы»¹⁸. Тем самым Дэмрош подчеркивает, что концепция «мировой литературы» в разные времена и в разных странах наполняется различным содержанием и представляет собой воображаемое, «виртуальное» единство. Ж. Давид полагает, что столь радикальная индивидуализация понятия неверна. Дэмрош предлагает литературе, прежде чем стать мировой, быть региональной. Он исключает из «мировой литературы» бестселлеры, относит их к иному разряду – «глобальной литературы», которая ему неинтересна. «Рыночному реализму» бестселлеров Дэмрош противопоставляет достижения «локальной литературы». По его мнению, большие писатели, даже оторванные от своей страны (например, С. Рушди или О. Памук) и признанные в международном масштабе, связаны со своей культурной родиной (homeland). Поэтому «мировая литература» в его трактовке – это воображаемое место встречи локальной литературы со своей культурной «другостью» (altérité). Вот почему выпущенная Дэмрошем «Антология мировой литературы»¹⁹ представляет собой пестрое собрание отрывков произведений различных локальных литератур. Давид же считает, что в современных условиях понятие «родины» (homeland) не имеет универсального смысла, а космополитизм многих писателей сегодняшнего дня не отменяет культурных различий между ними.

К собеседникам присоединяется Франко Моретти, концепция которого наиболее последовательно выражена в его работе «Гипотезы о мировой литературе»²⁰. Ученый размышляет в ней о связи рынка и литературных форм, полагает, что необходимо заимствовать у

¹⁸ Damrosch D. What is World Literature? – Princeton: Princeton Univ.Press, 2003.

¹⁹ The Longman Anthology of World Literature / D.Damrosch, D.L. Pike dir. – New York: Pearson Longman, 2004

²⁰ Moretti F. Conjectures on World Literature // New Left Review. – 2000. – N 1. – P. 55 – 67.

естественных наук дух эксперимента, жестко формулировать проблемы и изыскивать способы их решения. В работе «Атлас европейского романа»²¹ Моретти выделяет «три литературные Европы»: центральная включает Францию и Англию, где царит разнообразие романских форм, происходит их создание и стабилизация; средняя (Италия, Испания и Германия) перенимает, присваивает и трансформирует эти формы, иногда радикально; периферийная (Польша, Румыния) импортирует в свою литературу романские формы центра, но, не имея культурных ресурсов для их эстетической трансформации, ограничивается подражанием. Моретти, по его собственным словам, обратился к концепции «мировой литературы» у Гёте, чтобы продемонстрировать разрыв между намерениями немецкого писателя и реализацией его идей современными учеными. Ведь сравнительное литературоведение, поспешив использовать понятие «Weltliteratur», едва освоило европейские литературные связи в течение двух столетий. Причина, возможно, кроется в том, что десятки тысяч текстов находятся вне поля зрения компаративистов. Для Моретти «мировая литература» - не объект, а «мысленный опыт», предполагающий не сосредоточение на отдельных элементах литературного текста (тропы, тематика и т.п.), а «дистанцированное чтение», предполагающее более широкий обзор (с.230). Причем, если понятие «литературы» более или менее устоялось в филологии, то понятие «мира» очень расплывчато. Между тем содержание «мира» меняется: в XVI столетии это Европа и Америка, но не Азия и Африка, в XIX в. «мир» как культурный концепт распадается на Западную Европу и Восточную Европу с Азией, и лишь в конце этого периода наполняется «планетарным содержанием». Но и тогда обмен между литературами происходит на неравных основаниях, о чем, по мнению Моретти, свидетельствует книга П. Казанова «Мировая республика литературы»²².

В «Эпилоге», где собеседники оказываются на всемирной книжной ярмарке 2010 г. во Франкфурте, они приходят к выводу о множественности современных трактовок концепции Гёте: «Есть классический Гёте, рассматривающий мировую литературу как ряд бессмертных произведений, социологический Гёте, анализирующий неравный культурный обмен между национальными литературами, Гёте-стратег, сосредоточенный на международных аспектах подобного культурного обмена, Гёте-компаративист и т.д.» (С. 264).

²¹ Moretti F. Atlas du roman européen. – P. : Seuil, 2000.

²² Casanova P. La république mondiale des lettres. - P.: Seuil, 1999.

Очевидно, что спектр имен ученых, обращавшихся к анализу «мировой литературы» в течение нескольких веков, действительно широк и разнообразен, и при этом нам действительно было бы привычнее увидеть последовательный обзор их работ как фундамент для последующего синтеза. Так, собственно, была построена книга Д. Дэроша «Что такое мировая литература?», в которой при охвате литературы от эпоса «Гильгамеш» до последних сочинений постмодернистов обобщения все же оказались, по мнению критиков, чересчур абстрактны, расплывчаты.

Почему же необычная форма филологического исследования, избранная Ж. Давидом, оказалась более продуктивной?

Как кажется, дело в том, что ее автор осознал чрезвычайно важную вещь: сегодня необходимо переосмыслить категорию «мировой литературы», понять факторы, которые делают ее вновь актуальной, а не механически приложить гётевское понятие к новым фактам культуры.

С этой точки зрения очень выразительно начало диалога в аэропорту между «Я» (Ж. Давидом) и воображаемым собеседником («Он»): когда собеседник обращается к автору с вопросом: «Вы ведь работаете над проблемой мировой литературы?», тот отвечает: «Скажем, я пытаюсь придти к какому-то суждению об этом понятии», что весьма удивляет задавшего вопрос: «Но мне кажется, что все уже сказано. Разве Гёте, великий Гёте не изобрел этот термин и одновременно своим гением не все уже исчерпывающе объяснил?» (с. 9).

Давид напоминает о том, как давно было это «исчерпывающее объяснение» и оглядываясь на публику в аэропорту поясняет: люди читают разное – роман американской нобелевской лауреатки и скандинавский детектив, в киоске стоят рядом книги французских, бразильских, шведских писателей – но нет, например, книг нигерийцев или китайцев. И дело даже не в этом – не в конкретных странах, языках, именах писателей. А в том, что, как замечает Автор, в последние 30 лет изменились способы распространения литературных произведений, а для некоторых это распространение очень сильно ускорилось. Литература стала транснациональной, получив импульс от издателей, стала быстрее пересекать государственные и лингвистические границы. Особенно так бывает, когда писатель получает престижную литературную премию – его переводят, пропагандируют, рецензируют и т.п. Бывает, что сочинение появляется на десятках языков почти одновременно – как книги о Гарри Потере (с. 10-11).

Собеседник считает, что это не повод пересмотреть понятие «мировой литературы», поскольку, по его мнению, речь идет о

коммерческой литературе, «промышленной», как ее называл Ш. Сент-Бев. Естественно, что такая литература подчиняется законам глобального рынка, предлагает обычные товары. Однако для Ж. Давида все не так просто. Оглядываясь вокруг, он видит в аэропортовых киосках стоящих рядом С. Рушди и Марка Леви, Дэвида Лоджа и Пабло Коэльо, Умберто Эко, Гюнтера Грасса, Хосе Сарاماго – то есть в том числе, и писателей высокого калибра.

Рассматривая различные формы современного возвращения к Гёте, то есть реактуализации его концепции «мировой литературы», Ж. Давид не случайно уточняет, как трактовал это понятие сам Гёте, подчеркивая, что здесь есть много аспектов: Гёте-классик рассматривает всемирную литературу как совокупность бессмертных произведений, как некий всеобщий канон; Гёте-социолог видит в мировой литературе соотношение различных национальных культур, находящихся на разном уровне у разных народов; Гёте-стратег видит в понятии «мировая литература» источник интернационализации литературы и т.п. Вот почему французский ученый полагает, что изучать пространство или систему мировой литературы возможно именно при осознании тех нюансов, которые были заложены в это понятие немецким гением. С точки зрения Ж. Давида, это понятие сегодня часто используют те, кого беспокоит глобализация. Трактуя процесс глобализации как исключительно коммерциализацию, проникновение в сферу литературы рынка, они ссылаются на Гёте, который этого, по их мнению, боялся. Ж. Давид уточняет, что «мировая литература» как проект предполагала у Гёте некое мировое содружество писателей, противостоящих транснациональной посредственности, но это не означало отказа от внимания к тем процессам формирования подобного мирового содружества, которые происходят «внизу», «на полях» литературного пространства. Немецкий классик не мечтал о всемирности, устанавливаемой сверху. Именно это и делает возможным сегодняшнее обращение к его концепции «мировой литературы».

Natalia Pakhsaryan

THE MODERN DEBATES ON WORLD LITERATURE IN DAVID'S NOVEL-DIALOGUE

"World Literature" concept, which first emerged in the late 18th century, in Goethe's works, has become a subject of various interpretations on different stages of development of science and literature. During the Soviet period the issue has been discussed by V. Avetisyan (1980) and S. Turaev (1987) in their monographs. In Western literary criticism the issue has got special poignancy on the boundary of the 20th and 21st centuries.

The issue is reflected in J. David's novel-dialogue "Goethe's ghosts: the metamorphoses of "world literature" (David J., Spectres de Goethe. Les métamorphoses de la «littérature mondiale»), which is composed of 4 parts, discussing the concept development phases in the works by Goethe, Marx, Gorky, Auerbach, Moretti.

**ՄԱՐԳՐԻՏ ԴՅՈՒՐԱՍԻ «ԳՐԵԼ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՀԵՂԻՆԱԿԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՄՔ**

Մարգրիտ Դյուրասը կյանքի մայրամուտին, փարիզյան ռեստորաններից մեկում զրուցելով Ֆրանսուա Միտերանի հետ, անկեղծանում է. «Ահա թե ինչ է կատարվում Ֆրանսուա, որքան ժամանակ է արդեն ամբողջ աշխարհում ես ավելի հայտնի եմ, քան Դուք: Զարմանալի է, այնպես չէ՞»: Հարցին ժամանակի Ֆրանսիայի նախագահը պատասխանում է. «Ոչ, դա ինձ չի զարմացնում, ես դա գիտեի»:

Դյուրասը գրական աննախադեպ երևույթ է, նա իր ինքնատիպ, հանդուգն գրչով նոր էջ բացեց ֆրանսիական և ոչ միայն ֆրանսիական գրականությունում, կենդանության օրոք վայելեց միլիոնավոր ընթերցասերների հիացմունքը, ինչո՞ւ ոչ՝ մերթընդմերթ արժանացավ գրաքննադատների ընդդիմությանը: Դյուրասը թարմ շունչ հաղորդեց թե՛ ֆրանսիական արձակին, թե՛ կինոմատոգրաֆիային և թե թատրարվեստին: Զարմանալի չէ, որ Ֆրանսիայում նա ավելի հայտնի էր, քան Հանրապետության նախագահը: Մարգրիտ Դյուրասի բեղուն գրիչը գրեթե դադար չի ունեցել, մինչև կյանքի վերջին օրը նա ստեղծագործել է՝ մեկը մյուսի ետևից ասպարեզ հանելով վեպեր, սցենարներ ու թատերերկեր, որոնք հաճախ ինքն էլ նկարահանել ու բեմադրել է:

Իր նորարարությամբ Դյուրասը զարմացրեց, մինչև հիմա էլ շարունակում է զարմացնել գրական աշխարհը: Նրա բազմաբնույթ գրական ժառանգությունն է նաև պատճառը, որ մինչայժմ որոշակիորեն սահմանված չէ հեղինակի ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունը: Հարցը մնում է առկախ՝ գրական ո՞ր ուղղությանը պետք է դասել նրա երկերը: Քննադատների մի մասը նրան համարում է «Նոր վեպի» մյուսը՝ պոստմոդեռնիստ հեղինակ, ոմանք մինչև անգամ վստահեցնում են, որ առավել մոտ է մոդեռնիզմին: Սույն հոդվածով մենք ամենևին միտում չունենք սպառիչ սահմանելու դյուրասյան ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունը, միանշանակ վճռել, թե հեղինակը որ գրական ուղղությանն է պատկանում: Մենք փորձելու ենք սոսկ անդրադառնալ հեղինակի 1993 թվականի հունիս ամսին ավարտած «Գրել» ստեղծագործությանը, ինչն էլ մեր կարծիքով, կլուսաբանի Դյուրաս գրողի ստեղծագործական առանձնահատկությունները:

Համաշխարհային գրականությանը ծանոթ են բազմաթիվ տրակտատներ, նախաբաններ, որոնք երբեմն իրենց նշանակությամբ, գրական արժանիքներով մանիֆեստների դեր են կատարել: Հիշենք Վիկտոր Հյուգոյի «Կրոմվելի նախաբանը»:

Մ.թ.ա. 4-րդ դարից, Արիստոտելի «Պոետիկա» տրակտատին, որը հին հունական գրականության և արվեստի հավաքական փորձի ընդհանրացումն

էր, իմաստավորումն ու տեսությունը, հաջորդեցին նույն բնույթի այլ աշխատություններ, որոնք չմնացին որոշակի դպրոցի, գրական ուղղության շրջանակներում, նույնիսկ այլ երկրներ անցան, ազդարարեցին նոր մտածողության, նոր բնույթի գրականության ստեղծման անհրաժեշտությունը: Ֆրանսիական գրականության մեջ, 17-րդ դարում «Քերթողական արվեստը» տրակտատով Բուալոն սահմանեց կլասիցիստական պոետիկայի հիմնական սկզբունքները, կամ 19-րդ դարում Հյուգոն իր «Կրոնվելի նախաբանով» ազդարարեց կլասիցիստական սկզբունքների կապանքներից ձերբազատվելու անհրաժեշտությունը: Պատահական չէր, որ նախաբանը վերածվեց մանիֆեստի, պարտադրեց թատերգության մոտեցման նորովի չափանիշներ:

Հեղինակների և մանիֆեստների այս ցանկը կարելի է լրացնել, հանգամանորեն նշել, թե որ հեղինակը ինչ նկատառումներից ելնելով է գրել իր տեսական աշխատությունը: Էականը, սակայն, կարծում ենք, դա չէ, այլ այն, որ դարեր շարունակ նախաբան, տրակտատ, մանիֆեստ գրող-հեղինակներին միացրել ու շարունակում է միացնել նոր բնույթի գրականություն ստեղծելու անհրաժեշտությունը, բացատրելը, թե ինչպիսին պետք է լինի այդ նոր գրականությունը, տվյալ ժամանակի ինչ հրատապ խնդիրներ արծարծի, վերջապես ինչ սկզբունքներով պիտի ստեղծագործի գրողը: Ուզում ենք հիշատակել հատկապես Շլեգելի «Ֆրագմենտները», Ստենդալի «Ռասին և Շեքսպիրը», Բալզակի «Մարդկային կատակերգության նախաբանը», Ջոլայի «Փորձարարական վեպը», վերջապես սիմվոլիզմի, էքսպրեսիոնիզմի, ֆուտուրիզմի, մոդեռնիզմի ու պոստմոդեռնիզմի ծնունդն ազդարարող ու համակարգող նախաբան-մանիֆեստները:

Մանիֆեստների այս շարունակական ցանկում ի՞նչ տեղ է զբաղեցնում Մարգրիտ Դյուրասի «Գրելը», ի՞նչ է այն՝ «Երիտասարդ անգլիացի օդաչուի վախճանը», նույն գրքի մյուս երկերի նախաբան, սեփական գրական փորձը հաղորդելու կե՞րպ, հեղինակային մտորո՞ւմ, գրական նոր մեթոդ ստեղծելու մղո՞ւմ, թե՞ պարզապես գրելու արվեստի մասին խոհագրություն:

«Գրելը» նախորդում է նույն ժողովածույում ամփոփված «Երիտասարդ անգլիացի օդաչուի վախճանը», «Ռոմա», «Մաքուր քանակը», «Նկարչության ցուցասրահ» չորս առանձին ստեղծագործություններին, բայց մենք համարձակվում ենք այն չդիտարկել որպես նախաբան: Ավելի հակված ենք ամբողջական ստեղծագործություն համարել, որը կարող էր առանձին հրապարակվել, կցվել դյուրասյան ցանկացած երկի: «Գրելը» վեպ է վեպ գրելու մասին, հեղինակային յուրօրինակ խոստովանություն՝ գրելու ընթացքում համակած խոհերի, ապրումների, ձգտումների մասին: Այս ամենով հանդերձ «Գրելը» չի կարող մանիֆեստ համարվել, քանի որ Դյուրասը ամենևին միտում չի ունեցել նոր դպրոց, հոսանք, ուղղություն ստեղծելու անհրաժեշտության հարց հարուցել: Ճիշտ է, հեղինակը իր գրելու փորձը երբեմն ընդհանրացնում է, տարածում գրչակից հեղինակների վրա,

բայց և իսկույն ուղղում է իրեն, խոստովանում, որ խոսքը իր գրական փորձի մասին է:

Ոճային առումով «Գրելը» դյուրասյան գեղարվեստական երկ է թվում: Այն պարզ է, միևնույն ժամանակ խրթին, հեղինակի նախադասությունները, ինչպես հատուկ է իր ոճին, հակիրճ են, կտրտված: «Գրելը», հեղինակի ցանկացած այլ երկի նման, գրված է մտքային պարբերություններով, առկա է կտրուկ անցում մի մտքից մյուսին, որով և պայմանավորվում է ստեղծագործության ինտերտեքստուալությունը հասկանալու անհրաժեշտությունը:

Այստեղ հարկ ենք համարում կանգ առնել մեր կարծիքով մի շատ կարևոր հանգամանքի վրա: Դյուրասը իր գեղարվեստական երկերում մեկտեղում է հեղինակ ես-ն ու հերոսուհի նա-ն (Ֆր.-elle), ընդ որում դա անում է այնքան համոզիչ, որ երբեմն ընթերցողին թվում է, թե հեղինակը հանձին իր յուրաքանչյուր երկի ես-ի, բազում կյանքեր է ապրել: Դյուրասը հավատացնում և ընթերցողը հավատում է ես-ի առկայությանը, իրական գոյությանը: Գրողը, մասնավորապես իր վեպերում, ստեղծել է ինքնատիպ գրական մի աշխարհ, որտեղ տարբեր իրավիճակներում կարծես միևնույն անձերն են գործում: Գործողությունների վայրը Հնդկաստան է, որտեղ ծնվել է հեղինակը, Խաղաղ օվկիանոսը, Սայգոնը, գործող կերպարները՝ Մայրը, Եղբայրները և նրանց բոլորի կենտրոնում հեղինակն է, իր ես-ը, գործողությունները պատվում են իր շուրջը: Դյուրասը երբեք չի բացահայտել, թե ե՞րբ է այդ ես-ի նախատիպն իրականում ինքը և ե՞րբ է գրական կերպար ստեղծել:

Կյանքի վերջում, բացառիկ տեսածայնագրման ժամանակ միայն, նա արցունքոտ աչքերով խոստովանում է, որ «Սիրեկանը» վեպի հերոսուհին համենայն դեպս ինքն է ու այդ խոստովանությունն արտահայտում է հետևյալ կերպ՝ «Ամեն դեպքում, ես նրան սիրել եմ»:

Ի տարբերություն իր գեղարվեստական մյուս երկերի, «Գրելը» վեպում Դյուրասը ես-ի և նա-ի խաղ-խաբկանք ստեղծելու միտում ի հայտ չի բերում: Ինչպես հեղինակի յուրաքանչյուր վեպ՝ «Գրելը» նույնպես ինքնակենսագրական կարող է համարվել: Պարզապես այս դեպքում ընթերցողը հավատալու կամ չհավատալու խնդիր չունի: Ամբողջ վեպում հեղինակն առանց երկմտելու օգտագործում է առաջին դեմքի դերանունը և խոստովանում, թե ինչ հանգամանքներից ելնելով է գրում ոչ միայն այդ գիրքը այլև, ընդհանրապես, ինչպես և ինչու է գրել ամբողջ կյանքում, վերջապես ինչի մասին կարելի է գրել:

Դյուրասը իր վեպում ներկայացնում է նաև գրական երկ ստեղծելու, իր կարծիքով անխուսափելի նախապայմանները: Ստորև փորձենք դրանք համակարգված ներկայացնել:

Դրանցից առաջինը և կարևորագույնը, որին հեղինակն անդրադառնում է բազմիցս, միայնակ լինելն է: Ստեղծագործելու ընթացքում, ըստ Դյուրասի, գրողը պետք է ոչ միայն միայնակ լինի, այլև զգա, ապրի այդ

միայնությունը: «Մարդը, ով գրքեր է գրում, պետք է մշտապես առանձնացած լինի իրեն շրջապատողներից: Դա միայնությունն է: Դա հեղինակի միայնությունն է՝ գրվածքի»²³: Կամ՝ «Միայնակ լինել դեռևս չգրված գրքի հետ, նշանակում է լինել մարդկության դեռևս նախնական քնի մեջ: Դա է: Դա նաև դեռևս անմշակ գրվածքի հետ միայնակ լինելն է: Դա դրանից չմեռնելու ջանքն է: Դա մարտի դաշտում միայնակ պատսպարված լինելն է...»²⁴:

Մենության ամենացայտուն օրինակը «Մութ կրպակների փողոցը» վեպի հերոսն է՝ Գի Ռուլանը/ Պեդրո Ստերն, Պեդրո Մակևոյը/։ Չունենալով անցյալ՝ հերոսը միայնության զգացումով էր համակված, նա փնտրում էր իր հետքերը և ավելի համոզվում, որ գուցե երբեք էլ չիմանա, թե ով էր ինքն իրականում. «Ես կարծում եմ, որ շենքերի մուրքերում դեռ լսվում էին այն մարդկանց ոտնաձայները, ովքեր սովորություն ունեին անցնել դրանցով և ովքեր անհետացել են այդ ժամանակներից ի վեր: Նրանց անցնելուց հետո ինչ-որ բան շարունակում է տարանվել. Ավելի ու ավելի թույլ ալիքներ, բայց որոնք կարելի է որսալ ուշադիր լինելու դեպքում: Գուցե ես երբեք էլ այդ Պեդրո Մակևոյը չեմ եղել, ես ոչինչ էի, սակայն ալիքներն անցնում էին իմ միջով, երբեմն հեռավոր, երբեմն ավելի ուժգին, բոլոր այդ ցրված արձագանքները, որոնք տարուբերվում էին օդում, բյուրեղանում էին ու դա ես էի»⁶⁹:

«Դորա Բրյուդեր» վեպում գլխավոր հերոսուհու հոգեվիճակի մասին մենք կարող ենք միայն ենթադրություններ անել, քանի որ հեղինակն ինքը հիմնվում է ենթադրությունների վրա: Ուսումնական հաստատությունից նրա կրկնակի փախուստը ինքնին կարող է ապացույցը լինել մեր ենթադրության. «Փախուստը, թվում է, փրկության կանչ էր, իսկ երբեմն՝ նաև ինքնասպանության»⁷⁰:

Մոդիանոյի հերոսների մենությունը հաճախ է ուղեկցվում ուրիշ մարդկանց հետ շփման անհնարինությամբ: Դոմինիկ Ժամեի հետ ունեցած իր հարցազրույցում Պատրիկ Մոդիանոն հաստատում է, որ իր հերոսները հաճախ խնդիր ունեն խոսելու, իսկ երբ խոսում են, վախ կա, որ չեն լսի իրենց. «Դա մի աշխարհ է, ուր ոչինչ հստակ չէ, ուր մարդիկ չեն ավարտում իրենց մտքերը: Մի անհանգիստ աշխարհ, ուր երևույթները երբեք պարզաբանված չեն լինում: Սա նյարդայնացնող խոսելածն է, նախադասությունները օդից կախված են մնում, «նրանք»/հերոսները»/ երբեք չեն ավարտում իրենց խոսքը»⁷¹: Այս պատճառով է, թերևս, հեղինակը խոստովանում, որ գրելն իրեն հեշտությամբ չի տրվում. «Ամեն նախադասություն պիտի վերջնական լինի... Հաճախ ես մի ամբողջ օր պրփրվում եմ միևնույն նախադասության շուրջ: Ես այն գրում եմ: Ջնջում: Կրկին գրում»⁷²:

Մոդիանոն հարցազրույցներից մեկում պատումի հեղինակային «Ես»-ի մասին ասում է. «Սա/հերոսը/ «Ես»-ի մի տեսակ է, պատմողի մի տեսակ: Նրան չպետք է ընդհատել: Պետք է թողնել նրան կորչել սեփական

⁶⁹ http://ae-lib.org.ua/texts/modiano_rue_des_boutiques_obscurres_fr.htm

⁷⁰ Modiano P., Littérature française, Romans et récits, *Dora Bruder*, ed. Gaillimard-Paris, 1997, p.78

⁷¹ <http://web.archive.org/web/20010627164552/www.france3.fr/emissions/ecrivain/auteurs/modiano.html>

⁷² Entretien avec J. L. de Rambures, dans *Le Monde*, Paris, 14 mai 1973, p. 24, /cité par Hélène Andreeva/

երագների մեջ: Մենք բոլորս էլ ունեցել ենք նման ընկերներ: Նա երբեք չի հասցնում խոսել, մյուսները ևս... Դա մի քիչ նման է երագներին»,- ասում է Մոդիանոն և հավելում,-«այդ ես եմ, բայց ստեղծված մի ամբողջությամբ երագային ինքնակենսագրության միջոցով»⁷³:

Մոդիանոյի ստեղծագործություններում քննվում է նաև անձի երկակի ինքնության խնդիրը, որ պարբերաբար հանդիպում ենք տարբեր հերոսների մոտ: Հերոսները, հիմնականում իրենց հետքերը կորցնելու, գաղտնի մնալու նպատակով, հանդես են գալիս կրկնակի ինքնությամբ:

«Աստղային հրապարակ» վեպում Սերժ Ալեքսանդրը, երբեմն հանդես է գալիս ժակոբ Իքս անվամբ, թերթերում տպագրելով համարձակ հոդվածներ հրեաների օգտին, իսկ իրականում հաճախ թաքցնում ամոթը, որ հրեա է ինքը /այս մասին վերևում արդեն խոսվել է/: «Ես բարձրաստիճան ընկերներ ունեմ... ես միակ հրեան եմ, ով ստացել է անձամբ Հիդլերի ձեռքից Պապվո Խաչը»⁷⁴:

Ալբերտ Շլեմեյլովիչը ևս օգտվում էր երկակի ինքնությունից՝ թաքցնելու հրեական ծագումը՝ ներկայանալով ժան Կասիս դը Կուդրե Մակուարդ անվամբ:⁷⁵

«Օղակաձև զբոսայգին» վեպում Սերժ Ալեքսանդրի հայրը դարձյալ ներկայանում է երկակի ինքնությամբ, այս մասին դժվար չէ կռահել հեղինակի հետևյալ արտահայտությունից՝ «...հայրս, ում կոչում էին «Բարոն Դեյքեքեր»⁷⁶:

Իսկ ահա «Դորա Բոյուդեր» վեպում միանգամից երկու հերոսների մոտ ի հայտ է գալիս ինքնության խնդիր՝ Դորա Բոյուդերի և հեղինակի հոր: Առաջինի դեպքում ծնողներն էին դիտմամբ ուրիշ անվամբ գրանցել աղջկան, որպեսզի պաշտպանեն նրան հակահրեական դաժանություններից. «Նրան գրանցել էին դպրոցում «Սյուզան Ալբերտ» անունով՝ թաքցնելու համար արմատները»⁷⁷:

Ինչ վերաբերում է հեղինակի հորը, նրա ինքնության երկակիության մասին վկայում է Մորիս Սաքսը. «Կոնտրիի 15-րդ կառամատուցի բնակարանում, ուր 1942թ.-ից ապրում էր իմ հայրը, նույն բնակարանն էր վարձել հաջորդ տարին Մորիս Սաքսը ... Նա պատմում է, որ վերցրել է այդ երկու սենյակները ոմն Ալբերտից՝ «Ջեբու» մականվամբ... Այդ «Ջեբու»-ն՝ Ալբերտ Սիակին, կրում էր նույն անունն, ինչ իմ հայրը և ինքն էլ ծնունդով պատկանում էր Սալոնիկի իդալացի հրեա մի ընտանիքի»:⁷⁸

⁷³[http://web.archive.org/web/20010627164552/www.france3.fr/emissions/crivain/ auteurs/modiano.html](http://web.archive.org/web/20010627164552/www.france3.fr/emissions/crivain/auteurs/modiano.html)

⁷⁴ Ibid., p. 43.

⁷⁵ Modiano P., Littérature française, Romans et récits, *La Place de l'Etoile*, ed. Gaillimard-Paris, 1968, p. 57.

⁷⁶ Ibid., p. 37.

⁷⁷ Ibid., p.44

⁷⁸ Ibid, p.98

Երկակի ինքնության տեսանկյունից «Մութ կրպակների փողոցը» վեպի հերոսի՝ Գի Ռոլանի մի քանի անուն ունենալն ի տարբերություն մյուս երեք վեպերի հերոսների միտումնավոր չէր արված: Այս հերոսը պարզապես չէր հիշում սեփական անցյալը:

Այսպես՝ ուսումնասիրելով Մոդիանոյի վեպերում միջանձնային մի շարք հարաբերություններ, եկանք հետևյալ եզրակացություններին՝

- Մոդիանոյի վեպերում անձի դրսևորման տեսանկյունից հասարակությունը էական ազդեցություն չի ունենում, սակայն հեղինակը անվերջ փնտրում է իր հերոսներին այլ մարդկանց միջոցով:
- Հասարակությունը որպես այդպիսին Մոդիանոյի վեպերում հանդես է գալիս «հրեա-ոչ հրեա» երկատվածությամբ:
- Անհատ-ընտանիք հարաբերությունը Մոդիանոյի ստեղծագործության հիմնասյուներից է: Հատկապես հայր-որդի փոխհարաբերությունները առանցքային են համարվում գրեթե բոլոր վեպերում:
- Անհատն ու նրա ինքնությունը Մոդիանոյի ստեղծագործություններում էական նշանակություն ունեն, սակայն հեղինակին այդպես էլ չի հաջողվում կերտել կայուն ու որոշակի բնավորությամբ հերոսներ:
- Մոդիանոյի հերոսները հաճախ երկակի ինքնություն ունեն, որով էլ պայմանավորված է նրանց անկայունությունը: Նրանք երբեք հստակ բնութագիր չեն ստանում:

Лусине Мусаханян

КОНЦЕПЦИЯ ЛИЧНОСТИ В РОМАНАХ П.МОДИАНО

В статье рассмотрена проблема концепции личности в некоторых романах (“Площадь Звезды” (1968), “Бульварное кольцо” (1972), “Улица темных фонарей” (1978), “Дора Брюдер” (1997)) современного французского писателя Патрика Модiano. Под призмой автобиографического повествования проанализированы следующие отношения: личность-общество, общественное разделение “еврей-не еврей”, личность-семья, отец-сын, мать-сын, личность-собственное “я”, двойственность личности. В результате исследования определяется герой повествования Модiano, то общество, в котором развивается этот герой и его концепция личности.

Lusine Musakhanyan

THE CONCEPT OF THE INDIVIDUAL IN MODIANO'S NOVELS

This article is devoted to the analysis of the concept of personality in several novels (La Square of the star (1968), Ring Roads (1972), Missing Person (1978), Dora Bruder (1997)) of modern French writer Patrick Modiano. Under the prism of autobiographical narration some relations are analyzed: personality-society, social division “Jew-not Jew”, personality-family, father-son, mother-son, personality-the self, the duality of the personality. As a result of this study the author of this article determines Modiano's narrative hero, the society in which he develops and his concept of the personality.

ПРОБЛЕМА ИДЕНТИФИКАЦИИ И САМОИДЕНТИФИКАЦИИ В РОМАНЕ П.АКРОЙДА «МИЛЬТОН В АМЕРИКЕ»

Человек познает мир в его различных проявлениях с помощью разных факторов, одним из которых является идентификация. Сталкиваясь с ранее неизвестным или непонятным, человек выясняет, что находится перед ним и пытается распознать его через сравнение. Чаще всего подобному объекту приписываются свойства уже известного или некоторые ограничиваются выяснением названия. Поиски идентичности элементов мира происходят в разных сферах человеческой жизни. Это может быть национальная, религиозная, социальная или гендерная идентичность¹. Подобное узнавание объекта и отнесение его к ряду уже известных – неперемнная фаза научного исследования, художественного творчества и его восприятия.

Идентичности понятия люди добиваются в самых различных областях своей деятельности, но она вполне возможно может оказаться неполной или ложной.

Таким образом, герои художественного произведения также участвуют в процессе идентификации и самоидентификации. Данный процесс подразумевает обязательное соотнесение понятий о себе с понятием «другого». Потому что другой/другие тоже должны опознать имя, статус, пол и роль героя в обществе, его принадлежность к тому или иному социальному слою.

С этой точки зрения интересен роман П.Акройда «Мильтон в Америке», вышедший в свет в 1996г.

Фигура Джона Мильтона (1608-1674) является одной из самых ярких в английской литературе. Творчество Мильтона завершает большую историческую полосу развития художественной культуры Англии, возникшей в эпоху Возрождения. Его связи с этой эпохой многообразны, но не менее значительны и отталкивания от нее.

Хронологически Мильтон следует почти сразу после Шекспира. Титанические образы Шекспира оказали большое влияние на поэта, и он оставил вдохновенное свидетельство духовной связи с ним – стихотворение памяти великого драматурга. В то же время Мильтон был одним из активных деятелей английской буржуазной революции и автором памфлета «Иконоборец», сыгравшего не последнюю роль в

¹ Софронова Л.А. О проблемах идентичности. Культура сквозь призму идентичности. М.: Индрик. 2006. с. 8-24// интернет ресурс: <http://ec-dejavu.ru/i/identity.html>

осуждении короля Карла I. В годы буржуазной революции и после нее Мильтон являлся идеологическим лидером и ближайшим сподвижником Оливера Кромвеля. В годы своей службы Латинским секретарем (фактически министром иностранных дел революционного правительства) поэт написал всего несколько стихотворений. После реставрации монархии Джон Мильтон был осужден, но затем, по ходатайству своего бывшего секретаря, помилован и смог продолжить свою творческую деятельность. Практически все его значительные произведения были написаны уже в послереспубликанский период. Но наша статья посвящена не самому поэту Джону Мильтону, а акройдовскому переосмыслению его образа и роли в развитии общества.

Роман современного английского писателя Питера Акройда часто относят к популярному жанру «альтернативной истории», однако только историей жанровая принадлежность романа не ограничивается. Писатель предполагает, что было бы, если бы поэт Мильтон, в 1660-м году, после смерти Кромвеля, будучи уже восемь лет слепым, и, спасаясь от преследований со стороны короля Карла II, сына казненного Карла I, не оказался бы в тюрьме. С помощью того же бывшего секретаря он отправился бы за океан, чтобы присоединиться к пуританским поселенцам в Новой Англии.

Произведение «Мильтон в Америке» можно охарактеризовать также как «эпистолярный роман», потому что некоторые его части написаны в виде писем Мильтона своим сподвижникам и оппонентам в Лондоне, «романом-дневником», так как отдельные главы составляют дневники героя. Немаловажную роль в структуре романа играют воспоминания и сны. Подобный синтез жанров характерен для постмодернистской литературы.

«Мильтон в Америке» состоит из двух частей. Первая часть «Эдем» (“Eden”) служит напоминанием о двух крупных поэмах поэта Джона Мильтона: «Потерянный рай» (1664г.) и «Возвращенный рай» (1671г.). Но в произведении эти поэмы так никогда и не будут написаны. «Рай» Мильтон будет строить на земле Америки согласно пуританским канонам. Первая глава заканчивается обнаружением греха и убийства в Нью-Мильтоне и таинственным исчезновением главного героя.

Вторая часть романа – «Падение» («Fall») является последовательным рассказом о появлении поселения католиков возле Нью-Мильтона, обострении личных, религиозных и политических противоречий между поселенцами, о роли Мильтона в углублении конфликта, его нетерпимости не только к католикам и индейцам, но и к проявлениям простых человеческих чувств у жителей своего городка. И

лишь в самом конце романа Акройд раскрывает читателям тайну мистического исчезновения: Мильтон, заблудившись в лесу, попал в индейскую ловушку. Его спасли и привели в деревню, где приняли как почетного гостя. Попробовав индейский напиток, Мильтон прозрел и провел ночь с девушкой, а наутро категорически отказался на ней жениться, восприняв все произошедшее как свое «падение». Индейцы оставляют его в живых только из уважения к сединам, а на обратном пути Мильтон вновь слепнет.

Первая глава в основном представляет собой рассказ второго главного героя романа, молодого секретаря Мильтона, Гусперо (Goose-quill) своей беременной жене и содержит выдержки из дневника хозяина. На английском словосочетание «goose quill» обозначает «гусиное перо». Любопытна история именованного героя. Его так назвал Мильтон в их первую встречу. Он был грамотен, имел красивый почерк, и волосы у него на макушке торчали, несмотря на все усилия их пригладить, и были очень жесткими, как перья. «На макушке у тебя перья, и с писчими перьями ты в ладах»², говорит Мильтон. Эта сцена наименования молодого человека напоминает известное произведение Д.Дефо «Робинзон Крузо», когда Робинзон назвал молодого дикаря Пятницей, потому что нашел его именно в этот день. Настоящего имени героя, данного ему родителями, мы так и не узнаем.

Сцена знакомства Мильтона и его нового помощника интересна еще и тем, что перечисляя, откуда он родом, кем работали его предки, и чем занимаются родители, и что у него есть младшая слепая сестра, Гусперо не осмеливается сказать, как его зовут: «И тут он спрашивает, кто я такой. “Кто я такой, сэр? Простой бедолага, только и всего. Только не вздумайте тыкать в холстину шпагой или там кинжалом”» (С. 27). В то время как Мильтон представляется: «Меня зовут Джон Мильтон» (С.31.). И когда Гусперо признается, что это имя ничего ему не говорит, Мильтон несколько растеряется.

Примечательно, что знакомство происходит ночью в шаткой крытой повозке возле местечка Актон во время побега из Англии. Уже с первых минут знакомства речь Мильтона выдает человека несомненно интеллектуального, но представляет собой смесь пафоса и самолюбования: «Почему я искал укрытия под покровом ночи и мрака, Гусперо? <...> Довольно с тебя и того, что я покидаю Англию ради ее спасения. Я покидаю Англию, чтобы за нее молиться. Я покидаю Англию, дабы свидетельствовать в пользу Англии. Я покидаю Англию с

² Акройд П. Мильтон в Америке. СПб. Амфора. 2002. С. 31. Далее ссылки на роман даются по этому изданию с указанием страницы в скобках после цитаты.

намерением быть Англией» (С.35.). В следующий раз на тот же вопрос, почему он покинул Англию, Мильтон ответит, принижая свою роль и пытаясь вызвать жалость к своему положению: «Кем я был? Всего лишь помощником Кромвеля. Я состоял у него латинским секретарем, но много ли тайных бумаг и поступков можно приписать незрячему? Верно, я <...> высказывал нелицеприятные суждения о недавно казненном короле, и не сомневаюсь, что новоявленный пришлый монарх, едва ступив на нашу землю, велит меня схватить» (С.57.).

Скромность не входит в число добродетелей акройдовского Мильтона, Гусперо так описывает первую встречу своего хозяина с соотечественником в Америке: «Он выпрямился и величественным жестом положил руку мне на плечо. “Я Джон Мильтон, поборник старого правого дела.”»(С. 92). А когда впоследствии поселенцы захотят переименовать свой город в Нью-Мильтон, он воспримет это как должное.

П.Акройд в своем творчестве большое внимание уделяет тому, как другие участвуют в процессе идентификации личности. Как говорил М. М. Бахтин, «я» существует всегда для другого и с помощью другого. Оно даже «прячется в другого и других, хочет быть только другим для других, войти до конца в мир других как другой, сбросить с себя бремя единственного в мире я (я-для-себя)»³. Ученый также считал, что этот другой участвует в становлении самосознания, хотя писал и о том, что «взглянув на себя глазами другого, мы в жизни снова всегда возвращаемся в себя самих»⁴.

В первую очередь идентификация главных героев строится на их противопоставлении: Мильтон образован и начитан, Гусперо знаком лишь с азами грамматики, Мильтон глубоко религиозен, Гусперо, кажется чуть ли не единственным персонажем, кого не волнует религия ни в каком проявлении, чувство юмора у Мильтона строится на его глубоких знаниях светской и религиозной литературы, Гусперо напоминает английского народного героя Панча, который за словом в карман не полезет и шутки которого далеки от благопристойности, Мильтон осторожен и воинственно настроен ко всему, отличному от его представлений о мире, Гусперо любопытен и открыт для всего нового.

С другой стороны образ Мильтона складывается также после сопоставления его точки зрения с двумя другими культурами.

Одна из них достаточно близка герою по происхождению. Это – культура таких же европейских поселенцев, католиков по

³ Бахтин М.М. Эстетика словесного творчества. М. Наука. 1979. С. 352.

⁴ Там же, С. 17.

вероисповеданию. По соседству с Нью-Мильтоном основывается поселение Мэри-Маунт. Интересно, что земля на другом берегу реки куплена католиками у индейцев точно так же, как и земли Нью-Мильтона, но Мильтон воспринимает их приход как захват собственной территории. Католики появляются в романе сразу после мистического исчезновения и волшебного возвращения Мильтона. Многие критики отмечают, что пуритане представлены в романе ограниченными и нетерпимыми, а католики живут и мыслят как современные европейцы. С первой же минуты знакомства главный герой характеризует Ральфа Кемписа, лидера соседнего поселения, как «мерзкого паписта», «римского сводника», и приписывает ему все возможные грехи. Вторая часть романа – рассказ о том, как ненависть и нетерпимость Мильтона приводят к кровавому столкновению между двумя поселениями, в результате которого погибнут и Ральф Кемпис и Гусперо. Примечательно, что во второй части появляется новый голос – голос автора. Отдельные эпизоды рассказаны как историческая хроника, от третьего лица, простым перечислением действий. Повествование начинает напоминать исторические романы XIX века.

На первый взгляд кажется, что трансформация характера Мильтона происходит от той поистине безграничной власти, которую вручили ему поселенцы над собой и своими душами. Но история с наказанием моряка на корабле еще по пути в Америку, которую рассказывает Гусперо, доказывает, что ростки черствости и садистической жестокости были у Мильтона еще до прибытия в Новый Ханаан (С.55-56). Тем не менее, как справедливо заметил М.Ректенволд: «Акройд, будучи биографом Блейка, Диккенса и Т.С.Элиота, не только предполагает, что слепота Мильтона воплощает его отказ от человеческих чувств, но, как и у Блейка, его концепция “падения” совершенно противоположна: падение из Рая и окончательная смерть души происходит после полного отказа от радости бытия и чувственных удовольствий»⁵.

Другая культура, с которой сталкивается акройдовский Мильтон – это культура индейцев. П.Акройд рисует индейцев в соответствии с представлением просветителей XVIII века о «естественном человеке». Один из героев романа, проводник Лашер, живущий в лесу, так характеризует индейцев: «на свете нет народа более гостеприимно встречающего незнакомцев, если только они не враги» или «туземцы

⁵ Rectenwald M. Milton Finds and Loses Paradise in the New World. PITTSBURG POST-GAZETTE. Sunday, July 13. 1997. G-8.

могут сурово выражаться, сэр, но от природы они склонны к веселью» (С. 114-115). Но, ни для Мильтона, ни для еще одного протестантского проповедника Калпеппера, индейцы не являются людьми в полном смысле слова. Калпеппер считает их детьми, которым нужна сила, чтобы утихомирить, а для Мильтона они «мерзкие язычники, прозябающие в пыли», «сущие дикари – тщеславные и коварные», «неразумные существа, сродни зверям» (С. 107, 109, 114). Когда католики под руководством Кемписа, с уважением относясь к индейцам, обращают большее количество язычников в католицизм, Милтон воспринимает их деятельность как еще один вызов своим убеждениям и повод для военного решения конфликта.

Следует отметить, что не все индейцы наивно не осознают, кто такие англичане. Так называемые «благочестивые дикари» после общения с пуританами очень точно идентифицируют их: «Люди с ножами. Английские люди. <...> Они пришли с изнанки мира отобрать наш мир» (С. 111).

Таким образом, в романе П.Акройд предлагает нам альтернативную историю – как бы выглядел Рай, построенный в полном соответствии с нравственными требованиями пуританизма. Акройд переосмысливает концепцию «Нового Ханаана» согласно с ортодоксальными убеждениями Джона Мильтона. С другой стороны ставится вопрос о введении единых, «правильных» для всех законов. Повествование в романе приводит к моральному поражению Мильтона – насаждение «единственно правильной веры» оборачивается диктатурой, а сам герой изгоняется из первозданного рая, каким, как ни странно, оказывается в романе не община Нью-Мильтона, а деревня индейцев.

А проблема идентификации и самоидентификации решается в романе П.Акройда «Милтон в Америке» не только на основании определения героями своего социального, религиозного и семейного статуса, но и в оппозиции между культурами пуритан, католиков и индейцев.

Karine Gulanyan

THE PROBLEM OF IDENTIFICATION AND SELF-IDENTIFICATION IN “MILTON IN AMERICA” BY P.ACKROYD.

The article represents the problem of Identification and Self-identification of literary heroes in the novel by P. Ackroyd “Milton in America”. The author shows how orthodox Protestant John Milton evolves into bigoted Puritan and accurately determines these modifications through the heroes’ speech and in opposition of different cultures.

**ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ և ԻՆՔՆԱՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ Պ.ԱՔՐՈՅԴԻ
«ՄԻԼԹՈՆԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ» ՎԵՊՈՒՄ:**

Հոգվածը ներկայացնում է գրական հերոսների նույնականացման և ինքնանույնականացման խնդիրը Պ.Աքրոյդի «Միլթոնը Ամերիկայում» վեպում: Վեպի հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես ուղղափառ բողոքական Ջոն Միլթոնը կերպարանափոխվում է մոլագար պուրիտանի: Այդ փոփոխությունները տարբեր մշակույթների ընդդիմության միջոցով բնորոշում են հերոսների խոսքը:

ՇԵՔՍՊԻՐԻ «ՀԱՄԼԵՏ»-Ի ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

1) Սաքսոն Քերական (Saxo Grammaticus)

Դանիայի արքայազնի պատմությունը չի հորինել ինքը՝ Շեքսպիրը: Այն նախնական տարբերակով հին սկանդինավյան սագա է, որը գրական մշակման է ենթարկվել ու հասել մինչև XVI դարի վերջ՝ իբրև հում նյութ ու սյուժետային հիմք ծառայելով «Համլետ»-ին: Նախ իսլանդացի պատմիչ, բանաստեղծ ու պետական գործիչ Սնորրի Ստուռլուսոնի «Էդդա» քերթողական արվեստի մասին տրակտատում (մոտ 1220 թ.), IX դարի մի բանաստեղծից մեջբերված տողերում, հիշատակվում է «Ամլոդի» անունը: Այնտեղ ասվում է, թե ջրահարսերն Ամլոդիի համար կերակուր են աղում: Սա ակնհայտ զուգահեռ է Սաքսոն Քերականի՝ Ամլեթի պատմության մի հատվածի հետ, ուր, գիժ ձևացող իշխանին ծաղրելու համար, նրա ուղեկիցները ցույց են տալիս ծովափի ավազն ու ասում, որ նա նայի «այլուրին»: Ամլեթը չի առարկում և ավելացնում է, թե այդ այլուրն աղացել է ծովի փոթորիկը¹:

Լեգենդի գրական ամբողջական մշակումը գտնում ենք դանիացի միջնադարյան պատմիչ Սաքսոն Քերականի *Gesta Danorum* («Դանիացիների գործերը») կամ *Historiae Danicae* («Դանիական պատմություններ») վերնագրերով հայտնի լատիներեն երկի (գրված մոտ 1200 թ.) III–IV գրքերում²: Այն առաջին անգամ հրատարակվել է 1514 թ. Փարիզում: Թեև սովորաբար նշվում է, որ Շեքսպիրը հագիվ թե ուղղակիորեն ծանոթ լիներ այս աշխատությանը³, Սաքսոնի շարադրանքին հարկ է անդրադառնալ փոքրինչ մանրամասնորեն, քանզի նրա պատմած՝ արյան վրեժի տիպական սկանդինավյան սագայում արդեն առկա են «Համլետ»-ի բովանդակության մի շարք տարրեր:

Դանիայի արքա Ռորիկը Գերվենդիլի որդիներ Հորվենդիլին ու Ֆենգին իրենց հորից հետո նշանակում է Յուտլանդիայի⁴ կառավարիչներ: Հորվենդիլն աչքի է ընկնում խիզախությամբ, սխրանքներ է գործում, մենամարտում սպանում Նորվեգիայի թագավոր Կոլլերին և շահում

¹ Հմմտ. Israel Gollancz, *The Sources of Hamlet: With an Essay on the Legend*, London, 1926, p. 1–8

² Համապատասխան լատիներեն հատվածը և Օլիվեր Էյթոնի անգլերեն թարգմանությունը (1894) մեջբերված է Israel Gollancz, *The Sources of Hamlet*, p. 94–165

³ Տե՛ս, օրինակ, Hamlet, ed. Harold Jenkins, *The Arden Shakespeare (Second Series)*, 2001 (first published 1982), p. 89 և Hamlet, ed. Ann Thompson and Neil Taylor, *The Arden Shakespeare (Third Series)*, 2006, p. 67

⁴ Յուտլանդիան հյուսիսային Եվրոպայում երկարավուն թերակղզի է (հնում կոչվել է նաև Կիմբրիա), որի հյուսիսային հատվածը Դանիայի մի մասն է (հարավային հատվածը՝ Հարավային Շլեզվիգ և Հոլշտայն, այժմ գերմանական տարածք է):

Դանիայի արքայի բարեհաճությունը: Ռորիկը նրան ամուսնացնում է իր դուստր Գերոթայի հետ, որը Հորվենդիլից ունենում է Ամլեթ որդուն: Եղբոր հաջողությունները շարժում են Ֆենգի նախանձը, և նա դավադրաբար սպանում է Հորվենդիլին ու կնության առնում Գերոթային: Ապա հրապարակավ արդարանում է, թե, իբր, եղբորն սպանել է, որպեսզի նրա ատելությունից փրկի փխրուն ու անմեղ կնոջը: Ստորաքարշ ազնվականները Ֆենգի արարքը չեն դատապարտում, իսկ պատանի Ամլեթը թեև այդ ամենը տեսնում է, բայց, նրա կասկածը չհարուցելու համար, իր մարմինը պատում է աղտեղությամբ ու խելագար ձևանում: Ոմանք հավատում են Ամլեթի ցնորքին, սակայն պակաս դյուրահավատները Ֆենգին խորհուրդ են տալիս ստուգել նրան՝ տանելով անտառի մի մեկուսի մաս ու ճանապարհին կանգնեցնելով մի գեղեցիկ կին (*excellentis formae femina*): Եթե Ամլեթը սրա հանդեպ կիրք ցուցաբերի, ուրեմն խելագար չէ: Մնալով իր դերի մեջ՝ նա ձին հեծնում է հակառակ ուղղությամբ, դեմքը դեպի պոչը, իսկ ուղեկիցների ծաղրին շարունակ պատասխանում իբրև հիմար: Նրանց մեջ է լինում Ամլեթի կաթնեղբայրը (*collacteus*), որը նրան նշան է ուղարկում և զգուշացնում սպասվող ծուղակի մասին: Գլխի ընկնելով՝ Ամլեթն աղջկան քարշ է տալիս մի անմատչելի ճահճուտի մոտ, բոլորի աչքից հեռու, և նրա հետ կենակցում: Աղջիկը նրա մանկության ընկերուհին է, ուստի պայմանավորվում են, որ ամենքին կասի, թե իրենց միջև ոչինչ չի եղել: Երբ Ամլեթը հայտարարում է, որ աղջկան բռնաբարել է, իսկ նա դա հերքում է, բոլորն այդ վերագրում են պատանու խելագարությանը: Բայց Ֆենգի «ընկերներից մեկը» (*quidam amicorum*)՝ թերահավատ ու ինքնավստահ, նրան առաջարկում է տնից բացակայել, որպեսզի Ամլեթը, մոր հետ մենակ մնալով, անկեղծանա և իրեն մատնի: Ֆենգն ուրախությամբ համաձայնում է ու հեռանում, որդին գալիս է մոր սենյակ, իսկ Ֆենգի խորհրդատուն թաքնվում է ծղոտե խսիրի տակ՝ նրանց խոսակցությանն ականջ դնելու: Ամլեթն, այդ կռահելով, դարձյալ մտնում է խելագարի դերի մեջ, «ծուրդուղու» կանչում, աքլորի նման թևերը թափահարում ու թռչկոտում ծղոտի վրա: Երբ նա ոտքերի տակ մարմին է զգում, սրախողխող է անում լրտեսին, կտրատում, եփում ու կեղտաջրի բաց խողովակով մսակտորները սահեցնում ցած, որտեղ դրանք լափում են խոզերը: Ապա Ամլեթը մորը խիստ հանդիմանում է, զգուշացնում, որ սպանելու է Ֆենգին ու պատվիրում անտեղյակ ձևանալ: Երբ վերադարձած Ֆենգն ամենքին հարցուփորձ է անում իր կորած ընկերոջ մասին, Ամլեթը պատասխանում է, թե նա վար է իջել կեղտաջրի խողովակով ու խոզերի կեր դարձել: Մյուսներին դա ապուշի խոսք է թվում, մինչդեռ կասկածամիտ Ֆենգը որոշում է հանդուգն ու վտանգավոր պատանուց ազատվել: Ռորիկից ու Գերոթայից վախենալով դա անել բացեիբաց՝ նա Ամլեթին ուղարկում է Անգլիա երկու պահակի հետ: Նրանց տալիս է տախտակի վրա փորագրված մի նամակ, որով Բրիտանիայի թագավորին հանձնարարում է իր մոտ ժամանած պատանուն մահվան մատնել: Մեկնելուց առաջ Ամլեթը մորը կարգադրում է մեկ տարի անց իրեն «հուղարկավորել» ու հոգեհաց տալ: Նավի վրա նա պրպտում է քնած ուղեկիցների սնդուկները, նամակը

գտնում, քերում և Ֆենգի անունից նոր նամակ փորագրում՝ իր փոխարեն մահվան դատապարտելով մյուս երկուսին ու Բրիտանիայի թագավորին խնդրելով դատերն իրեն կնության տալ: Բրիտանիայում Ամլեթը մեծ խելք ու խորաթափանցություն է ցուցաբերում, և տպավորված արքան իր աղջկան ամուսնացնում է նրա հետ ու կախել տալիս երկու ուղեկիցներին: Պատանին առերես վրդովվում է այդ մահապատժից և դրամական հատուցում պահանջում: Թագավորից ոսկի ստանալով՝ նա այն հալեցնում է ու լցնում երկու դատարկ գավազանի մեջ: Հետո տուն է վերադառնում խելագարի սովորական կերպարով, հենց այն օրը, երբ ճաշարահում հավաքված ազնվականներն իր հոգեհացն են ուտում: Նրա վերադարձից ապշած հյուրերը հարցնում են, թե ուր են ուղեկիցները, և նա ի պատասխան ցույց է տալիս գավազանները: Այնուհետև, միանալով մատուցակներին, այնպես է ներկաներին հարբեցնում, որ մեկնվում են հատակին ու խոր քուն մտնում: Ամլեթը նրանց կաշկանդում է առաստաղից կախված վարագույրներով (որոնք Անգլիա գնալուց առաջ մորը պատվիրել էր սրահում կախել) և ճաշարահն ու ողջ պալատը մարդկանց հետ միասին կրակ տալիս: Վազելով Ֆենգի ննջարան՝ նրա մահճակալից կախված սուրը վրիժառուն փոխարինում է իր անօգտագործելի սրով (դրանով նա դիտմամբ վիրավորել էր մատները, և հոգեհաց ուտողներն այն գամել էին պատյանին, որ «գիժն» ինքն իրեն չվնասի): Ապա արթնացնում է հորեղբորը, հայտարարում, որ եկել է վրեժի ժամը, և մինչ Ֆենգն իզուր կփորձեր պատյանին գամված սրով պաշտպանվել, Ամլեթը վերջ է տալիս նրա կյանքին: Հեղինակը գովաբանում է իր հերոսի քաջությունն ու հնարամտությունը՝ նրան համարելով հավերժական փառքի արժանի: Պալատը պալատականներով հանդերձ հրդեհելուց ու Ֆենգին սրածելուց հետո Ամլեթը որոշ ժամանակ խուսափում է ժողովրդի առաջ երևալուց, քանի որ ոմանք նրա վարմունքից զայրացած էին: Այնուհետև ժողովի է հրավիրում իր հայր Հորվենդիլի հիշատակը հարգողներին և մի երկար ճառ ասում՝ արդարացնելով վրեժն ու ազատություն ավետելով Ֆենգի օրոք ստրկացած ժողովրդին: Նրան հուզմունքով են լսում, ոմանք նույնիսկ լաց են լինում, և ամենքը միաձայն Ամլեթին ընտրում են թագավոր: Լեգենդն ունի շարունակություն, որը չի առնչվում Շեքսպիրի ողբերգությանը: Այնտեղ պատմվում է նոր արքայի հետագա կյանքի, վահանին իր սխրագործությունները պատկերելու, երկրորդ անգամ Բրիտանիա գնալու, Շոտլանդիայի թագուհուն էլ կնության առնելու, Բրիտանիայի արքային կոչվում հաղթելու և, ի վերջո, երկու կանանց հետ Դանիա վերադառնալուց հետո, նրա բացակայությամբ գահին բազմած Վիգլեկի դեմ ճակատամարտում հերոսի մահով ընկնելու մասին: Սաքսոնը եզրակացնում է, որ եթե ճակատագիրն Ամլեթի հանդեպ ավելի բարեհաճ լիներ, նա իր փառքով կհավասարվեր աստվածներին և սխրանքներով կգերազանցեր Հերկուլեսին (այս առումով հետաքրքիր է, որ Շեքսպիրի

Համլետն, ընդհակառակը, իրեն ամենևին նման չի համարում Հերկուլեսին [I.2.152–153]⁵):

Ինչպես տեսնում ենք, դեպքերի ընթացքն զգալի չափով նույնն է: Կա քաջ ու զորեղ առաջնորդ, ով մենամարտում հաղթում է իր նորվեգացի մրցակցին: Նրան նախանձում ու սպանում է եղբայրը՝ կնության առնելով նրա անհավատարիմ կնոջը: Կա վրիժառու որդի, որն իբրև իր առաքելությունը կատարելու ուղի ընտրում է խելագար ձևանալը: Նրան փորձում են ստուգել գեղեցիկ աղջկա միջոցով, ապա մոր սենյակում մի պալատական է թաքնվում՝ որդու հետ նրա խոսակցությանն ականջ դնելու: Վրիժառուն սպանում է լյուտեսին և մորն անխնա պարսավում: Այդ սպանության հետևանքով նա երկու պահակների հետ ուղարկվում է Անգլիա՝ մահվանն ընդառաջ: Բայց վրիժառուն գաղտնի փոխում է ճակատագրական նամակը, և Անգլիայում մահապատժի են ենթարկվում իր ուղեկիցները: Տուն է վերադառնում հուղարկավորության ժամանակ և ի վերջո իր վրեժը լուծում սրերի փոխանակությունից հետո: Համապատասխանաբար՝ հստակ են նաև կերպարային զուգահեռները. Ամլեթը Համլետի նախատիպն է, Հորվենդիլը՝ ավագ Համլետի, Ֆենզը՝ Կլավդիոսի, Գերոլան՝ Գերտրուդի, Կոլլերը՝ ավագ Ֆորտինբրասի, «գեղեցիկ կինը»՝ Օֆելիայի, Ամլեթի «կաթնեղբայրը»՝ Հորացիոյի, Ֆենզի խորհրդատու «ընկերը»՝ Պոլոնիոսի, Ամլեթի վրա կարգված պահակները՝ Ռոզենկրանցի ու Գիլդենշտեռնի: Հին լեգենդում, սակայն, կարևոր կերպարներից բացակայում են Ուրվականը, Լատերը, կրտսեր Ֆորտինբրասը, Գերեզմանափորն ու Օգրիկը: Իսկ ինչ վերաբերում է նշված զուգահեռներին, ապա դրանք, իհարկե, սոսկ արտաքին են, ձևական, քանզի բիրտ ու անհողողող վրիժառու Ամլեթի մասին չոր ու ցամաք, տեղ-տեղ անճաշակ ու բարբարոսական պատմությունը և Շեքսպիրի երկն անհամեմատելի են: Հնարավոր չէ ըստ էության նմանություն տեսնել Սաքսոն Քերականի անկենդան, անհոգի հերոսների և Շեքսպիրի Համլետի, Կլավդիոսի, Օֆելիայի, Պոլոնիոսի ու մյուս կերպարների միջև: Սա ցայտուն օրինակ է այն բանի, թե ինչպես կարելի է մի պարզունակ ու անշուք սյուժե մոգական ձեռքով վերածել գլուխգործոցի:

Ուշագրավ է, որ սկանդինավյան սագան, ինչպես պարզվել է, է՛լ ավելի հին՝ հռոմեական ակունքներ ունի: Ամլեթի նախատիպն է համարվում պետական գործիչ Լուկիուս Յունիուս Բրուտուսը: Նա, ըստ մեզ հասած ավանդության, գլխավորել է Հռոմի վերջին թագավոր Տարկվինիուս Գոռոզ էտրուսկի դեմ խռովությունը, որի արդյունքում արքան իր որդիների հետ քաղաքից վտարվել է, և սկիզբ է դրվել հանրապետությանը: Մ.թ.ա. 509 թ. Բրուտուսը դարձել է Հռոմի առաջին երկու կոնսուլներից մեկը: Նրա և սկանդինավյան հերոսի միջև նմանության մասին խոսելիս՝ մասնագետները

⁵ «Համլետ»-ի տողահամարներն ու հայերեն հատվածներն ըստ պիեսի մեր ամբողջական թարգմանության են, որն այժմ տպագրության ընթացքում է:

շեշտում են⁶, որ երկուսի անունն էլ՝ Բրուտուս և Ամլեթ (Ամլոդի, Ամբլետտ, Համբլետ կամ Համլետ) նշանակել է՝ «հիմար»⁷: Հռոմեացու մասին պատմում է Տիտուս Լիվիուսը⁸ նշելով, որ նա Տարկվինիոս Գոռոզի քրոջ որդին էր, և թագավորը սպանել էր նրա եղբորն ու այլ երևելի քաղաքացիների: Պատանի հասակում այդ իմանալով՝ նա, որ ի բնե աչքի էր ընկնում խելքով, որոշել էր, դաժան միապետի աչքից հեռու մնալու նպատակով, տխմար ձևանալ և իր անվանը կցել brutus մակդիրը: Այդպես նա սպասում էր Տարկվինիուսից իր վրեժը լուծելու և հռոմեացիների առաջնորդ դառնալու պատեհ առիթի: Սաքսոն Քերականի պատմության հետ որոշակի զուգահեռ է Բրուտուսի ձեռքի գավազանը՝ ներսից ոսկի, դրսից եղջյուր (այն խորհրդանշում է բթամիտ արտաքինի հետևում թաքնված նրա խելքը)⁹, որը նա տանում է Դելփի, իբրև ընծա Ապոլլոնին: Հիշենք Ամլեթի երկու փուլ գավազանը, որոնց մեջ նա հալել ու լցրել էր իր երկու ուղեկիցների մահվան դիմաց ստացած ոսկին: Դրան ավելացնենք «տխմարությունն» ու վրեժի հետաձգումը մինչև հարմար պահ, և նմանությունն աներկբա կթվա (մանավանդ որ այդ նմանությունը նկատել է արդեն Բելլֆորեն. նրա մասին տե՛ս ստորև): Լուկիոս Յունիոս Բրուտուսի անունն ու նրա հիմար ձևանալը Շեքսպիրին անշուշտ հայտնի էր: Այդ մասին տողեր ենք գտնում նրա «Լուկրեցիայի բռնաբարումը» պոեմում (տողեր 1811–1813) և «Հենրի V» պատմական դրամայում (II.4.37–38): Առաջինը գրվել է 1593/4 թ., իսկ երկրորդը՝ «Համլետ»-ից ոչ շատ առաջ, 1598/9 թ.:

2) Ֆրանսուա դը Բելլֆորե (François de Belleforest)

Ինչպես վերը նշվեց, Սաքսոն Քերականը սովորաբար չի համարվում «Համլետ»-ի անմիջական աղբյուր: Գոյություն ունի նրա պատմած սագայի՝ ֆրանսիացի գրող ու թարգմանիչ Ֆրանսուա դը Բելլֆորեի (1530–1583) վերամշակումը¹⁰: Վերջինիս մեծածավալ «Ողբերգական պատմություններ»-ը (*Histoires tragiques*)¹¹, որի V շարքի III պատումն Ամլեթի լեգենդն է՝ մոտ երկու կամ ավելի անգամ ընդարձակված, յոթ հատորով լույս է տեսել 1559 և 1582 թթ. միջև: Ապա այն բազմիցս վերահրատարակվել է: Խնդրո առարկա V

⁶ Օրինակ՝ Hamlet, ed. Harold Jenkins, p. 86 և Hamlet, ed. Ann Thompson and Neil Taylor, p. 64:

⁷ Վերջինս այդ իմաստն է ունեցել սկանդինավյան ավանդության մեջ: Անգլերեն hamlet- նշանակում է՝Տյուդակ» (հմմտ. հին ֆրանսերեն hamelet)

⁸ Liv. I.56–60, հմմտ. Օվիդիոսի մոտ (Fast. 717–852)

⁹ « Ոսկե գավազան» զետեղված այդ նպատակով ներսից փորված եղջյուրե գավազանի մեջ՝ (aureum baculum inclusum corneo cauto ad id baculo):

¹⁰ Ամլեթի պատմության Բելլֆորեի ֆրանսերեն վերաշարադրանքը, 1608 թ. անգլերեն թարգմանությամբ հանդերձ, մեջբերված է Israel Gollancz, The Sources of Hamlet, p. 166–312:

¹¹ Այն հաճախ XVI դարի իտալացի գրող Մատտեո Բանդելլոյի պատմվածքների ֆրանսերեն ազատ թարգմանություն է, բայց Ամլեթի սագան, երևում է, Բելլֆորեն վերածնել է ուղղակիորեն Սաքսոն Քերականի գրքից:

հատորը, սկսած 1570 թ., մինչև 1600 թ. տպագրվել է ութ անգամ: Ամլեթին վերաբերող հատվածը, անգլերեն մի անանուն թարգմանությամբ, «Համլետի պատմությունը» (հին ուղղագրությամբ՝ *The Hystorie of Hamlet*) վերնագրով, հրատարակվել է 1608 թ., երբ «Համլետ»-ն արդեն վաղուց գրված էր, բազմիցս բեմադրված և տպագրված Q1 ու Q2 տարբերակներով: Ավելին՝ այդ թարգմանության մեջ նույնիսկ նկատելի է Շեքսպիրի ազդեցությունը¹²: Ուստի ենթադրվում է, որ նա կարող էր ֆրանսերեն պատումին ծանոթ լինել ուղղակիորեն բնագրով:

Բելլֆորեն մեծ մասամբ հետևում է Սաքսոն Քերականին և կրկնում նույն պատմությունը, սակայն՝ հորինելով լրացուցիչ մանրամասներ, տալով մեկնաբանություններ ու շարադրանքն առհասարակ ճոխացնելով: Սա ոչ միշտ է դրական արդյունքի բերել և երբեմն հանգեցրել է երկարաբանության: Կան անհարկի հավելումներ, որոնցից է, օրինակ, որդու կողմից իր սենյակում հանդիմանվելուց հետո մոր արտասանած ճառը: Նա արդարանում է, թե ստիպված է եղել ամուսնանալ իրեն նույնպես ատելի բռնակալի հետ, ապա իր հերթին Ամլեթին մղում է վրիժառության և հորդորում զգուշորեն ու անվրեպ գործել, որպեսզի չարագործն անպայման պատժվի: Սա հակասում է պատմության էությանն ու Գերոսայի (այժմ՝ Գերոսի) կերպարին, մանավանդ որ, ինչպես կտեսնենք, ըստ Բելլֆորեի՝ նա Ֆենգի (այժմ՝ Ֆանգոնի) հետ սիրային կապ էր ունեցել դեռ սպանությունից առաջ:

Ֆրանսիացի հեղինակն ընդհանուր առմամբ հիացած չէ այս դաժան պատմությամբ և, որպես ճշմարիտ քրիստոնյա, դեմ է անհատական վրեժին: Մեղսագործներին պատժելու իրավունքը վերապահված է միայն Աստծուն, հետևաբար Բելլֆորեն Ամլեթի լեգենդին մի առաջաբան է կցում ու շեշտում, որ իր պատմելիք դեպքերը տեղի են ունեցել հեռավոր անցյալում: Այն ժամանակ դանիացիները քրիստոնյա չէին, այլ՝ «հույժ բարբարոս ու անքաղաքակիրթ» (*assez barbare et mal civilisn*) ժողովուրդ, և նրանց թագավորները շարունակ զբաղված էին միմյանց գահից, ունեցվածքից ու հաճախ էլ կյանքից զրկելով: Այնուամենայնիվ, նա այդ պատմությունը, ուսանելի համարելով, վերաշարադրում է՝ հարկ եղած դեպքերում համեմելով բարոյախոսությամբ: Բելլֆորեն հիմնականում գովում է Ամլեթին (արտակարգ խելքի, խորամանկության ու քաջության համար) և պախարակում միայն նրա կնամուղությունը: Իսկ վրեժը, եթե ընդհանրապես որևէ վրեժ կարելի է արդարացնել, ընդունելի է հատկապես հայրական պատիվը

¹² Անգլերենում ասվում է, որ մոր հետ Համլետի խոսակցությանն ականջ դնելու համար պալատականը թաքնվել էր առաստաղից կախված գորգի (*arras*) հետևում, ոչ թե մահճակալի ծածկոցի (*loudier*) տակ, ինչպես Բելլֆորեի ֆրանսերեն բնագրում է (իսկ *arras*-ը Շեքսպիրի բառն է [II.2.163, III.3.28, IV.1.9]): Հետևաբար անգլերենում Ամլեթը ոչ թե քաղաղի նման թռչկոտում է ծածկոցի վրա, այլ թևերը թափահարելով հարվածում գորգին ու այդպես հայտնաբերում թաքնված մարդուն: Մյուս ակնհայտ փոխառությունը Շեքսպիրից նույն տեսարանում Ամլեթի 'Առնե'տ, առնե'տ' (*A rat, a rat!*) բացականչությունն է (հմմտ. III.4.25, IV.1.10), որ չկա ֆրանսերենում:

պաշտպանելու դեպքում: Սա հաստատելու համար Բելլֆորեն օրինակներ է բերում Աստվածաշնչից ու հին աշխարհից:

Ինչ վերաբերում է Շեքսպիրի հետ Ամլեթի լեգենդի այս տարբերակի առնչությանը, ապա Սաքսոն Քերականի պատումին Բելլֆորեի ավելացրած մանրամասներից մի քանիսն արտացոլված են «Համլետ»-ում¹³: Նախ, ինչպես նշվեց, նա պատմում է, թե Գերուֆը հավատարիմ չէր եղել իր ամուսնուն դեռ նրա կենդանության օրոք: Մինչ այդ, գրում է Բելլֆորեն, Ֆանգոնն արդեն «արյունապղծորեն ապականել էր եղբոր մահիճը» (avoit incestueusement souillé la couche fraternele): Շեքսպիրն այս հանգամանքը կարևոր է համարել, և դա հնչում է Ուրվականի խոսքում (I.5.42–47):

Արյունապիղծ այդ գազանը.

Նա իր խելքի կախարդանքով, նենգ շնորքով,–
Օ՛չարագործ խելք ու շնորք, որ ուժ ունեք
Գայթակղելու,– իր խայտառակ ցանկությանը
Ենթարկվեց կամքն իմ թագուհու, ով առերես
Խիստ պարկեշտ էր:

Բելլֆորեն նաև ավելացնում է, որ Գերուֆի հապճեպ ամուսնությունը մարդասպանի հետ կասկած հարուցեց, թե նա մասնակցել էր Հորվենդիլի դեմ դավադրությանը: Համլետը նույնպիսի կասկած է հայտնում Գերտրուդին, որը վերջինս հերքում է իր անտեղյակությամբ (III.4.29–21):

Անգլիայում հյուրընկալվող Ամլեթը, ճիշտ նախազգալով, որ իրեն մատուցվող կերակուրն ու ըմպելիքը ներծծված են մարդկային արյամբ և գանազան աղտեղություններով, հրաժարվում է ուտել-խմելուց: Բելլֆորեն, ով գուշակությունը համարում է դիվային ձիրք, այս առթիվ մի երկար բացատրություն է տալիս: Հեռավոր անցյալում (նախաքրիստոնեական ժամանակներում) հյուսիսային երկրները ենթարկվում էին սատանային, և այնտեղ ապրում էին բազմաթիվ գուշակ կախարդներ: Ուստի Ամլեթը նույնպես, դեռ հոր կենդանության օրոք, սովորել էր նրանց «գիտությունը, որով չար ոգին գայթակղում է մարդկանց» (science, avec laquelle le malin esprit abuse les hommes): Այդուհանդերձ, Բելլֆորեն, Ամլեթի հանդեպ շատ խիստ չլինելու համար, որպես մեղմացուցիչ հանգամանք նշում է, թե նա կարող էր գուշակել նաև իր «մելանաղձության ազդեցության տակ» (pour la vehemence de la melancholie), այլ ոչ թե անպայման դիվային դրդմամբ: Մասնագետներն իրավացիորեն հստակ կապ են տեսնում այս հատվածի և Համլետի հետևյալ խոսքի միջև (II.2.593–598).

¹³ Հմմտ. Hamlet, ed. George R. Hibbard, The Oxford Shakespeare, Oxford, 2008 (first published 1987), p. 10–11

Կարող է՝ իմ տեսած ոգին
Սատանա էր. նա ունակ է հրապուրիչ
Տեսք ընդունել: Այո՛, գուցե, օգտվելով իմ
Թուլությունից, մելամաղձոտ խառնվածքից,–
Քանզի նման հոգու հանդեպ խիստ զորեղ է,–
Գայթակղում է (abuses), որ անիծվեմ:

Բեմում հայտնվող ու որդու հետ խոսող Ուրվականի գաղափարն անգամ, թվում է, ծագել է Բելլֆորեի գրքից, քանի որ նա երկիցս հիշատակում է սպանվածի «ստվերը» (ombre)¹⁴: Առաջին անգամ Ամլետը, Գերութին պարսավելիս (այսինքն՝ հենց նույն տեսարանում, երբ Շեքսպիրի մոտ Ուրվականը կրկին հայտնվում է), բողոքում է, թե մայրը չի հարգել «Հորվենդիլի ստվերին» (les ombres de Horwendille): Իսկ հետո վրիժառուն նորից ասում է այդ բառը, երբ, Ֆանգոնին սպանելով, նրան պատվիրում է անդրաշխարհում եղբորը հայտնել, թե իրեն այնտեղ ուղարկողը նրա որդին էր, որպեսզի եղբոր ստվերը խաղաղվի (son ombre s'appaise) (հմմտ. «Համլետ»-ում՝ «Խաղաղ՛ղ մնա, հուզվա՛ծ ոգի» [I.5.190]):

Նշվում են նաև ավելի կամ պակաս համոզիչ ուրիշ զուգահեռներ¹⁵, և դարձյալ ծագում է բնականոն հարցը. Շեքսպիրն իրո՞ք ուղղակիորեն կարդացել է Բելլֆորեի ֆրանսերեն բնագիրը, թե՞ այդ նմանությունների պատճառը նրան նյութ մատակարարած մի միջնորդ աղբյուր է: Մյուս կողմից՝ Ամլետի ու Համլետի պատմությունների միջև կան նաև էական տարբերություններ, որոնցից հատկապես կարևոր են հետևյալները.

1) Պիեսում արքայի սպանության փաստը գաղտնիք է (ամենքը կարծում են, թե նա մեռել է օձի խայթոցից), ուստի հանդես է գալիս Ուրվականը, որպեսզի որդուն հայտնի եղելությունն ու վրեժի դրդի:

2) Նորվեգիայի սպանված թագավորը և թագուհու սենյակում սրախողխող արված պալատականը որդիներ ունեն՝ կրտսեր Ֆորտինբրաս ու Լաերտ, որոնք նույնպես վրիժառու են. նրանց (հատկապես Լաերտի) ներկայությունը երկի գործողությունը դարձնում է դրամատիկ ու բազմաշերտ:

3) Հին լեգենդում հարևանցի հիշատակվող «գեղեցիկ կինը» կամ «աղջիկը» դարձել է կենտրոնական կերպարներից մեկը՝ Օֆելիա, որը խելագարվում է ու խեղդվում գետում:

4) Հանդես են գալիս շրջիկ դերասաններ, և տեղի է ունենում ներկայացում ներկայացման մեջ:

5) Ներմուծված է գերեզմանոցի տեսարանը՝ Գերեզմանափորի կերպարով ու Համլետի հետ նրա զրոյցով հանդերձ:

¹⁴ Հմմտ. Arthur P. Stabler, «King Hamlet's Ghost in Belleforest?», Publications of the Modern Language Association of America 77.1 (1962), p. 18–20

¹⁵ Hamlet, ed. Harold Jenkins, p. 92–95

6) Համլետը Կլավդիուսին սպանում է դիպվածաբար, որից հետո մեռնում է նաև ինքը:

Եվ ծագում է երկրորդ տրամաբանական հարցը. այդ նորամուծությունների հեղինակն ինքը՝ Շեքսպիրն է, թե դրանք, լրիվ կամ մասնակիորեն, արդեն կային միջնորդ աղբյուրում: Վերոհիշյալ առաջին հարցը որոշակի պատասխան չունի, իսկ երկրորդին հնարավոր է պատասխանել միայն թեականորեն ու մասամբ՝ հետևյալ փաստերի հիման վրա:

3) «Նախա-Համլետ» (*Ur-Hamlet*)

1589 թ. ամռանն անգլիացի երգիծաբան, թատերագիր ու բանաստեղծ Թոմաս Նեշը (1567–1601) իր մի խրթին պամֆլետում¹⁶, Քեմբրիջի համալսարանում ստացած կրթության բարձունքից ծաղրում է նրանց, ովքեր զբաղվում են «ամեն տեսակ արվեստով» (*every arte*)՝ թողած «գրագրի»¹⁷ գործը, որի համար ծնված են» (*the trade of Noverint, whereto they were borne*): Ապա նա հետևյալ բառերով ակնարկում է, թե նկատի ունի հռոմեացի փիլիսոփա, պետական գործիչ ու ողբերգակ Սենեկային (մոտ մ.թ.ա. 4 – մ.թ. 65) ընդօրինակող անգլիացի թատերագիրների. «Մոմի լույսով ընթերցվող անգլերեն Սենեկան ընձեռում է բազում լավ ասույթներ, ինչպես՝ “Արյունը մուրացիկ է” և այլն: Իսկ եթե դուք նրան մի սառնամանիք առավոտ հավուր պատշաճի աղերսեք, նա ձեզ կմատուցի ամբողջ Համլետներ, ես կասեի՝ բոլորով ողբերգական ճառեր» (*English Seneca read by candle light yeeldes manie good sentences, as Bloud is a begger, and so foorth: and if you intreate him faire in a frostie morning, he will affoord you whole Hamlets, I should say handfulls of tragical speaches*¹⁸):

Մանվածապատ այս տողերը նախ վկայում են, որ 1589 թ. ամռանը կամ նույնիսկ դրանից էլ առաջ արդեն գոյություն ունեւր «Համլետ» վերնագրով պիես: Եվ քանի որ այն կապվում է Սենեկայի ու «ողբերգական ճառերի» հետ, պետք է ենթադրել, որ խոսքը ողբերգության մասին է: Ավելին,

¹⁶ Այն ուղղված է «Երկու համալսարանների ջենտլմեն ուսանողներին» և գրվել ու հրատարակվել է որպես անգլիացի գրող Ռոբերտ Գրինի (1558–1592) մի երկի առաջաբան (տե՛ս Thomas Nashe, *To the Gentlemen Students of both Universities* in Robert Greene, *Menaphon: Camila's alarum to slumbering Euphues in his melancholie Cell at Silexetra, &c*, London, 1880 (first published 1589): Նեշը և Գրինը պատկանում էին այսպես կոչված «համալսարանական ուղեղների» (*university wits*) շարքին, որոնք արհամարհական վերաբերմունք ունեին բարձրագույն կրթություն չստացած հեղինակների հանդեպ: Հայտնի են Գրինի՝ 1592 թ. գրած տողերը, ուր նա Շեքսպիրին կոչում է ‘դուրսպրծուկ ազոավ՝ գեղեցկացած մեր փետուրներով (*upstart Crow, beautified with our feathers*), ով երևակայում է, թե ինքն է «մի գավառում միակ Բեմցնցողը» (*the onely Shakescene in a countrey, որտեղ Շեքսպիրի անունով բառախաղ է*). այս մասին տե՛ս, օրինակ, Samuel Schoenbaum, *William Shakespeare: A Compact Documentary Life, Revised Edition with a New Postscript*, New York, Oxford, 1987 (first published 1977), p 151–158:

¹⁷ Մասնավորապես՝ իրավական փաստաթղթերի գրագրի

¹⁸ Thomas Nashe, *To the Gentlemen Students of both Universities*, p. 9.

հաշվի առնելով նաև քիչ հետո Նեշի արած մեկ ուրիշ ակնարկ՝ «Եզովպոսի այծիկին» (the kid in Aesop) նմանակելու վերաբերյալ, որոշ շեքսպիրագետներ եզրակացրել են, թե հատվածում անուղղակիորեն նշվում է նաև թատերգուի անունը: Դա հավանաբար Թոմաս Քիդն է (1558–1594)՝ հեղինակ, ով չէր ստացել համալսարանական կրթություն, գրագրի (scrivener, որը Նեշի օգտագործած՝ նույնպես լատինական ծագում ունեցող *noverint* բառի հոմանիշն է) որդի էր, նմանակում էր Սենեկային, իր երկերում օգտագործում նրա ասույթները և, վերջապես, ուներ kid-ին համահունչ անուն¹⁹: Բացի այդ, ինչպես կտեսնենք, մի շարք նմանություններ կան նրա «Իսպանական ողբերգության» (*The Spanish Tragedy*) ու Շեքսպիրի «Համլետ»-ի միջև:

Էլիզաբեթյան թատրոնի կարևորագույն աղբյուրներից մեկում՝ թատերական իմպրեսարիո Ֆիլիպ Հենսլոյի (մոտ 1550–1616) «Օրագրում», 1594 թ. հունիսի 9 ամսաթվով գրանցված է «Համլետ» վերնագրով մի պիեսի ներկայացում: Այն համատեղ բեմադրել են «Լորդ ծովակալի մարդիկ» ու «Լորդ սենեկապետի մարդիկ»²⁰ Նյուինգթոն Բաթթսի (որ նախկինում գյուղ էր, իսկ այժմ՝ Լոնդոնի թաղամաս) թատրոնում, և Հենսլոն այդ ներկայացումից վաստակել է 8 շիլլինգ²¹ (այսինքն՝ բեմադրությունը նրան առանձնապես խոշոր շահույթ չի բերել): Իսկ երբ մի քանի օր հետո, հունիսի 15-ից, երկու թատերախմբերը դադարել են համատեղ ներկայացում տալ, «Լորդ սենեկապետի մարդիկ» ըստ երևույթին շարունակել են այդ «Համլետ»-ը բեմադրել «Թատրոն»-ում²², ուր նրանք հանդես են եկել՝ մինչև 1599 թ. «Գլորուս» տեղափոխվելը: Սա հաստատվում է երկու տարի անց, երրորդ կարևոր վկայությամբ:

1596 թ. մեկ այլ «համալսարանական ուղեղ»՝ թատերագիր ու պամֆլետիստ Թոմաս Լոդջը (մոտ 1557–1625), հրատարակում է «Խելքի թշվառությունը» (*Wits Miserie*) բառերով սկսվող մի երկար վերնագրով պամֆլետ, որտեղ խոսում է մարդկային տարբեր հատկանիշներ մարմնավորող սատանաների մասին: Նրանցից մեկը, գրում է Լոդջը, «նույնքան գունատ

¹⁹ *Hamlet*, ed. Harold Jenkins, p. 83–85.

²⁰ Թատերախումբը, որի անդամ էր Շեքսպիրը որպես դերասան, թատերագիր ու բաժնետեր, 1594 թ. մայիսից մինչև 1603 թ. մայիսի 19-ը կոչվել է «Լորդ սենեկապետի մարդիկ» (Lord Chamberlain's Men): Այնուհետև, երբ Զեյմս (Հակոբ) I-ը նրանց առել է իր հովանավորության տակ, նրանք կոչվել են «Թագավորի մարդիկ» (King's Men): Մրցակից թատերախումբը, որ նույնպես գործել է 1594 թ. մայիսից, կոչվում էր «Լորդ ծովակալի մարդիկ» (Lord Admiral's Men), իսկ հետագայում հայտնի էր նաև ուրիշ անուններով (The Oxford Companion to Shakespeare, ed. Michael Dobson & Stanley Wells, reprinted with corrections, Oxford, 2008 [first published 2001], p. 71–72): Շեքսպիրի թատերախմբի մասին մանրամասն տե՛ս Andrew Gurr, *The Shakespeare Company, 1594–1642*, Cambridge, 2011 (first published 2004):

²¹ *Henslow's Diary*, ed. R. A. Foakes, second edition, Cambridge, 2002 (first published 1961), p. 21.

²² Հմմտ. *Hamlet*, ed. George R. Hibbard, p. 13:

տեսք ունի, ինչքան այն ուրվականի դիմակը, որը “Թատրոն”-ում այնպես խղճալիորեն, ոստրեավաճառ կնոջ նման գոռում էր。”Համլետ, վրեժ լուծիր” » (looks as pale as the visard of y^e ghost, which cried so miserally at y^e Theator, like an oisterwife, Hamlet revenge²³):

Սրանք են, ահա, այսպես կոչված «Նախա-Համլետ»-ի մասին մեզ հասած վկայությունները: Այն ողբերգություն էր, որի մեջ կային «ողբերգական ճառեր» և արդեն հանդես էր գալիս գունատ դիմակով մի ուրվական՝ «Համլետ» անունով իր որդուն սրտաճմլիկ ճիչով մղելով վրեժի: Այլ տեղեկություն չունենք. «Նախա-Համլետ»-ը չի պահպանվել, ուստի այդ պիեսի բովանդակության մասին ամեն մի ուրիշ դատողություն չի կարող ենթադրությունից ավելին լինել: Երևում է՝ այն երբեք չի հրատարակվել, այլ միայն բեմադրվել է: Պարզ է նաև, որ «Նախա-Համլետ»-ը Նեշի ու Լոդջի վրա ծիծաղելի, անհեթեթ պիեսի տպավորություն է թողել: Թե ինչ աստիճանի է նրանց կարծիքն օբյեկտիվ կամ սուբյեկտիվ, չենք կարող որոշել: Մասնագետներից ոմանք, ինչպես ասվեց, այն վերագրում են Թոմաս Քիդին, սակայն կա նաև տեսակետ, թե «Նախա-Համլետ»-ի հեղինակը հենց ինքը՝ Շեքսպիրն էր և թե դա նրա երկի մի նախնական տարբերակ էր²⁴: Երկու կարծիքն էլ վերջնականապես ընդունելու կամ հերքելու բավարար փաստական հիմք չկա: Ուստի, վերադառնալով հիշյալ երկրորդ հարցին, նշենք, որ եթե այն գրել է Քիդը կամ մեկ ուրիշը, ուրեմն Շեքսպիրն առնվազն Ուրվականին ու նրա վրեժի կոչը փոխառել է «Նախա-Համլետ»-ից՝ այդ աղբյուրն օգտագործելով կա՛մ հիշողությամբ՝ բեմից իր լսածի հիման վրա, կա՛մ էլ ձեռագիր վիճակում:

Վերջապես, անհրաժեշտ է նաև ավելացնել, թե գոյություն ունի բանասերների ուշադրությունը երկար զբաղեցրած մի ուրիշ խնդիր ևս. «Նախա-Համլետ»-ի, Քիդի «Իսպանական ողբերգության» ու «Համլետ»-ի փոխհարաբերությունը: Եվ սա է հաջորդ ենթագլխի նյութը:

4) «Իսպանական ողբերգություն»

Տաղանդավոր թատերագիր Թոմաս Քիդի մասին քիչ կենսագրական տվյալներ կան: Հայտնի է, սակայն, որ նա դաժան վախճան է ունեցել: 1593 թ. մայիսի 11-ին, Լոնդոնում այլազգի բողոքական փախստականների դեմ

²³ William Shakespeare, *Hamlet: The New Variorum Edition*, ed. Horace Howard Furness, 2 vols., New York, 2000 (first published 1877), vol. 2, p. 9.

Примечателен тот факт, что причина частого обращения Льюиса к религиозной тематике кроется в его личном опыте, и для того, чтобы понять и объяснить внутренний посыл произведений Льюиса, необходимо, в первую очередь, познакомиться с его личностью. Пройдя долгий путь становления от атеиста к проповеднику, он наконец пришел к истинному содержанию веры, заключенной, казалось бы, в простых словах — любовь и добро. Эту мысль Льюис на протяжении всей своей жизни стремился донести до детей и взрослых, и для этой цели он остановил свой выбор на жанре «сказка». Как говорил сам автор:

¹ Липовецкий М.Н. «Поэтика литературной сказки». Свердловск; Изд-во Уральского университета. 1992. С. 3.

«Сказка — самый подходящий жанр, чтобы выразить то, что хочешь сказать»².

Нельзя не согласиться с выше указанным высказыванием Льюиса. Будучи изначально ориентированной на детскую аудиторию, сказка несет в себе так же скрытый смысл и «если смотреть на сказку как на сказку, как в детстве», как справедливо утверждал Евгений Шварц, «то можно упустить подлинное значение слов, высказанных автором для того, чтобы открыть, сказать во всю силу, во весь голос то, что думаешь»³.

В «Хрониках Нарнии» центральной фигурой является образ Аслана — могущественного льва. Этот образ Льюисом был выбран не случайно. Как известно, лев является символом божественной, солнечной энергии, воплощением королевской власти, силы, храбрости, мудрости, справедливости, покровительства и защиты⁴. Его устами автор учит состраданию, терпению и великой мудрости прощения, как учит Христос в молитве: «...И прости нам долги наши, как и мы прощаем должникам нашим»⁵.

В образе льва мы находим скрытое сопоставление его с Творцом. Первая глава Книги Бытия повествует о сотворении мира. Бог сотворил Вселенную из ничего — Словом Своим, Божественной волей. «В начале сотворил Бог небо и землю. Земля же была безводна и пуста, и тьма над бездною, и Дух Божий носился над водою. И сказал Бог: да будет свет. И стал свет. И увидел Бог свет, что он хорош, и отделил Бог свет от тьмы. И назвал Бог свет днем, а тьму ночью»⁶.

Аслан создает мир Нарнии. Он творит песней, расхаживая взад и вперед величавой поступью по пустынной земле, и от этой прекрасной и торжественной песни черная и глубокая тьма отступает, и на небе начинают сиять многие тысячи светлых точек – звезды, созвездия, планеты. Голос Аслана, «Первый Голос»⁷, как его именует Льюис, густой и глубокий, вызвал их к жизни. Голос на земле звучит все громче, все торжественней и чудеса продолжают. В последующем повествовании о сотворении Нарнии можно проследить аналогичную хронологию событий, как и при сотворении Мира по книге Бытия.

² Lewis C.S. «Of Other Worlds: Essays and Stories. *On Three Ways of Writing for Children*». New York; Pub. Mariner Books. 2002. P. 22.

³ Шварц Е. «Обыкновенное Чудо». Москва; Изд-во ЭКСМО. 2008. С. 555.

⁴ Тресиддер Дж. Словарь символов. Москва; Изд-во ФАИР-ПРЕСС. 1999. С. 188.

⁵ Евангелие от Матфея. гл. 6:9-10.

⁶ Книга Бытие. гл. 1:1-31, гл. 2:1-3.

⁷ Lewis C.S. «The Magician's Nephew». New York; Pub. Harper Collins. 1994. P. 45.

Ту же сюжетную линию мы можем обнаружить и в произведении Джона Рональда РуэлаТолкина «Сильмариллион». В данном произведении описывается сотворение мира, которое произошло с помощью нескольких музыкальных тем, предложенных Эру Илуватаром. Эру Илуватар в произведении Джона Р. Р. Толкина является Богом-Творцом, который создал Айнур и Эа (Вселенную).

Таким образом, можно утверждать о том, что и Толкин и Льюис, представляя себе сотворение мира, отталкивались от концепции, изложенной в Евангелие от Иоанна: «В начале было Слово, и Слово было у Бога, и Слово было Бог. Оно было в начале у Бога. Все чрез Него начало быть, и без Него ничто не начало быть, что начало быть»⁸. В случае Аслана и Эру, Слово трансформируется в Музыку, Песню.

Однако, в эпизоде о сотворении мира, можно так же проследить глубокие познания Льюиса в античной философии. Льюис ссылается на учение Платона о гармонии сфер. Музыку обычно связывали с происхождением самой жизни. Отсюда и легенды о происхождении мира. Платон полагал, что музыкальные и математические законы сформированы космосом и что планеты, двигаясь и взаимодействуя друг с другом, создают божественную гармонию, так же, как высота звуков меняется в зависимости от того, какие струны музыкального инструмента вибрируют⁹.

Свидетелями чуда созидания Нарнии поневоле становятся герои повести «Племянник чародея». Они с удивлением и безмерным восхищением наблюдают за происходящим. В этом эпизоде следует обратить внимание на слова извозчика, так как в них заложен очередной посыл Льюиса: «Чудо-то какое дивное, знал бы я раньше, что такое бывает, другим бы был человеком», — восклицает извозчик⁷.

По нашему мнению, Льюис говорит об истинной, абсолютной вере человека в то, что наш мир это творение Бога, а не следствие биологических или физических процессов. Такая вера не нуждается в каких-либо доказательствах.

В повестях проводится и сравнение Аслана с образом Христа. Общественное служение Христа Спасителя начинается на берегу реки Иордан. Путешествуя по дорогам Галилеи, Господь собирает вокруг Себя множество народа, уча их в синагогах и проповедуя Евангелие, и исцеляя всякую болезнь и всякую немощь в людях: «И прошел о Нем

⁸ Евангелие от Иоанна. гл. 1:1-3.

⁹ Тресиддер. Дж. Словарь символов. Москва; Изд-во ФАИР-ПРЕСС.1999. С. 231.

слух по всей Сирии...И следовало за Ним множество народа из Галилеи и Десятиградия, и Иерусалима, и Иудеи, и из-за Иордана»¹⁰.

Подобно Иисусу, Аслан начинает свое служение у Великой реки. Сопровождаемый детьми, пробудившимися деревьями и лесными созданиями, он освобождает жителей города Беруна. Они присоединяются к Аслану, оставив свои дома, свою старую жизнь, чтобы служить ему. К свободе и духовному обновлению стремятся и животные Нарнии. Они бегут с ферм, чтобы так же присоединиться к Аслану. Грустные старые ослы, никогда не знавшие радости, снова становятся молодыми, цепные псы рвут с себя цепи, лошади разбивают свои телеги и рысью бегут за Асланом, находя в нем, творце Нарнии, спасение и защиту.

С религиозной точки зрения, образы животных вполне узнаваемы и объяснимы. Как известно, в христианской символике каждый из указанных образов имеет свое определение. Так, например, собака является символом преданности, защиты, бдительности, и символизирует миссию охраны христианских догм, лошадь символизирует победу, восхождение, мужество и великодушие, осел же в христианской традиции является эмблемой смирения, терпения и бедности¹¹.

Таким образом, следуя за Асланом, жители Нарнии обретают не только физическую, но и духовную свободу. Здесь обнаруживается параллель с Посланием к Римлянам Апостола Павла, где говорится: «Нет ныне никакого осуждения тем, которые во Христе Иисусе живут не по плоти, но по духу, потому что закон духа жизни во Христе Иисусе освободил меня от закона греха и смерти»¹².

Следовать за Асланом есть добровольный выбор жителей Нарнии. Это доказывают слова Аслана: «Создания, я дарю вам вас самих. Я навеки отдаю вам землю этой страны — Нарнии. Я отдаю вам леса, плоды, реки. Я отдаю вам звезды и самого себя»¹³.

Ни это ли является проявлением высшей любви и преданности Аслана — явить себя и даровать своим создания свободу воли. И только от выбора «нарнийцев» зависит в какую сторону склонятся чаши весов и будет ли открыто их сердце для восприятия добра.

В словах Аслана четко прослеживается одна из главных концепций христианства — концепция свободы выбора, дарованная человечеству

¹⁰ Евангелие от Матфея. гл. 4:23–25.

¹¹ Тресиддер Дж. Словарь символов. Москва; Изд-во ФАИР-ПРЕСС. 1999. С. 345, 202, 260.

¹² Посланием к Римлянам Апостола Павла. гл. 8:1-3

¹³ Lewis C.S «The Magician's Nephew» New York; Pub. Harper Collins. 1994. P. 53.

¹⁴ Там же. P. 23

самим Господом Богом. Было чрезвычайно важно, чтобы в деле искупления греха, человек добровольно бы принял непосредственное участие, так как без его соучастия спасение, как бы парадоксально это не звучало, рассматривалось бы принудительным.

Герои «Хроник Нарнии» постоянно стоят перед необходимостью выбора. Например, в «Племяннике Чародея» Поли, в результате подлых уловок дядюшки Эндрю, надевает волшебное желтое колечко и в тот же миг исчезает. Для того чтобы спасти своего единственного друга, Дигори, как выясняется, должен отправиться вслед за ней в неизведанную страну, но для этого он должен надеть второе, оставшееся волшебное колечко. Решение это оказалось не из легких. Оно потребовало от Дигори мужества и храбрости, ведь он отправлялся, по сути, в неизвестность, не имея ни малейшего понятия какие испытания его там ожидают. В той же повести Дигори и Поли стоят перед трудным выбором. Как было отмечено ранее, волшебные кольца переносят детей в заколдованный замок. С порога огромной пустой залы Дигори и Поли замечают в дальнем ее конце соединенные арками колонны. Осторожно добравшись до них, они наталкиваются на широкую низкую колонну. На ней лежал золотой молоток, а рядом на золотой дужке висел колокол, тоже золотой. На каменной колонне были высечены непонятные надписи. Вскоре Дигори смог разобрать их: «Выбирай, чужеземец! Если ты позвонишь в колокол – пеняй на себя. Если не позвонишь – терзайся всю жизнь».

Как мы видим, оба героя оказываются перед выбором — спасти друга, или отвернуться от него, удовлетворить, или побороть собственное любопытство.

В повести «Лев, Колдунья и Платяной шкаф» можно обнаружить четкую параллель между описанным автором убийством Аслана и казнью Иисуса Христа.

Чтобы снять вину с Эдмунда за его предательство, Аслан заключает сделку с Белой Колдуньей и встает на жертвенный стол вместо Эдмунда. Он подвергается невыносимым физическим и моральным страданиям, оставаясь один на один со своей болью, обидой и разочарованием. Не проронив ни единого слова в ответ на насмешки и ухмылки Колдуньи, он молча принимает смерть от рук Колдуньи на Каменном Столе. Подобно Христу, который пожертвовал своей жизнью ради искупления грехов человечества, но прежде всего во искупление первородного греха, Аслан жертвует собой ради спасения Эдмунда.

Героини повести — Люси и Сьюзен, становятся очевидцами «казни» Аслана. Им было слишком тяжело смотреть на унижения Аслана. Как только стихают последние звуки этого ужасного действия, Сьюзен и

Люси прокрадываются на вершину холма к Каменному Столу. Они опускаются на колени у истерзанного, опутанного веревками бездыханного тела льва, целуют и гладят его прекрасную гриву, вернее, то, что от нее осталось. Люси и Сьюзен глубоко скорбят и оплакивают смерть Аслана. В этом так же обнаруживается аналогия с известным евангельским сюжетом, где упоминается о том, что подле Креста распятого Иисуса оставались лишь преданные ему Пречистая Его Мать, жены-мироносицы и любимый ученик Иоанн.

В той же повести «Лев, Колдунья и Платяной шкаф» Льюис проводит аналогию с евангельской историей о Воскресении Христа. Как известно, Иисус Христос воскрес из мертвых на третий день после казни: «В первый же день недели, очень рано, неся приготовленные ароматы, пришли они (жены-мироносицы) ко гробу, и вместе с ними некоторые другие; но нашли камень отваленным от гроба. И, войдя, не нашли тела Господа Иисуса. Когда же недоумевали они о сем, вдруг предстали перед ними два мужа в одеждах блистающих. И когда они были в страхе и наклонили лица свои к земле, сказали им: что вы ищите живого между мертвыми? Его нет здесь: Он воскрес; вспомните, как Он говорил вам, когда был еще в Галилее, сказывая, что Сыну Человеческому надлежит быть предану в руки человеков грешников, и быть распяту, и в третий день воскреснуть»¹⁴.

Как было сказано выше, Люси и Сьюзен остаются подле Аслана всю ночь. Утром, когда начинает рассветать, девочки замечают, что Каменный Стол рассечен глубокой трещиной на две половины, а Аслан исчез. В тот миг у них за спиной раздается громкий голос. Обернувшись, они видят, что перед ними, сверкая на солнце, потряхивая гривой стоит Аслан. Аслан воскресает из мертвых по закону «древней магии», который гласит: «Когда вместо предателя на жертвенный Стол по доброй воле взойдет тот, кто ни в чем не виноват, кто не совершал никакого предательства, Стол сломается и сама Смерть отступит перед ним»¹⁵.

В «Хрониках Нарнии» Бог Отец, Иисус и Святой Дух фигурируют в одном лице — в образе Аслана. По нашему мнению, Льюис этим делает ссылку на основное положение христианства — Святую Троицу, упомянутую в Новом Завете. Каждое Лицо Пресвятой Троицы есть Бог.

Следует отметить, что в тексте Ветхого Завета также обнаруживается достаточное число указаний на множественность или

¹⁴ Евангелие от Луки. гл. 24: 1-7

¹⁵ Lewis C.S. «The Lion, The Witch and The Wardrobe». New York; Pub. Harper Collins. 1994. P. 69.

троичность Лиц в Боге. Например: «И сказал Бог: сотворим человека по образу Нашему и по подобию Нашему»¹⁶. Когда Аврааму явился Бог в виде трех странников, Авраам, выйдя им навстречу, поклонился и обратился к ним со словом «Владыка!» в единственном числе. Узрев трех, он уразумел таинство Троицы, а поклонившись как бы единому, исповедал Единого Бога в Трех Лицах¹⁷.

В Евангелие от Иоанна Иисус Христос свидетельствует: «Я и Отец — одно. Если Я не творю дел Отца Моего, не верьте Мне; а если творю, то, когда не верьте Мне, верьте делам Моим, чтобы узнать и поверить, что Отец во Мне и Я в Нем»¹⁸.

В Первом Послании Иоанна так же упоминается о единении Бога Отца, Иисуса и Святого Духа: «Сей есть Иисус Христос, пришедший водою и кровию и Духом, не водою только, но водою и кровию, и Дух свидетельствует о Нем, потому что Дух есть истина. Ибо три свидетельствуют на небе: Отец, Слово и Святой Дух; и Сии три суть едино»¹⁹.

Таким образом, Льюис последовал евангельской концепции Святой Троицы и представил Аслана, как единение всех этих трех Божественных энергий. Как Бог Отец, Аслан сотворил мир Нарнии. Как Сын он был принесен в жертву ради спасения человека. Об Аслане, как о Божественном Духе, Льюис указывает во многих эпизодах. Например, в повести «Лев, колдунья и платяной шкаф» вечная зима, в которую была погружена Нарния из-за чар Белой Колдуньи, начинает отступать. Пробуждается природа Нарнии, все чувствуют присутствие Аслана. От лица Аслана многим героям указания дает «Голос». В Нарнии от теплого дыхания Аслана расцветают деревья, оживают заколдованные статуи и т.д.

Еще один пример сложной аллюзии обнаруживается в повести «Племянник чародея». Дигори и Полли, по поручению Аслана, отправляются в дальнее путешествие за яблоком из сада, расположенного на вершине крутого зеленого холма в диком Западном крае. Из семян того яблока Аслан был намерен посадить дерево, которое долгие годы охраняло бы Нарнию от Колдуньи. Пройдя через золотые ворота, Дигори попадает в сад, который наполнен дивным ароматом. Он сразу распознает нужное дерево: во-первых, оно росло в самой середине сада, а во-вторых, было сплошь увешано большими

¹⁶ Книга Бытие. гл. 1:26.

¹⁷ Там же. гл. 18:1-3.

¹⁸ Евангелие от Иоанна. гл. 4:30, 37-38.

¹⁹ Первое Послание Иоанна. гл. 5:6-7.

серебряными яблоками. Около дерева стоит Колдунья. Губы у нее перемазаны соком, и Дигори сразу догадался, что она отведала яблоко. Он тут же бежит к воротам, но ведьма настигает его:

— Я о твоём поручении знаю — говорит она. — Ты сорвал яблоко, спрятал в карман и теперь отнесешь льву, чтобы он его съел. Простак, простак! Ты знаешь, что это за яблоко? Я тебе скажу. Это же яблоко молодости, плод вечной жизни! Я знаю, ибо я его отведала, и теперь чувствую, что никогда не состарюсь и не умру. Съешь его, мальчик, съешь, и мы оба будем жить вечно, и станем королем и королевой здешнего мира – а если захочешь вернуться в свой, – так твоего²⁰.

Не трудно догадаться, что вместе с героями повести — Дигори и Полли, Льюис переносит нас в Едемский сад, в центре которого растет дерево жизни и дерево познания добра и зла, плодами которого дьявол искушал Еву²¹. Хотя Господь запретил первому человеку — Адаму, вкушать плоды с дерева познания добра и зла, плоды дерева жизни запрещены не были²². Но, после того, как Адам и Ева, искушенные змеем поступили вопреки единственному запрету и отведали яблоко, Бог выслал их из сада Едемского, чтобы те, познавшие добро и зло, не додумались отвесть плодов с дерева жизни и не стали бы жить вечно. На востоке у сада Господь поставил Херувима и пламенный меч обращающийся, чтобы охранять путь к дереву жизни²³. Вкусив от запретного плода, Ева лишила себя и в своем лице весь человеческий род права на бессмертие. Таким образом, яблоко приобрело и положительное, и отрицательное значение, применительно к понятию «познание».

Надо отметить, что яблоко, как символ вечной молодости и бессмертия, встречается в мифологии многих древних народов. Так, например, этот образ мы встречаем в русской народной сказке о молодильных яблоках и живой воде. Яблокам в этой сказке так же приписывается особая сила, способная вернуть молодость.

В греческой мифологии говорится о Саде Гесперид. Геспериды, дочери Атласа и Геспериды, обитали на счастливых островах, по соседству с Горгонами. В саду, где они жили и который охранялся драконом Ладонем, росли золотые яблоки вечной молодости —

²⁰ Lewis C.S. «The Magician's Nephew». New York; Pub. Harper Collins. 1994. P. 73-74.

²¹ Книга Бытие, гл. 2:9.

²² Там же. гл. [2:16-17](#).

²⁴ Там же. гл. 3:22-24.

свадебный подарок, поднесенный Геей Гере. Достать эти яблоки было двенадцатым подвигом Геракла. Геракл не поддался искушению попробовать яблоки и обрести бессмертие. Он сорвал их для Эврисфея и тем самым освободился от службы у него и мог вернуться в семивратные Фивы.

Дигори, как и Гераклу, удалось противостоять искушению. Он отказался вкусить яблоко и обрести вечную молодость и власть над всеми. Он не воспользовался волшебной силой яблок даже для исцеления своей больной матери. Он был обязан принести яблоко Аслану и с достоинством справился с заданием. В награду своей преданности, Дигори получил желанное яблоко от самого Аслана.

Таким образом, в «Хрониках Нарнии» Льюис, на уровне библейских аллюзий, раскрывает основные истины христианской веры. Обработывая библейские сюжеты, Льюис делает их доступными пониманию читателя, что свидетельствует о высшем мастерстве автора. Как мы убедились, во многих эпизодах «Хроник Нарнии» обнаруживаются параллели с библейскими персонажами. В образе Аслана Льюис обобщает все духовные характеристики, свойственные личности Христа. С удивительной выразительностью он рисует своих персонажей, передает их мысли и душевные переживания. Подобно ученикам Христа, главные герои «Хроник Нарнии» во всем следуют за Асланом, оставаясь верными ему до конца. Благодаря данному произведению мы имеем возможность ознакомиться с религиозными взглядами Льюиса, оценить роль религии в его творчестве. Данное произведение так же позволяет нам понять насколько важно для Льюиса воспитание молодого поколения в христианских традициях.

Gajane Karapetyan

THE THEME OF CHRISTIANITY IN «THE CHRONICLES OF NARNIA» BY C.S LEWIS

For many centuries, biblical stories inspired the representatives of various areas of art. In this sense, «The Chronicles of Narnia» by C.S Lewis, Irish writer, scholar and theologian, is very significant. «The Chronicles of Narnia» belong to the genre of the literary tale as it bears the stamp of a unique creative individuality of the author, unlike the folk tale. However, the chronicles can be roughly classified as well to the works of a religious nature, as Lewis often uses allusions to biblical stories here. The analysis of two stories from «The Chronicles of Narnia» – «The Magician's Nephew» and «The Lion, the Witch the Wardrobe» showed that by interpreting biblical stories through the tale, Lewis makes them available to the reader's understanding, which is a vivid demonstration of the author's deep knowledge and high professional skills. In many episodes of «The Chronicles of Narnia» parallels

with the biblical characters can be found. For instance, in the image of Aslan Lewis summarizes all the spiritual characteristics, peculiar to the person of Christ. Thus, through «The Chronicles of Narnia» we have an opportunity to get acquainted with the religious views of Lewis and to evaluate the role of religion in his works and life.

Գայանե Կարապետյան

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՔԼԱՅՎ ՍԹԵՅՓԼԶ ԼՅՈՒՍԻ «ՆԱՐՆԻԱՅԻ ՔՐՈՆԻԿՆԵՐ» ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Դարեր շարունակ աստվածաշնչյան առակները ոգեշնչել են տարբեր բնագավառի արվեստագետներին: Այս առումով առանձնանում է իռլանդացի գրող, գիտնական և աստվածաբան Քլայվ Սթեյվիլդ Լյուիսի «Նարնիայի քրոնիկներ» ստեղծագործությունը: Այն պատկանում է «գրական հեքիաթ» ժանրին, քանի որ կրում է հեղինակի ստեղծագործական անհատականության յուրահատուկ դրոշմը՝ ի տարբերություն ժողովրդական հեքիաթի: «Նարնիայի քրոնիկներ»-ը կարելի է պայմանականորեն դասել նաև կրոնական ստեղծագործությունների շարքին, քանի որ հեղինակը հաճախ է հղում կատարում աստվածաշնչյան դրվագներին: «Նարնիայի քրոնիկներ» շարքից երկու պատմվածքների՝ «Հրաշագործի եղբորորդին» և «Առյուծը, կախարոջը և զգեստապահարանը», վերլուծությունը ցույց է տվել, որ Լյուիսը, ներկայացնելով աստվածաշնչյան առակները հեքիաթի միջոցով, դրանք առավել մատչելի է դարձնում ընթերցողի ընկալման համար, ինչը վկայում է հեղինակի խորը գիտելիքների և մասնագիտական հմտությունների մասին: Բազմաթիվ զուգահեռներ կարելի է անցկացնել աստվածաշնչյան կերպարների և «Նարնիայի քրոնիկներ»-ի հերոսների միջև: Այսպես օրինակ, Լյուիսը, Ասլանին պատկերելիս, նրա կերպարում ամփոփում է այն բոլոր հոգևոր որակներն ու առանձնահատկությունները՝ բնորոշ Քրիստոսի անձին: Այսպիսով, վեպի շնորհիվ մենք հնարավորություն ունենք ծանոթանալու Լյուիսի կրոնական հայացքներին, գնահատել քրիստոնեական հավատքի դերն ու նշանակությունը նրա ստեղծագործություններում ու կյանքում:

**Է. ՕԼԲԻԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻ ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հանգուցաբառեր՝ Օլբի, Աբսուրդի թատրոն, պոստմոդերնիզմ, դրվագայնություն, սինթեզ, «Երեք բարձրահասակ կանայք», «Այծը, կամ ով է Սիլվիան»

Սույն հոդվածը նվիրված է 20-րդ դարի ամերիկացի թատերագիր Էդվարդ Օլբիի ուշ շրջանի ստեղծագործությունների վերլուծությանը:

Իր ստեղծագործական ուղին սկսելով որպես Աբսուրդի թատրոնի հետևորդ՝ հետագայում հեղինակը կրել է պոստմոդերնիզմի զգալի ազդեցությունը, ինչն առավել ցայտուն դրսևորվել է «Երեք բարձրահասակ կանայք» և «Այծը կամ ով է Սիլվիան» պիեսներում:

20-րդ դարի 50-60-ականների հաջողությունից հետո, երբ հրատարակվեցին և բեմադրվեցին «Ինչ էր պատահել գազանանոցում» /1958 թ./, «Բեսսի Սմիթի մահը» /1959 թ./, «Ամերիկյան երազանք» /1960 թ./, «Ով է վախենում Վրջինիա Վուլֆից» /1961-62 թթ/ պիեսները, Օլբիի՝ ավելի ուշ շրջանի ստեղծագործությունները սուր քննադատության արժանացան, քանի որ, ըստ մասնագետների, զուրկ էին նորարարությունից: Այսպիսով, Օլբիին համարեցին իրեն սպառած: Սակայն «Երեք բարձրահասակ կանայք» պիեսը, որը հետագայում արժանացավ Պուլիտցերյան մրցանակի, Օլբիին վերադարձրեց քննադատների ուշադրության կենտրոն:

Երկու գործողությունից բաղկացած պիեսը սկսվում է Օլբիի ստեղծագործություններին հատուկ առեղծվածով: Այն պատմում է անուններից զուրկ երեք կանանց մասին: Օլբին նրանց կոչում է համապատասխանաբար՝ Ա, Բ և Գ: Ա-ն իննսունմեկամյա հարուստ կին է, Բ-ն միջին տարիքի հիսուննանց կին է, որն օգնում է Ա-ին: Գ-ն քսանվեցամյա օրիորդ է, որը նույնպես աշխատում է Ա-ի մոտ՝ որպես փաստաբան:

Աստիճանաբար բացահայտելով առեղծվածը՝ Օլբին օգտագործում է բանալի բառեր և արտահայտություններ՝ դրանք համադրելով պոստմոդերնիզմին բնորոշ հնարքի՝ դրվագայնության միջոցով: Պիեսն իրենից ներկայացնում է նման առեղծվածային դրվագներից բաղկացած կոլաժ, որի մեջ ընթերցողը կամ հանդիսատեսն առանձնացնում է հիմնական առեղծվածը՝ այս երեք կանայք իրականում մի կնոջ տարբեր տարիքներն են: Կարելի է ասել, որ նրանք կնոջ տարբեր ֆրագմենտներն են: Գ-ն կինն է՝ քսանվեց տարեկանում: Ժամանակի ընթացքում նա ավելի սթափ է դարձել և դադարել է ապրել պատրանքներով՝ վերածվելով Բ-ի: Դա կատարվել է այն ժամանակ, երբ նա իմացել է ամուսնու դավաճանությունների մասին և ինքն էլ սկսել է դավաճանել: Որպես

ավանդապաշտ կին, նա չի կարողացել ընդունել որդու՝ նույնասեռական լինելու փաստը, և օրերից մի օր որդին հեռացել է տանից: Կնոջը՝ իր վերջնական տեսքով և բնույթով, մենք տեսնում ենք Ա-ի կերպարում: Ամուսինն արդեն ողջ չէ, և, չնայած նրանց բոլոր տարածայնություններին, սիրո բացակայությանն ու փոխադարձ դավաճանություններին, նրանք միասին էին: Ա-ն իր խոսքում նշում է, որ դուրս է եկել այն տարիքից, երբ վարդագույն ակնոցներով էր նայում կյանքին, և հասկացել է, որ բարեկեցիկ կյանքի համար ինքը պետք է զոհաբերություն կատարի: Սրան դեմ է Գ-ն, որը շարունակում է կյանքի մասին ռոմանտիկ պատկերացումներ ունենալ և չի կարողանում հասկանալ՝ ինչու է ինքը ամուսնացել, եթե պիտի դավաճաներ:

Պիեսը կարելի է համարել հոգեբանական, քանի որ ամեն ինչ կատարվում է կնոջ ենթագիտակցության մեջ, սակայն Օլբին այստեղ բարձրացնում է մի շարք հասարակական խնդիրներ, օրինակ, մարմնավաճառությունը, ռասիզմը, նույնասեռականությունը: Օլբիի ստեղծագործությունը կրում է Ջորջ Բերնարդ Շոուի «Տիկին Ուորենի մասնագիտությունը» պիեսի ակնհայտ ազդեցությունը: Պիեսի գլխավոր հերոսուհին՝ տիկին Ուորենը, ու նրա դուստր Վիվին կարծես «Երեք բարձրահասակ կանայք» պիեսի հերոսուհիներ Ա-ի և Գ-ի նախատիպերը լինեն: Ինչպես տիկին Ուորենի և Վիվիի դեպքում, այստեղ էլ տեսնում ենք Ա-ի և Գ-ի միջև հակամարտությունը: Ա-ն, չնայած մարմնավաճառ չէ, սակայն իր դիրքին և ունեցվածքին հասնելու համար շատ բաներ է զոհաբերել: Գ-ն, ինչպես և Վիվին, դա չի ընդունում և անընդհատ կրկնում է, որ երբեք նրա նման չի դառնա:

Այսպիսով, Օլբին միախառնում է հոգեբանական դրաման հագեցնում է ռեալիստական թատրոնին և Աբսուրդի թատրոնի բնորոշ տարրով՝ ստեղծելով յուրօրինակ սինթեզ:

Մեր կարծիքով՝ պիեսը կարելի է դիտարկել նաև այլ տեսանկյունից: Օլբին իր յուրաքանչյուր կերպարով ներկայացնում է մեկ գրական ուղղություն: Նա, կարծես, ռոմանտիզմի, ռեալիզմի և աբսուրդի թատրոնի հերոսներին տեղափոխում է պոստմոդեռնիստական հարթություն և ցույց տալիս նույն հարցերի վերաբերյալ նրանց հայացքներն ու նույն դրության մեջ նրանցից յուրաքանչյուրի վարվելակերպը:

Այսպիսով, Գ-ն ռոմանտիկական հերոս է, ով չի ցանկանում ընկալել իրականությունն ու փախչում է դրանից: Բ-ն մարմնավորում է ռեալիզմը, կյանքին նայում է սթափ, արձագանքում է իրականությանը: Ա-ն աբսուրդի թատրոնի գաղափարների կրողն է:

Պիեսն ունի անսպասելի ավարտ: Հերոսուհիներից յուրաքանչյուրը դուրս է գալիս բեմի կենտրոն և իր վերջին խոսքն է ասում: Վերջինը հանդես է գալիս Ա-ն, և պարզ է դառնում, որ արդեն քանի ամիս է՝ կինը կոմայի մեջ է, և հանդիսատեսը գալիս է այն եզրակացության, որ այս ամենն իրականում կատարվում է կնոջ ենթագիտակցության մեջ:

Այս պիեսում Օլբին պաշտպանում է Ֆրոյդի՝ ենթագիտակցականի մասին տեսությունը, ըստ որի ենթագիտակցականն ունի իր ուրույն ցանկություններն ու պատճառները, որոնք չեն կարող հայտնի լինել գիտակցականին: Ըստ այդմ, Օլբին առաջ է քաշում այն տեսակետը, որ, հավանաբար, կինը ենթագիտակցաբար պայքարում է իր «ես»-երի դեմ, փորձում է ինքն իր մեջ գտնել և բացատրել իր սխալներն ու հաշտվել ինքն իր հետ: Միևնույն ժամանակ, նրա մենախոսությունը կնոջ դերի, նշանակության և նրան՝ դավաճանության մղող դրդապատճառների մասին, իրականում կատարվում է նրա ենթագիտակցականում: Եվ գրողը հարց է բարձրացնում, թե արդյոք կինը գիտակցաբար կկարողանար նույն բանն ասել:

Պիեսը լի է մի շարք էքզիստենցիալիստական հարցադրումներով: Առաջին գործողության ընթացքում խոսվում է մահվան մասին, և շատ կարևոր է, թե ինչպես են երեք հերոսուհիները՝ երեք տարբեր սերունդերը, վերաբերվում դրան: Ա-ն անտարբեր է մահվան հանդեպ, նույնիսկ՝ հաշվի առնելով նրա հիվանդությունը, կարելի է ասել, որ նա ողջունում է մահը: Բ-ն՝ միջին տարիքի սերունդը, վախենում է մահվանից, քանի որ դեռ չի կարողանում ընդունել երիտասարդության կորուստը: Գ-ն՝ երիտասարդ աղջիկը, ոչինչ չգիտի մահվան մասին և չի էլ մտածում:

Պիեսում առկա է նաև սերունդների բախման խնդիրը, քանի որ հատկապես առաջին գործողության ընթացքում ակնհայտ է Ա-ի և Գ-ի միջև տարածայնությունը: Բ-ն, ով տարիքով ավելի մոտ է Ա-ին, ավելի հանդուրժող և հասկացող է: Ա-ն, որն արդեն պայքարել է, վերուվարներ է ունեցել կյանքում, շատ ավելի նյութապաշտ է դարձել, մինչդեռ Գ-ն, որի կյանքը դեռ առջևում է, զգացմունքայնորեն է վերաբերվում ամեն ինչին, հավատում է սիրո գոյությանը և սպասում է իր ապագա ասպետին:

Պիեսում կան մի քանի օժանդակող խորհրդանիշներ, որոնք կրկնվում են ամբողջ ընթացքում և, մեր կարծիքով, օգնում են հասկանալ դրա իմաստը: Այդ խորհրդանիշներից մեկը ձիերն են: Առաջին գործողության ընթացքում Ա-ն անընդհատ զառանցում է և պատմում, թե ինչպես է նա սիրել ձիարշավել: Ձիարշավներից մեկի ժամանակ է նա ծանոթանում իր սիրեկանի հետ, որն աշխատում է ձիարշավարանում: Այսինքն Ա-ի և Բ-ի համար ձին հանդիսանում է ազատության խորհրդանիշ, մինչդեռ Գ-ն, որը քննադատում է նրանց, սակայն որը նրանց մի մասն է կազմում, հայատարարում է, որ երբեք չի սիրել ձիերի և երբեք ձիարշավարան չի հաճախել: Այստեղից եզրակացնում ենք, որ կինը սկսել է ձիեր սիրել այն պահից, երբ դրանք կապել է ազատության և դրա հետ կապված հաճույքների հետ:

Մյուս խորհրդանիշը հասակն է, որն այստեղ միավորում է բոլոր երեք կանանց և միևնույն ժամանակ ցույց է տալիս նրանց տարիքը: Վերնագրում նույնպես տեսնում ենք «բարձրահասակ» բառը: Ա-ն իր հասակի մասին խոսելիս, շեշտում է, որ մի ժամանակ կար, որը ինքը բարձրահասակ էր, և սկսում է լաց լինել: Պարզ է, որ նա լաց է լինում ոչ

այնքան իր կորցրած հասակի մասին, որքան տարիքի, քանի որ սա նշանակում է, որ տարիքի հետ նա կորցրել է նաև իր բարձրահասակությունը: Գ-ն, ընդհակառակը, շեշտում է իր բարձրահասակ լինելն ու ասում, որ դրա համար տղամարդիկ իր վրա հաճախ ուշադրություն են դարձնում: Չնայած առաջին հայացքից Ա-ի ասածն ու վերնագիրը հանդիսատեսին զցում են շփոթության մեջ, քանի որ հակասում են միմյանց, սակայն վերնագիրը բացատրում է պիեսի իմաստը, քանի որ ակնարկում է, որ երեք կանայք, որոնք ունեն միևնույն հատկանիշը՝ բարձր հասակը, իրականում միևնույն մարդն են:

Օլբիի վերջին շրջանի ստեղծագործություններից առավել փորձարարականը «Այծը, կամ ով է Սիլվիան» պիեսն է:

Պիեսը պատմում է Մարտինի, Սթիվիի և նրանց դեռահաս որդի Բիլլիի կյանքից մեկ օրվա մասին, երբ նրանք հայտնաբերում են, որ իրենց հայրը՝ Մարտինը, սիրային կապի մեջ է ոմն Սիլվիայի հետ:

Մարտինն առավոտյան արթնանում է և պարզում, որ ոչինչ չի հիշում: Սթիվիի հարցերին նա չի կարողանում պատասխանել: Նա նույնիսկ չի հիշում, որ Բիլլին իր որդին է:

ՄԱՐԹԻՆ: Իսկ ինչ եթե ես ոչինչ չեմ հիշում:

ՍԹԻՎԻ: Չկա այդպիսի բան: Եթե դու Ալցհեյմերի հիվանդություն ունենաս և չհիշես, թե ով ես դու, ով եմ ես, ով է Բիլլին...

ՄԱՐԹԻՆ: Բիլլի՞ն:

ՍԹԻՎԻ: Վերջացրու¹:

Սթիվին լուրջ չի ընդունում ամուսնու վիճակը, նույնիսկ այն ժամանակ, երբ նա պատմում է ոմն Սիլվիայի մասին:

Հայտնվում է Ռոսը, որը Մարթինի մոտ ընկերն է և ընտանիքի բարեկամը: Նա նաև հեռուստահաղորդավար է, որին Մարթինն այդ օրը պետք է հարցազրույց տա՝ իր նախագծերից մեկի մասին: Սթիվին լքում է բեմը և Ռոսը, տեսնելով Մարտինի շփոթված վիճակը, ցանկանում է իմանալ, թե ինչ է պատահել: Վերջապես, Մարտինը պատմում է, որ կուրորեն սիրահարվել է: Բանն այն է, որ ընտանիքը ծրագրավորել էր տնակ գնել քաղաքից դուրս: Գյուղերից մեկում, տան փնտրտուքների ժամանակ, Մարտինը բարձրանում է կանաչ բլրի գագաթը և տեսնում Սիլվիային: Ռոսը կարծես թե ընդունում է այս պատմությունը, հասկանում է Մարտինին, քանի որ յուրաքանչյուր տղամարդ իր կյանքում գեթ մեկ անգամ այդպիսի «սիլվիաների» հանդիպել է:

Այս պիեսում, ինչպես նախորդում, կա առեղծված, սակայն, այստեղ առեղծվածը բացահայտվում է անմիջապես առաջին գործողության ընթացքում: Մարտինը ապշած Ռոսին պատմում է, որ իրականում Սիլվիան այժ է: Առաջին գործողությունը ավարտվում է այս լուրով:

¹ Albee E. The Goat or Who's Sylvia? The Collected Plays, Overlook Duckworth, 2003, NY, USA, p. 219.

Երկրորդ գործողությունը սկսվում է այն պահին, երբ Սթիվին Ռոսից նամակ է ստանում, որում նկարագրվում է այս բոլորը: Որպես ընտանիքի բարեկամ, Ռոսն իր պարտքն է համարում Սթիվին ամեն ինչ պատմել, քանի որ գտնում է, որ Մարտինը որոշակի խանգարումներ ունի. «...Որովհետև ես սիրում եմ քեզ, Սթիվի այնպես, ինչպես սիրում եմ Մարթինին, հարգում եմ երկուսիդ էլ և չեմ կարող լուռ մնալ այս ճգնաժամային պահին, երբ Մարտինի իմիջն է վտանգի տակ...»²

Երկրորդ գործողությունը մեծամասամբ բաղկացած է Սթիվիի և Մարտինի զրույցից, որի ընթացքում Մարտինը կրկնում է այն ամենը, ինչ պատմել էր Ռոսին, սակայն հիստերիայի մեջ ընկած Սթիվին նրա ամեն խոսքին որևէ բան է կոտրում: Այս գործողության ընթացքում ենք հանդիպում Բիլին, պարզվում է, որ նա նույնասեռական է, որը ծնողների համար նորությունն է: Մարտինը սրան լուրջ չի վերաբերվում, քանի որ կարծում է, որ որդին կմեծանա և կհասկանա, որ դրանք խաղեր են:

Մարտինը լիովին ընդունում է իր մեղքը և չի փորձում արդարանալ: Նա նույնիսկ ընդունում է, որ փորձել է «բուժվել», սակայն որոշ ժամանակ հետո հրաժարվել է այդ մտքից:

«Այնտեղ գտնվող բոլորը այնտեղ էին եկել, որովհետև ամաչում էին կամ խնդիրներ ունեին, իսկ ես ուղղակի այնտեղ էի, որովհետև ուզում էի իմանալ՝ ինչու են նրանք այնտեղ»³:

Այստեղ Օլբին բարձրացնում և հակադրում է երկու խնդիր՝ անասնապղծությունը և նույնասեռականությունը: Համեմատելով այս երկու խնդիրները՝ Օլբին շեշտում է Մարտինի վերաբերմունքը նույնասեռականության հանդեպ՝ այն համարելով կեղծ: Նա ցույց է տալիս, որ մի մարդ, որն ունի այնպիսի խնդիր, ինչպիսին անասնապղծությունն է, իրավունք չունի քննադատելու:

Սակայն այս ակնհայտ անասնապղծության շղարշի ներքո, Օլբին քննում է ողբերգության դերը ժամանակակից թատրոնում՝ այն համարելով աբսուրդային: Ինչպես գիտենք, Հին Հունաստանում ողբերգությունը (նոխազերգությունը) ծագել է Դիոնիսոսի պաշտամունքից: Բաքոսուիները յուրաքանչյուր տարի տոնում էին Դիոնիսոսի տոնը, այսպես կոչված, Բաքոսյան խրախճանքներով: Այս խրախճանքների գագաթնակետը միմեսիսն էր, որը բերում էր ինքնամաքրման: Առավոտյան, նրանք այլևս չէին հիշում, թե ինչ էին արել գիշերը, սակայն նրանք կարող էին գտնել կենդանիների դիակներ, որոնք ակնհայտ հուշում էին հանդիսանում:

Մարտինն իր խոսքում ասում է. «Լավ, լսիր ինձ: Այնպիսի տպավորություն էր, որ մի այլմոլորակային դուրս եկավ այժից և տարավ ինձ իր հետ... դա զմայլելի էր... մաքուր... ես դա ոչնչի հետ չեմ կարող

² Ibid, p. 573.

³ Ibid, p. 589.

համեմատել: Դու չես կարող պատկերացնել, թե ինչ է պատահել ինձ հետ...»⁴

Օլբին ակնարկում է, որ Մարտինն էլ է ենթարկվել Բաքոյան խրախճանքների, սակայն ցույց է տալիս, որ եթե Հին Հունաստանում դա համարվում էր սրբազան, ապա ժամանակակից հասարակության համար դա առնվազն արտոլորային է:

Կարելի է ասել, որ նա անտիկ ողբերգությունը դիտարկում է պոստմոդերնիզմի տեսանկյունից և ցույց տալիս, որ ժամանակակից աշխարհում այն այլևս տեղ չունի: Ոչ ոք չի կարող հասկանալ Մարտինին, քանի որ ժամանակներն են փոխվել: Մարդն այլևս չի ձգտում ճանաչել բնությունն ու նույնանալ դրա հետ: Նոր ժամանակներում մարդը ցանկանում է ճանաչել սեփական «ես»-ը, իսկ այդ տեսանկյունից անասնապղծությունն անընդունելի է:

Օլբին բարձրացնում է մեկ այլ խնդիր, որը արդիական է «Աբսուրդի թատրոնում»՝ մարդ-հասարակություն փոխհարաբերությունը: Պիեսի երկրորդ գործողությունն ավարտվում է, երբ զարհուրած Սթիվին խոստանում է վրեժ լուծել ամուսնուց և դուրս է վազում տանից: Երրորդ գործողության ընթացքում նորից հայտնվում է Ռոսը: Մարտինի միջոցով Օլբին արտահայտում է այն տեսակետը, որ կապ չունի, թե ընտանիքում ինչ է պատահել և ինչպիսի խնդիրների մարդիկ կարող են բախվել: Ոչ ոք իրավունք չունի միջամտելու իրենց գործերին: Օլբին բողոքում է, որ մարդիկ շատ են վախենում հասարակության կարծիքից, և դա է պատճառը, որ նրանք այս կամ այն որոշումն են ընդունում:

Ռոսը, որպես հասարակության անդամ, դատեց Մարտինին և որոշեց ամեն ինչ պատմել կնոջը: Մի կողմից՝ սա արդարացի է, քանի որ ընտանիքն իրավունք ունի իմանալու տեղի ունեցածի մասին, սակայն մյուս կողմից՝ հարց է առաջանում՝ ով է նրան թույլ տվել խառնվել ուրիշների ընտանեկան գործերին:

Այս պիեսում Օլբին կարողանում է ամենայն խորությամբ ցույց տալ դեռահաս երեխայի հոգեկան վիճակը, երբ ծնողները բաժանվում են կամ տանը խնդիրներ կան: Օլբին բարձրացնում է նաև ինցեստի գաղափարը, քանի որ որդուն մի պահ թվում է, թե ինքը կորցնում է հորը և խանդում է նրան այժի հանդեպ: Նա սկսում է համբուրել հոր ձեռքերը, այնուհետև անցնում է դեմքին, որին էլ ականտես է դառնում Ռոսը: Ցույց տալով հասարակության բոլոր արատները՝ գրողը մարտահրավեր է նետում հանդիսատեսին՝ ընտրելու, որն է ավելի ընդունելի և արդյոք հասարակությունն իրավունք ունի դատելու նույնիսկ այս դեպքում, երբ ամեն ինչ կատարվում է ընտանիքի ներսում:

Առաջին հայացքից, Օլբին պիեսն ավարտում է այնպես, ինչպես հարիր է ողբերգությանը: Ներս է մտնում Սթիվին՝ քարշ տալով կոկորդը

⁴ Ibid, p. 598.

կտրած այծի դիակը: Այսպիսով է նա լուծում իր վրեժը՝ սպանում է Սիլվիային: Այսինքն, մահանում է գլխավոր հերոսը՝ այծը:

«ՍԹԻՎԻ: Ես գնացի այնտեղ, որտեղ Ռոսն ասաց՝ կգտնեմ քո... ընկերուհուն: Ես գտա նրան, սպանեցի և բերեցի քո մոտ:

ՄԱՐՏԻՆ: Բայց ի՞նչ էր նա քեզ արել:

ՍԹԻՎԻ: Քո ասելով՝ նա քեզ սիրել է այնքան, որքան ես եմ սիրում»⁵

Մարտինը ողբում է այծի դիակի վրա, վարագույրն իջնում է:

Այսպիսով, Օլբին ծաղրում է ողբերգության ժանրը, և դրանով իսկ իր պիեսը դառնում է տրագիկոմեդիա, քանի որ իր մեջ ներառում է թե ողբերգության և թե կատակերգության տարրեր:

Պիեսի վերնագիրը գրական ակնարկ է Շեքսպիրի «Վերոնացի երկու ազնվական» կատակերգությանը: Այնտեղ հնչում է «Ով է Սիլվիան» երգը, որով Պրոթոսը փորձում է գայթակղել Սիլվիային:

Պիեսն ունի ենթավերնագիր, որն ակնարկում է այն տարրերի մասին, որոնք գտնելու ենք պիեսում: Այն հնչում է հետևյալ կերպ. «Մտորումներ ողբերգության սահմանման մասին»: Նա այսպիսով խորհում է ողբերգության դերի և նշանակության մասին՝ գտնելով, որ ժամանակակից թատրոնի պարագայում, ողբերգությունը այլևս լուրջ չի ընդունվում, և այն, ինչ ժամանակին համարվում էր բարձր արվեստ, այժմ ծիծաղելի է:

Այսպիսով, վերլուծելով Օլբիի՝ ստեղծագործական ուշ շրջանին պատկանող ստեղծագործությունները, կարող ենք փաստել, որ դրանք փորձարարական բնույթ են կրում և դրանցում ավելանում են պոստմոդերնիստական տարրերը:

Tamara Antonyan

PECULIARITIES OF E.ALBEE'S LATE PERIOD PLAYS

This article focuses on the analysis of two plays by the American playwright E.Albee. Albee is mostly known as a representative of the Theatre of Absurd with perhaps his most renowned play being "The Zoo Story" (1958). The analysis of the play "Three Tall Women" (1990 - 1991) and "The Goat, or Who's Sylvia?" (2002), which belong to the later period of the playwright's works, reveals a number of features inherent in Postmodernism.

Тамара Антонян

ОСОБЕННОСТИ ДРАМАТУРГИИ ПОЗДНЕГО ПЕРИОДА ТВОРЧЕСТВА Э.ОЛБИ

Данная статья посвящена анализу двух пьес американского драматурга Э.Олби. Олби известен как продолжатель традиций Театра абсурда, однако анализ пьес «Три высокие женщины» (1990 - 1991) и «Коза, или Кто такая Сильвия?» (2002), относящихся к позднему периоду творчества драматурга, выявляет ряд особенностей, присущих постмодернизму.

⁵ Ibid, p. 622.

**ԿԱՐՈՏԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ, ԲՐԻՏԱՆԱԿԱՆ և ԱՄԵՐԻԿԱՆ
ԼԵԶԱՄՇՈՒՅԹՆԵՐՈՒՄ**

Մարդկության պատմության զարգացման ողջ ընթացքում **կարոտ / նոստալգիա** հասկացությունը գրավել է ոչ միայն գրողների, գրականագետների, փիլիսոփաների, հոգեբանների և մարդաբանների, այլև լեզվաբանների ուշադրությունը: Պատահական չէ, որ իր «Նոստալգիայի գաղափարը»¹ ակնարկում Ջին Ստարոբինսկին փաստում է. «Նոստալգիան այսօր չի պատկանում ուսումնասիրության որևէ կոնկրետ ոլորտի. այն անհանգստացնում է հոգեբաններին, սոցիոլոգներին, գրականագետներին, փիլիսոփաներին և, նույնիսկ, համակարգչային մասնագետներին»:¹

Կարոտի/նոստալգիայի ավանդական ընկալումները առկա են, թերևս, գրեթե բոլոր մշակույթներում և քաղաքակրթություններում, և նրա միջոցով առկայանում են՝ *մեկից կամ մի բանից զուրկ կամ հեռու լինելու պայծառով մարդու հոգեկան տառապանքի ապրումները, հարմարավետության, պաշտպանվածության և ջերմության զգացումի, բնօրրանի և արմատների պահպանման, ինքնության արտահայտման պահանջումները*: Եվ թեպետ դիտարկվող հասկացությունը համարվում է համընդհանուր հասկացույթ, սակայն հայ, բրիտանական և ամերիկյան մշակույթներում ներկայանում է նշույթավորված դրսևորումներով և լեզվակրի գիտակցության և ճանաչողության ազգային առանձնահատկություններով:

Նոստալգիա բառի ծագումը պարզելու համար հարկ է ետ գնալ 2800 տարի, հին հույների ժամանակաշրջան, երբ ոչ անհայտ Հոմերոսը թափառում էր քաղաքից քաղաք՝ պատմելով Ոդիսևսի էպիկական պոեմը: Նա գրեթե քսան տարի պայքարեց իր ժողովրդի ազատության համար: Նա մերժեց նույնիսկ անմահություն ձեռք բերելու փառավոր առաջարկը, քանզի նրա միակ ցանկությունը տուն՝ կնոջ և որդու մոտ վերադառնալն էր: «Վերադառնալ» բառի հունարեն տարբերակն էր **nostos**, իսկ վերադառնալու նրա այրող ցանկությունը ստիպում էր նրան հոգեկան ցավ և տառապանք՝ հունարեն **algos** ապրել: Ուստի **նոստալգիա** բառի ամենավաղ սահմանումը կարելի է մեկնաբանել որպես **հոգեկան տառապանք՝ հայրենի երկիր և տուն վերադառնալու անողորմ փափագով տոգորված**:²

Նոստալգիա եզրույթը ակադեմիական խոսույթում պաշտոնապես ամրագրվեց միայն 17-րդ դարում, երբ շվեյցարացի բժիշկ Յոհաննես Հոֆերը նկարագրեց այդ հոգեվիճակը: Նա **նոստալգիան** նմանեցրեց գերմաներեն *heimweh* բառի հետ, որն ազատ թարգմանությամբ նշանակում

¹ Jean Starobinski. The Idea of Nostalgia, Diogenes 54. 1966. pp. 81-103.

² Erica Hepper. [Odyssey's End: Lay Conceptions of Nostalgia Reflect Its Original Homeric Meaning](http://surrey.academia.edu/EricaHepper/) http://surrey.academia.edu/EricaHepper/.

է «ցավ, որը մարդ զգում է, երբ իր հայրենի հողում չէ, կամ վախենում է, որ այն այլևս չի տեսնի, կամ, պարզապես՝ տան կարոտ»։ Քանի որ լատիներենում չկար բառ՝ կարոտաբաղձության/*homesickness*/ համար, Հոֆերն այն անվանեց նոստալգիա՝ հիմնված հունարեն երկու բառերի վրա։ Նախապես նկարագրված որպես հիվանդագին վիճակ, մելամաղձության մի տեսակ, այն դարձավ ռոմանտիզմի ժամանակաշրջանի հիմնական արտահայտչամիջոցներից մեկը։³

Ժամանակակից անգլերենում այն նշանակում է «**թախծոտ կարոտ անցյալի հանդեպ**», որն այս գործածությամբ առաջին անգամ արձանագրվել է 1920 թվականին։⁴

Այսօր **նոստալգիան** «դասվում է այնպիսի զգացմունքների կամ զգացումների շարքը, ինչպիսիք են, օրինակ, սերը, նախանձը կամ վախը»։⁵ Այն գաղափարը, որ ոչ միայն երևույթները, այլ նաև զգացմունքներն են մշակութային արտեֆակտեր, փաստագրված իրողություն է այլևս,⁶ ասել է թե՛ միևնույն զգացմունքը կամ զգացողությունը տարբեր մշակույթներում կարող է տարբեր կերպ դրսևորվել և ընկալվել, ստանալ տարբեր հասկացական և գնահատողական լիցքեր, և, նույնիսկ, լինել դժվար թարգմանելի։

Նոստալգիա բառը անգլերենում հանդես է գալիս հոմանիշային ընդարձակ շարքով՝ **nostalgia** / երջանիկ և միևնույն ժամանակ տխուր հոգեվիժակ՝ անցյալի դեպքերն ու իրերը հիշելիս/, **longing** /ուժգին, ցանկություն կամ ձգտում՝ հադկապես անհասանելի կամ հեռու ինչ-որ բանի հանդեպ/, **yearning** /խորը կարոտ՝ միահյուսված քնքշության կամ տխրության հետ, հիմնականում սիրո կարոտ/, **remorse** /խորը և ցավագին ավստասանք, զղջում, խղճահարություն/, **sentimentality** /զգացմունքների, հադկապես սիրո, խղճահարության չափազանցված զգացողություն/, **wistfulness** /թախիծ, մելամաղձություն/, **homesickness** /տխրություն կամ հուսալքություն՝ տնից կամ ընտանիքից հեռու գտնվելու պարճառով/, **pining** /խորապես տառապել կարոտից/, **reminiscence** /հին իրողությունների, փորձությունների մասին հիշողություն/, **fond memories** /հաճելի հիշողություններ/, **hearts and flowers** /չափազանցված սենտիմենտալիզմ՝ հադկապես հին օրերի երաճշտության և ֆիլմերի մասին հիշողություններում/ և բազմաթիվ այլ հոմանիշներ։⁷

Այսպիսով, անգլերենում **նոստալգիան** անցյալի հանդեպ գերզգայունությունն է, սենտիմենտալությունը /հիմնականում այն

³ Boym Svetlana (2002). *The Future of Nostalgia*. Basic Books. pp. xiii–xiv.

⁴ <http://www.etymonline.com>

⁵ Davis F. *Yearning for Yesterday: A Sociology of Nostalgia*. New York: The Free Press, 1979. p. 4.

⁶ Geertz C. *The Interpretation of Cultures: Selected Essays*. Basic Books, NY, USA. 1973. p. 81.

⁷ Thesaurus http://www.visualthesaurus.com/landing/?utm_source=ddc&utm_medium=html5/<http://www.collinsdictionary.com>

ժամանակահատվածի համար, որ լի է անձնական երջանիկ պահերով/
դրան, հայրենի հողի, որևէ առարկայի կամ անձի հանդեպ կարողը:

Հայերեն մեկ բառ՝ **կարոտը** կարող է փոխարինել անգլերեն բոլոր այս բառերին՝ միասին վերցրած, քանի որ այս բառերից ոչ մեկն առանձին-առանձին չի կարող վերարտադրել հայերեն **կարոտ** հասկացույթի բոլոր նրբերանգները՝ իր ամբողջ խորությամբ և ցավով: **Կարոտը հայերենում հոգեկան մեծագույն տառապանքի զգացում է, հաճախ՝ առանց որևէ առանձնակի պատճառի: Ավելի պակաս հիվանդագին մակարդակում՝ դա հոգու բուք ցավ է, բուռն ցանկություն, ձգտում մի բանի հանդեպ, որը նույնիսկ չկա, հիվանդագին տառապանք, անորոշ անհանգստություն, մտավոր հոգևարք, փափագ, տենչ: Առանձնակի դեպքերում այն կարող է լինել ինչ-որ հատուկ մեկի կամ մի բանի հանդեպ իղձ կամ կիրք, հայրենաբաղձություն կամ էլ սիրաբաղձություն:**

Հայերեն արմատական բառարանում **կարոտ** բառը ստուգանվում է որպես՝ <<**պետք ունեցող**>> /1815:231/ կամ **ծարավ** /1909:93/⁸ և սահմանվում է որպես **անձկություն, կարոտություն, փափագ, ցանկություն, ըղձանք, իղձ, բաղձանք, տենչ, տենչանք, կարոտանք, հասարաթ /բրթ./**: Այն ունի նաև **աղքատ, աղքատություն** իմաստը, որը բացակայում է անգլերենում:⁹

Սակայն **կարոտը** հայերի համար շատ ավելին է, քան ինչ-որ բանի անհագ տենչանքը: Հայերեն **կարոտը** նույնիսկ փոխում է հայի արյան բաղադրությունը, և դա ունի իր բացատրությունը: Հայ ժողովրդին դարեր շարունակ հրով ու սրով ստիպել են թողնել հազարամյակներով շենացրած իրենց տունն ու հողը, ապաստան որոնել աշխարհի ամենատարբեր ծագերում՝ իրենց հետ տանելով հայրենիքի **կարոտն** ու ցավը: Հայրենի եզրի <<էրգրի>> հանդեպ կարոտը ծնվել է այլ երկրներ գաղթած հայերի հոգիներում և փոխանցվել սերնդեսերունդ: Տարաբախտ հայերի համար կա հայրենի տան անփոփոխ հասցե՝ կենդանի ավանդներով ու նույն ցավով ու կարոտով, նույն սպասումներով ու հույսերով ամրապնդված: Եվ կարևոր չէ, թե որքան է Ֆրեզնոն հեռու Բիթլիսից, Ֆրեզնոյում ծնված Վիլյամ Սարոյանը, աշխարհահոչակ և աշխարհը ոտքի տակ տված Վիլյամ Սարոյանը, ապրում և ստեղծագործում էր որպես բիթլիսցի: Եվ երբ հնարավոր դարձավ, նա գնաց Բաղեշ, և փարատեց իր և իր հարազատների **կարոտը**՝ հայրենի հողի ու տան հանդեպ:

Ու ամեն հայ, որտեղ էլ ծնված լինի, կորուսյալ հայրենիքի մասին լսելիս, ալեկոծվում է և հոգին թրթռում, **կարոտում** է այդ եզերքը, նույնիսկ առանց այն տեսնելու: Հայերի համար **կարոտը** կորուսյալ հայրենիքի

⁸ Հայերեն Արմատական Բառարան: Հրատեայ Աճառեան: Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, Երեւան, 1926: Հատոր 2, էջ 560:

⁹ Հայոց Լեզվի Հոմանիշների Բառարան, Ա. Սուքիասյան: ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երեւան, 1967; Արդի Հայերենի Բացատրական Բառարան, Է. Աղայան: «Հայաստան» Հրատարակչություն, Երեւան, 1976:

հանդեպ վերացական է, որպես հեռավոր պատմական հուշ: Շատ այլ ազգեր, նույնպես, թողնելով իրենց տունն ու տեղը, գուցե սրտերում պահել են հայրենի եզերքի մասին ցավ, կարոտ, հիշողություն, սակայն, հիմնականում հարմարվել են իրենց նոր <<հայրենիքին>>, և նրանց համար հիմնականում փակ չի եղել դեպի հին հայրենիքը տանող ճամփան: Այն ժողովուրդները, որոնք լուրջ տեղաշարժեր չեն գործում, առավել ևս հարկադրական տեղահանության չեն ենթարկվում, թերևս, այդքան հիվանդագին չեն ընկալում հայրենի բնօրրանի գաղափարը, և նրանց համար հայրենիքի գաղափարը և հայրենի հողի կարոտն այլ չափումներում է:

Հայերենում նույնիսկ կա <<**կարոտի գրականություն**>> երևույթը. այսպես է որակվել անցած մեկ դարի ընթացքում ստեղծված անիծյալ տարիների գրականությունը: <Կարոտի գրականությունը> առավել բնորոշ է արեւմտահայերին, սակայն շատերն էին գրիչ վերցնում՝ անցյալի կարոտը մարդկանց մեջ անջինջ պահելու ցանկությունից: Մեծ եղեռնը դեռևս շարունակվում էր, երբ Չարենցը գրեց <<**Երկիր Նաիրի**>> պոեմը, որը Կարսին նվիրված գեղեցիկ ծոն է: Իր կորուսյալ հայրենիքի ու ծննդավայրը գրողի համար /այդուհետ նաև բոլոր հայերի համար/ <<**ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն**>> դարձավ: Քսանական թվականների վերջերին, արդեն Փարիզում, Շահան Շահնուրը գրեց կարոտի ու կորստի իր երգը՝ <<**Նահանջ առանց երգի**>> վեպը: <<**Անիծյալ տարիներ. 1914-1919**>> վեպում Երվանդ Օտյանը նկարագրել է տարագրության տառապանքը կրած, սակայն վերապրած և հայրենի հողի կարոտը սրտներում կրող հայերի մասին:

Սովետահայ հասարակայնությունը անհագորեն ընթերցում էր Խաչիկ Դաշտենցի <<**Ռանչպարների կանչը**>>՝ առաջին անգամ կարդալով Անդրանիկի և հայ ֆիդայիների մասին: Հետո եկան <<ճնհալի>> տարիները, երբ հրատարակվեցին Պարույր Սևակի <<**Անլուրի զանգակատունը**>>, Հրաչյա Քոչարի <<**Կարոտը**>> և <<**Նահապետը**>> :

Մուշեղ Գալշոյանի <<Կարոտի գրականությունը>> երկրի կարոտով և վերհուշով ապրող ծերունիների երազանքների մասին էր, որոնք կարոտում էին, և այդ կարոտը <<**տխրություն էր, անուշ-անուշ տխրություն**>>:

Գուրգեն Մահարու <<**Այրվող Այգեստանները**>> վեպը, որը գովերգում էր երեքիազարամյա Վանը, տոգորված էր գեղեցիկ ու հարուստ հայրենի եզերքի կորստի ցավով:

Ռաֆայել Պատկանյանի <<**Վարդապետարան**>>-ում հերոսները նույն ճակատագրի կրողներն են, ունեն նույն հույզերն ու պրպտումները, նրանց շուրթերին Հայաստանն է, հոգում՝ տանջող կարոտը:

Հրաչյա Քոչարի «**Կարոտ**» վիպակի հիմքում կորուսյալ հայրենիքի հանդեպ անսահման սիրո թեման է, մարդ-հայրենիք առնչությունը: Քոչարի վիպակը իր երազներին հավատացող մարդու մասին է, նոր Հայաստան եկած Առաքելի, ում հոգում դեռ ցավը հորձանք է տալիս, ով կարոտով

համակված կամենում է տեսնել սահմանից անդին մնացած իր հայրենիքը, ծնողների գերեզմանները, իր տունը:

Քսանեներդ դարի երկրորդ կեսերին արձակագիր Հրանտ Մաթևոսյանը եղեռնի և կարոտի թեմային անդրադարձել է իր <<Մեծամոր>> և <<Թափանցիկ օր>> ստեղծագործություններում: Նույն թեման էր արծարծվում Ալեքսանդր Թոփչյանի <<Եվ անգամ մահից հետո>>, Նորայր Ադալյանի <<Սև քառակուսի կարմիր անապատում>>, Վահագն Գրիգորյանի <<ժամանակի գետը>> ստեղծագործություններում:

Կորուսյալ Հայրենիքի ցավ, սեր ու կարոտ միախառնվելով իրար ջավախահայ բանաստեղծ Սուրեն Շիրինյանի գրչի տակ՝ դառնում են գեղեցիկ բանաստեղծություններ: Չվայելած Հայրենիքի, հող ու ջրի կարոտը նախնիներից փոխանցվել է Սուրեն Շիրինյանին, ով հրատարակել է բանաստեղծությունների «Մթնոտ հուշեր...» և «Հայոց վշտի ճանապարհով» ժողովածուները:

Հայրենից դուրս ապրող արվեստագետների համար էլ հայրենիքի, կարոտի թեման անշրջելի էր՝ Վիլյամ Սարոյան, Լևոն-Չավեն Սյուրմեյան: Այսօր սփյուռքահայ գրողները՝ Դայանա Տեր-Հովհաննիսյան, Նենսի Գրիգորյանը, Լեսլի Այվազյան, Փիթեր Նաջարյան, հայերեն չեն գրում, սակայն նույնպես պատմում են հայրենի կարոտի մասին:¹⁰

Եվ ինչպես արձակագիր, դրամատուրգ Նորայր Ավդալյանն է ասում իր պապերի ծննդավայր Երզնկայի մասին, որտեղ երբեք չի եղել, սակայն տեսել է իր հոգու և սիրո աչքերով՝ <<Այդ երկիրն անուն ունի՝ Կարոտ>>:¹¹

Таким образом, война и страх, обыгрываемые в рассказах Борхерта несут в себе большую долю позитивизма и надежды. Ибо если мы есть, то значит, мы выжили, а значит, все еще может быть хорошо. Скорей всего персонажи Борхерта поддерживаются и поддерживались во время войны только одной идеей, которая озвучена в рассказе «Гамбург»: «Это наша воля – быть» (*Das ist unser Wille, zu sein*). При наличии бытия, воля способна создать все сопровождающие необходимые условия.

Как мы уже отмечали, главные образы рассказов Борхерта передают весь ужас войны, пережитой немцами. «Звуки и краски в поэтической прозе Борхерта нередко обретают символический смысл. Поет ли соловей, розовеет ли лоскут от рубашки любимой женщины – все это жизнь, которая должна принадлежать людям, но которая отнята у них – прежде всего войной...»¹¹. Основными образами рассказов являются: темень, мрак, ночь, ветер, вокзал, паровоз, крик, зверь, а также, в какой-то степени, образ женщины, погубленной, опустошенной этой войной, с яркой красной помадой на бледном лице, которая пробуждает в персонаже совсем другие ассоциации из его недавнего прошлого.

Темнота, мрак извечные спутники страха (да и восприятие войны, её клише) – они есть в каждом рассказе. Вот некоторые примеры упоминания образа мрака, который мы воспринимаем, как иллюстрацию войны на страницах его рассказов. Например: «Мимо, мимо» (перевод Н.Ман) мы читаем: «*В ничто. Нет прибежища в бегстве. Повсюду я встречаю себя. Большею частью по ночам. Но приходится удирать все дальше*».

Ночь и мрак перекликаются со страхом и в рассказе «Гамбург»: «*Каменный лес, и камни его мостовой, с поющим своим*

¹⁰ Ibid

¹¹ Borchert W. Bleib doch, Giraffe. Wolfgang Borcherts Werke. Verlag Progress. Moskau. 1970. P. 249

*ритмом, как по волшебству, уподобляются лесной земле. По ночам, иногда, ты слышишь на ней (земле – А.Г.) шаги умерших зверей».*¹²

Крик паровоза в ночи. Впрочем, не только сам паровоз, но и вокзал – ещё одно проявление войны, характеризующее её. Вокзал в военное время стал местом расставания солдата с родными и близкими, местом страшных переездов в холодных, пропитанных зловонием вагонах, местом отправки в неизвестность, в никуда, на борьбу за то, что для кого-то было неправдой, а для других стало неправдой, обрушилось после поражения. Один из примеров – это рассказ «Останься, жираф» («Bleib doch, Giraffe»): *«Он стоял на воющем сквозняке пустынного ночного перрона, под грязной и безлунной стеклянной крышей вокзала. А по ночам пустынные вокзалы – это край света, вымерший, бессмысленный и пустой. Пустой, пустой, пустой. Но если ты пойдешь дальше, ты пропал. Тогда ты пропал. Ибо у тьмы страшный голос. От тьмы не спасешься, миг – и она тебя одолела, а позади него серо-лунная улица вновь замолкала, вновь замкнулась в свое каменное одиночество»*¹³. Таким образом, образ вокзала и паровоза, переплетается с образом ночи и мрака и создает неповторимой силы ощущение безысходности и потери. Война без малейшего упоминания предстает перед читателем во всем своем ужасе.

Ветер тоже рисует образ войны. Особенно это чувствуется в рассказе «Стена»: *«В конце концов, остается только ветер. Когда ничего уже не будет, ни голода, ни мотора, ни музыки, – тогда останется только ветер. Он переживет все – камень, улицу, даже бессмертную любовь. И в голых кустах он будет петь утешительные песни над падшими, заснеженными могилами»*¹⁴. Этот рассказ очень ярко иллюстрирует войну и разрушения, повлекшие за собой столько страданий и смерть. На самом деле, весь рассказ – это два образа: ветер и полуразрушенная стена старого дома, верой и правдой служившая людям и оказавшаяся бесполезной и забытой (как и все герои-люди рассказов Борхерта). Эта никчемность приводит к разрушению, которое

¹² Sreinwald, dessen Pflastersteine einen Waldboden mit singendem Rhythmus hinzubern, auf dem du selbst noch die Schritte der Gestorbenen hörst, nachts manchmal ibid

¹³ «Er stand auf dem windüberheulten nachtleeren Bahnsteig in der großen grauferrußten mondeinsamen Halle. Nachts sind die leeren Bahnhöfen das Ende der Welt, ausgestorben, sinnlos geworden. Und leer. Leer, leer, leer. Aber wenn du weitergehst, bist du verloren. Dann bist du verloren. Denn die Finsternis hat eine furchtbare Stimme. Der entkommst du nicht und sie hat dich im Nu überwältigt.»

ibid

¹⁴ http://www.lib.ru/INPROZ/BORHERT/borhert.txt_with-big-pictures.htm

несет за собой смерть тех, кто находится рядом (как и во время войны), а толкает на это разрушение именно ветер. Ветер наделен силой и вечным могуществом над всем, что происходит: «Он [ветер – А.Г.] первая и последняя симфония жизни и его дыхание – вечная мелодия, звучащая над колыбелью и над гробом». Ветер полон сил и способен убедить полуразрушенную стену погубить себя и унести жизни невинных посторонних людей. Уже совершив поступок, перед самым концом, стену переполняет раскаяние и сожаление о содеянном. А ветер ликует: «Но ветер рассмеялся, когда стене пришел конец... Он смеялся над жизнью, он ведь знал, что так и должно было случиться. И у него, у древнего юного ветра, не было сердца»¹⁵.

Ещё один частый образ, который, по сути, неразрывно связан с войной, – крик. Крик разный, часто молчаливый, выражающий ужас сдавленных эмоций, которые ищут своего выхода, крик, призывающий, ведущий: «...материнский крик гонит нас сквозь бессонные майские ночи, тогда совершаем мы свой подвиг...»¹⁶. Крик и зверь, как и ночь, мрак присутствуют практически во всех рассказах. Зверь тоже переживает свои трансформации, как и другие образы. То он ассоциируется с голодом, любовью, городом, девушкой. «Город: доисторический зверь, храпящий, сопящий, зверь из дворов, стекла, вздыхателей, слез, парков, сладострастных вскриков – зверь с глазами, горящими при солнечном свете, – серебристыми, в масляных пятнах отводными каналами»¹⁷.

Еще один образ, который, при всем своем несоответствии войне, ассоциируется с войной. – образ женщины. Может, как раз, как противопоставление войне, как показатель того, сколь она губительна. В рассказе «Останься, жираф» при описании девушки Борхерт пишет: «девушка с губами, слишком красными на бледном лице», («mit dem zu roten Mund im blassen Gesicht»), потом дает объяснение переживаниям и ассоциациям героя: «Но все лица истекают кровью, думал он, кровь сочится изо рта, а все руки держат ручные гранаты. Но тут он почувствовал запах косметики»¹⁸. Так Борхерт показывает, как война

¹⁵ ibid

¹⁶ «...wenn dein Mutterschrei uns durch schlaflose Mainächte jagt, dann tun wir unsere heldische Tat... » BorchertW. Bleib doch, Giraffe. Wolfgang Borcherts Werke. Verlag Progress. Moskau. 1970.P. 183

¹⁷ ibid, p.86

¹⁸ «Aber die Gesichter bluten alle, dachte er, sie bluten aus dem Mund und Hände halten Handgranaten. Aber da schmeckte ed die Schminke und ihre Hand umgriff seine mage-ren Arm». ibid

искажила восприятие, внутренний мир. А это ещё одна причина для страха, порожденного войной.

Таким образом, война и страх – доминирующие образы рассказов Вольфганга Борхерта, которые получают своё воплощение не только и не столько в прямом описании, а через образы, напрямую с ними не связанными. Эти образы, использованные в непривычных оборотах и в присущем Борхерту особом стиле, создают неповторимое глубокое восприятие войны и всех её невзгод. Война искажила, изменила, уничтожила обычный мир людей, и оставила все эти трагические изменения после себя. Людям приходилось существовать в создавшейся реальности. Но при всем этом не могло не быть веры в будущее, иначе все бессмысленно. Поэтому Борхерт пишет: «Это наша воля – быть, не где-нибудь, не как-нибудь, но здесь, между Альстером и Эльбой, и быть только такими, какие мы есть, мы, гамбургцы». ¹⁹ Именно эта воля, вкупе с верой, способна поднять из руин и восстановить человеческую жизнь. А одна из важнейших миссий писателя и поэта – донести до читателя всю реальность происходящего, но при этом суметь внушить веру в свои силы, ибо *«Ночью писатель может глазеть на звезды. Но горе ему, если он не чувствует, что его дом в опасности. Тогда он должен трубить, пока у него не лопнут легкие»*.²⁰

Гнев, отчаяние, отвращение, отрицание – вот лицо антифашистской литературы первого послевоенного десятилетия. *«Никогда больше!»* – этот призыв положен в основу первых антифашистских произведений 40-50-х годов многих авторов, в том числе и Борхерта. Он, как и многие писатели того периода, прошел путь от пацифизма к активному и сознательному антимилитаризму, отразив в своем творчестве мучительные проблемы, связанные с трагическим опытом фашизации, второй мировой войны и её последствий. Но, несмотря на всю мрачность происходящего, он верит в то что, все может наладиться, если не повторять ошибок прошлого и не разрушать человека изнутри. В этом Борхерт видит свою миссию и замечательным образом отражает в своих произведениях.

Arusjak Grigoryan

¹⁹ «Das ist unsere Wille, zu sein. Nicht irgendwo und irgendwie zu sein, sondern hier und nur hier zwischen Alsterbach und Elbestrom zu sein – und nur zu sein, wie wir sind, wir in Hamburg» *ibid*

²⁰ «Nachts darf der Schriftsteller die Sterne bekucken. Aber wehe ihm, wenn er nicht fühlt, daß sein Haus in Gefahr ist. Dann muß er posaunen, bis ihm die Lungen platzen!» *ibid*, p 178

THE THEME OF WAR IN THE OEUVRE OF WOLFGANG BORCHERT

This article is addressed to reveal a theme of war and its procreation – fear in the works of the famous German writer and poet Wolfgang Borchert. He has remained a rich and interesting heritage, despite the short life. This article could not embrace the whole works of author. We have chosen a few stories – brightest pearls of his work. «Wall», «Past, past», «Town», «Stay, giraffe», «Hamburg», «In May, cuckoo cuckoo», «Writer» - These stories allowed us to expose the whole deepness of human grief, whose soul is forever maimed by war. Even the absence of its mention is “crying” about its disastrous consequences, and its invisible presence in the lives of each character, city, country forever crippled by war.

Արուսյակ Գրիգորյան

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԹԵՄԱՆ ՎՈԼՖԳԱՆԳ ԲՈՐԽԵՎՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սույն հոդվածը բացում է պատերազմի թեման, պատերազմ՝ որը նաև առաջացնում է վախ: Այդ վախը և պատերազմը հայտնի գերմանական գրողի և բանաստեղծ Վոլֆգանգ Բորխերտի ստեղծագործությունների հիմնական հերոսներն են: Չնայած իր կարճ կյանքի Բորխերտը թողել է ծավալուն և հետաքրքիր ժառանգություն: Հոդվածը հնարավորություն չեր ընձեռնում ընդգրկել բոլոր նրա ստեղծագործությունները: Մեր ընտրությունը ընկավ մի քանի պատմվածքների վրա՝ իր աշխատանքի վառ գործերը՝ «Պատ», «Անցյալ, անցյալը», «Քաղաք», «Մնա, ժիրաֆ», «Համբուրգ», «Մայիսին կկու կուկուն», «Գրողը» - այս պատմվածքները հնարավորություն են ընձեռնում բացել մարդու վշտի ամբողջ խորությունը: Մարդու, որի հոգին ընդմիջտ քայքայված է պատերազմով: Անգամ պատերազմի մատնանշման բացակայությունը «գոռում է» նրա աղետալի հետեանքների և նրա անտեսանելի ներկայության մասին բոլոր հերոսների կյանքում, քաղաքում, երկրում:

Հիմնաբառեր՝ Գիշեր, քաղաք, ճիչ, пустота, լռություն, քամի, վախ, պատերազմ, կյանք

**ՔԱՀԱՆԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ Թ.ՖՈՆՏԱՆԵԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

«Նա իսկական քրիստոնյա է: [...] Նա չի բղավում կոկորդով մեկ, չի անիծում, նա փարիսեցի չէ: Նա հեզաբարո անձնավորություն է, և դա է ամենակարևորը»¹: Ահա այսպես է արտահայտվում Թեոդոր Ֆոնտանեի «Փոթորկից առաջ» վեպում գյուղացիներից մեկը տեղական քահանայի մասին: Նմանօրինակ գրույցները պարբերաբար կրկնվում են Ֆոնտանեի գրեթե բոլոր վեպերում: Զրույցը, որը հանդիսանում է Ֆոնտանե ռեալիստ գրողի պոետիկայի հիմնական առանցքը և մեծ դերակատարություն ունի վեպը կառուցելու հարցում, զգուշավորությամբ և ակնարկներով ընթերցողին ծանոթացնում է այս կամ այն կերպարի հետ: Երբեք հեղինակը անմիջականորեն չի ներկայացնում իր կերպարներին, դրա փոխարեն խոսում են իր հերոսները, քննարկում այս կամ այն անձին: Բացի այդ, Ֆոնտանեի պոետիկական հնարքներից մեկն այն է, որ նրա վեպում երկրորդական կերպարները առանձնահատուկ դերակատարություն են ստանում՝ իրենց հերթին դառնալով գլխավոր գործող անձինք: Ինչ վերաբերում է քահանայի կերպարին, ապա հարկ է շեշտել, որ Ֆոնտանեի բոլոր վեպերում քահանան միշտ երկրորդական դերում է հանդես գալիս: Եվ չնայած նրա բազմաթիվ վեպերի սյուժեների տարբերությանը՝ Ֆոնտանեի բոլոր քահանաները ունեն որոշակի ընդհանրություններ. նրանք կրում են նույն բարոյահոգեբանական հատկանիշները և ունեն կյանքի հանդեպ գրեթե միևնույն մոտեցումները: Հարկ է նշել, որ Ֆոնտանեի՝ կրոնական թեմաների և, առհասարակ, կրոնի հանդեպ ունեցած աշխարհայացքի մասին ժամանակի ընթացքում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց թիվը, սակայն, այնքան էլ մեծ չէ: Ճիշտ է, Ֆոնտանեն մեծացել և դաստիարակություն է ստացել բողոքականների ընտանիքում, իսկ կալվինիստական դաստիարակությունը նրան ուղեկցել է ողջ գրական գործունեության ընթացքում, այնուամենայնիվ, նա զարմանալիորեն չեզոք դիրքորոշում ուներ կրոնական հարցերի շուրջ քննարկումների ժամանակ: Շատ հազվադեպ, և այն էլ ինքնակենսագրական և նամակագրական աշխատություններում, կարելի է հանդիպել եկեղեցու և նրա հոգևոր սպասավորների մասին Ֆոնտանեի անձնական տեսակետին: Օրինակ, 1852 թվականին նա գրում է իր կնոջը. «Ես հիմա զգում եմ, որ մարդ առանց Աստծո կորած է»²: Մեկ այլ նամակում նա կնոջը կրկին խոստովանում է, որ առանց Աստծո օգնության նա չի կարող դուրս գալ իր շուրջ ստեղծված ճգնաժամից: Նույն նամակագրությունների միջոցով միաժամանակ

¹ Fontane, Theodor: Vor dem Sturm. Aufbau-Verlag, Berlin und Weimar 1993, S. 60.

² Fontane, Theodor. An Emilie Fontane 18.06. 1852. . Hrsg. Von K.E..O.Fritsch., Berlin 1905-10, S. 170

ակնհայտ է դառնում Ֆոնտանեի քննադատական վերաբերմունքը քահանաների հանդեպ, որոնք կորցրել են իրենց երբեմնի առաքինությունը և այլ արժեքների են ծառայում: Չարմանալին այն է, որ չնայած իրական կյանքում քահանաների նկատմամբ ունեցած ակնհայտ քննադատական դիրքորոշմանը, որին մենք ականատես ենք լինում նամակագրություններից, քահանաների գեղարվեստական կերպարը Ֆոնտանեի ստեղծագործություններում միշտ դրական լույսի ներքո է հանդես գալիս: Կարելի է ասել, որ Ֆոնտանեի ժամանակակից ոչ մի գերմանացի գրող այդպես դրականորեն չի ներկայացրել եկեղեցին և նրա հոգևոր սպասավորներին, ինչպես Ֆոնտանեն: Այս հանգամանքը հարկավոր է փաստել որոշակի վերապահումներով, իսկ դրա համար հարկ է առաջին հերթին ըմբռնել և լավ պատկերացնել Ֆոնտանեի գրական ուղին: Մենք գիտենք, որ Ֆոնտանեն, որը հայտնի է առավելապես որպես 19-րդ դարի ռեալիստ գրող, վիպասան, իր ստեղծագործական ուղին սկսել է բալլադներով և բանաստեղծություններով: Լրագրողի գործունեությունը նրան օգնել է մանրուքների մեջ զանազանել կարևորը, զարգացրել է ճշմարիտը նկատելու և տարբեր երևույթների հանդեպ քննադատական մոտեցում ցուցաբերելու ունակությունը: Չպետք է զարմանալ, որ Ֆոնտանեն, որը վաղ տարիքում իր բալլադներով և բանաստեղծություններով գովերգում և փառաբանում է Պրուսիայի ազնվագարմ հերոսներին և նրանց մեջ տեսնում Գերմանիայի ապագան, ծերունական հասակում խորը հիասթափությամբ սկսում է կասկածի տակ առնել այդ նույն Պրուսիայի սահմանած և նրա կողմից պարտադրվող արժեքները: Նրա վաղեմի սերը հին ազնվականի հանդեպ, սակայն, մնում է, ինչպես առաջին սիրո թողած վերքը: Նա բազմիցս է խոստովանում, որ իր համակրանքը, սերը ընդմիշտ *յունկերին*³ է պատկանում, եթե նույնիսկ նա երբեմն ստիպված է ընդունել, որ այդ յունկերը կորցրել է իր դեմքը և այլանդակվել: Նույնը կարելի է ասել եկեղեցու հոգևոր սպասավորների դեպքում: Պատահական չէ, որ Ֆոնտանեի հիասթափությունը Պրուսիայի հանդեպ կայսրության կազմավորումից հետո ուղեկցվում է միաժամանակ նաև գերմանական լուսերական եկեղեցու հանդեպ հիասթափական տրամադրություններով, քանի որ Պրուսիայում եկեղեցին գործում էր պետության շահերին ընդառաջ, այն կարծես թե պետության համար դարձել էր քաղաքական գործիք: Եվ քանի որ Ֆոնտանեն գտնում էր, որ Վիլհելմյան կառավարությունը չի ցանկանում և ուստի ի գորու չէ ընդունել նորը, նոր ժամանակները և դրանց հետ եկող փոփոխությունները, ապա այդ կառավարության այսպես կոչված «դաշնակից» կղերական եկեղեցին չունի ժամանակի շունչը, նա պատրաստ չէ հոգեպես աջակցել և քաջալերել անհատին՝ նոր ժամանակների փոթորկին հաստատուն քայլերով ընդառաջ գնալու: Ապա հարց է առաջանում, թե ինչու այդ դեպքում Ֆոնտանեի կերտած քահանաների կերպարները հակառակ լույսի ներքո են հանդես

³ Այսպես էին կոչում ազնվականներին Պրուսիայում

գալիս: Չե՞ որ նրա գրեթե բոլոր քահանաները ազատամիտ և առաջադեմ մտածելակերպի մարդիկ են, նրանք իրականում չեն համապատասխանում Ֆոնտանեի ժամանակաշրջանի հոգևոր հայրերի իրական նկարագրին, ինչպես ինքը՝ Ֆոնտանեն, բազմիցս է ակնարկել իր նամակներում: Օրինակ, 1888 թվականին նա գրում է իր ընկերոջը. «Եկեղեցական աշխարհը իր ծիծաղելիությամբ և անվստահելիությամբ մարդկության մյուս կեսից միշտ մի քայլ առաջ է»⁴: Ստացվում է այնպես, որ անձնական նամակագրություններում Ֆոնտանեն մեղադրում է եկեղեցուն չափազանց աշխարհիկ լինելու մեջ, իսկ մտացածին քահանաներին, ընդհակառակը, ներկայացնում է որպես ուղղամիտ և մեծ մարդասերների, որոնք չեն հետապնդում անձնական շահեր և կոչված են «արածեցնելու իրենց հոտը», ինչպես վայել է իսկական քրիստոնյային: Նման երկվությունը, իսկապես, հատուկ է Ֆոնտանեին, և բազմաթիվ են օրինակները, երբ այս կամ այն հարցի շուրջ նրա որևէ մի տեսակետը, որին ծանոթ ենք նամակագրություններից կամ ինքնակենսագրական աշխատություններից, հակառակ մեկնաբանություն է ստանում նրա կերպարների միջոցով իր իսկ ստեղծած մտացածին աշխարհում: Այստեղ Ֆոնտանեն ստեղծում է քահանայի՝ իր պատկերացրած իդեալը: Որպես օրինակներ հիշենք միայն քահանա Նիմեյերին «Էֆֆի Բրիստ» վեպում, որը ահեղ դատաստանի մասին չի խոսում, այլ իր հովանու տակ է վերցնում Էֆֆիին: Նիմեյերի կերպարի մեջ Ֆոնտանեն ներդրել է բաց սիրտ ունեցող և ներելու ընդունակ քահանայի հատկանիշները, որին խորթ չեն մարդկային թուլությունները, և որը պատրաստ է ներել մոլորված մարդուն: Այստեղ մենք, որոշակի վերապահումներով իհարկե, կարող ենք զուգահեռներ անցկացնել նաև Դոստոևսկու Զոսիմայի կերպարի և Նիմեյերի միջև, որովհետև երկու այս կերպարներն ունեն ընդհանուր մի գիծ. մարդասիրություն և անձնագոհություն - ահա այս հատկանիշներն են առավել ցայտուն արտահայտված երկու քահանաների մոտ, որոնք աստվածայինը տեսնում են ներելու և մարդկանց սիրելու մեջ:

Ինչպես արդեն նշվեց, Ֆոնտանեի վեպերում քահանան գրեթե միշտ երկրորդական կերպարում է հանդես գալիս: Կարելի է ասել, որ նրա վեպերը ունեն միանման սխեմա. պրուսական մի ազնվականի ընտանիք բնակվում է կամ Բեռլինում կամ գյուղական ավանում: Վեպի հիմնական գործողությունները ծավալվում են ընթրիքի սեղանի շուրջ զրույցների միջոցով, որին մասնակից են լինում այդ ազնվականի մտերիմները, և անպայման տեղի համայնքի քահանան: Այն, որ քահանան հարգարժան հյուրերի ցանկում գրեթե միշտ առաջին հրավիրվածներից է լինում, խոսում է նրա անձի կարևորության մասին: Հատկապես հետաքրքրական է քահանա Զայդենթոփֆի կերպարը «Փոթորկից առաջ» վեպում: Վերը նշվեց, որ գյուղացիները նրա մասին խոսելիս շեշտում են, որ նա իսկական

⁴ Fontane, Theodor. Briefe in 2 Bänden, ausgewählt und erläutert von Gotthard Erler. Berlin, Weimar 1980. S. 46

քրիստոնյա է, որովհետև հեզաբարո մարդ է: Նա այնքան համեստ է ապրում, որ նույնիսկ նրա դռան զանգը շատ մեղմ է հնչում, կարծես թե ներս մտնողին ուզում է ասել. «Նե՛րս արի, ես քեզ սպասում էի»⁵: Լինելով Աստծո խոնարհ ծառա՝ Ջայդենթոփֆը մյուս կողմից նաև հնեաբան-գիտնական է: Ֆոնտանեն հետաքրքրի մեկնաբանությամբ ներկայացնում է Ջայդենթոփֆի սենյակը, որը միջնապատով բաժանված է երկու մասի՝ մի մասում քահանա Ջայդենթոփֆի սենյակն է, որտեղ գրասեղանին դրված է Լյութերի թարգմանած Աստվածաշունչը, մյուս մասում հնեաբանական թանգարանն է, որտեղ գիտնական Ջայդենթոփֆը պահպանում է իր կողմից պեղված և խնամքով համարակալված գտածոները, որոնք նա ժամանակ առ ժամանակ ցուցադրում է իր գիտական վարկածների ճշմարտացիությունը ապացուցելու համար: Այն փաստը, որ « [...] հնեաբանական թանգարանի թիկնաթողը ավելի շատ էր մաշվել օգտագործվելուց»⁶, հուշում է, որ Ջայդենթոփը հիմնական մասն անց էր կացնում իր գիտական գործունեության վրա և սրանով առաջացնում որոշ տեղացիների տարակուսանքը: Այս հանգամանքը շատ բան է փաստում Ջայդենթոփի էության, նրա աշխարհահայացքի և մտածելակերպի մասին: Ստացվում է, որ նա միջակ քահանա է, բայց միաժամանակ կրքոտ և իր գործին նվիրված հնեաբան: Նրան ավելի հոգեհարազատ են պատմության մասին զրույցները, քան հոգևոր ծեսերը: Չնայած այս ամենին՝ մարդիկ սիրում և զնահատում են նրան որպես իրենց քահանայի և նրա միջոցով ստանում սփոփանք և հոգևոր աջակցություն: Իհարկե, եթե պատկերացնենք 19-րդ դարի Գերմանիան և նրա բարքերը, ապա կհամոզվենք, որ Ֆոնտանեի կողմից կերտած քահանայի այս կերպարը իրականում շատ հեռու է այդ ժամանակաշրջանի իրական քահանաների կերպարից: Խելացի, բանիմաց, որոշ չափով նաև ազատամիտ և միաժամանակ աստվածահաճո վարք ունեցող Ջայդենթոփի մեջ, կարելի է ասել, Ֆոնտանեն մարմնավորում է իր պատկերացումները իսկական քրիստոնյայի մասին:

Ինչպես արդեն նշեցինք, Ֆոնտանեի բոլոր քահանաները ունեն մեկ ընդհանուր գիծ՝ նրանք հանդուրժող են մարդկային սխալների հանդեպ և որոշ չափով նաև ազատամիտ են: Քահանա Լորենցենը, որը Ֆոնտանեի վերջին ստեղծագործության՝ «Շթեխլին» վեպում է հանդես գալիս, իր մեջ կրում է Ֆոնտանեի կողմից իր քահանաներին վերագրված բոլոր հատկանիշների հանրագումարը. նա ունի այն ամենը, ինչը հատուկ է գյուղական քահանային՝ հանդուժողակա- նություն, մեղմ և հեզաբարո հոգի, բարի սիրտ: Լորենցենի կերպարը, սակայն, ավելի խորիմաստ նշանակություն ունի: Նրա մեջ միաձուլված են երկու հակառակ բևեռներ՝ հինը և նորը, որոնց ներդաշնակ համակցության շուրջ են ծավալվում Ֆոնտանեի մտորումները և կազմում վեպի առանցքային թեման: Ֆոնտանեն իր հերոսի միջոցով բարձրաձայնում է իր համար նույնպես շատ

⁵ Fontane, Theodor: Vor dem Sturm. Aufbau-Verlag, Berlin und Weimar 1993, S. 60

⁶ Ebd, S. 86

կարևոր և իր ժամանակաշրջանի համար շատ արդի խնդիրներից մեկը՝ հնի և նորի բախումը: Ահա այսպես է ասում Լորենցենը. «Ավելի լավ է հինը, որքանով որ հնարավոր է, և նորը, որքանով որ անհրաժեշտ է»:⁷ Վեպի ընթացքում գլխավոր հերոս Դուբսլավի և Լորենցենի զրույցի միջոցով պարզ է դառնում, թե Լորենցենը ինչու է գերադասում հինը: Այստեղ հին Պրուսիան է հիշատակվում, որը թեև տնտեսապես թույլ զարգացած երկիր էր, սակայն հարուստ էր իր հոգևոր արժեքներով, իր հերոսներով, որոնք անհագուրդ նվաճողներ չէին, այլ մարտի էին դուրս գալիս վեհ նպատակների համար: Լորենցենը չի խոսում հոգու փրկության մասին, չի խոսում ահեղ դատաստանի մասին, նա քրիստոնյա է ավելի շատ գործով, քան թե խոսքով: «Կանգնել, ջրհոր կառուցել այն տեղում, որտեղ դա անհրաժեշտ է, անել այնպես, որ մարդիկ գան և գտնելով քեզ՝ մնան քեզ հետ»⁸- սա է Լորենցենի նշանաբանը: Չնայած այն հանգամանքին, որ Լորենցենը ապրում է խուլ մի գյուղում, նա չունի գավառական մտածելակերպ և գիտակ է երկրում կատարվող անցուդարձին: Լորենցենը կրում է այն հատկանիշները, որոնք, ըստ Ֆոնտանեի, քրիստոնեության ըմբռնման ամենագեղեցիկ կողմերն են՝ սերը և ազատությունը: Լորենցենին գործելու է մղում աստվածային սերը մարդկության հանդեպ, իսկ ազատությունը նրա համար, առաջին հերթին, ազատ ընտրության հնարավորությունն է: Կարելի է ասել, որ Լորենցենի կերպարի միջոցով վեպում արտահայտվում է հումանիզմի և ազատության մոտիվը: Այն, որ Պրուսիայի անցյալի և ապագայի մասին վեպում ամենից շատ Լորենցենն է խոսում, թույլ է տալիս ենթադրել, որ Ֆոնտանեն Գերմանիայի համար օրհասական այդ ժամանակաշրջանում գեղեցիկ ապագայի հնարավոր ուղիները փնտրում է քրիստոնեական արժեքների մեջ, որոնք, սակայն, այլևս խեղաթյուրվում են կղերական եկեղեցու և նրա պատգամներով առաջնորդվող հասարակության կողմից: Սեր և եղբայրություն, հանդուրժողականություն և համբերատարություն – սրանք այն արժեքներն են, որոնց բացակայությունը Ֆոնտանեն ցավով նկատում էր և բարձրաձայնում դրա մասին: Բավական է հիշել միայն 1870-ական թվականներին Բիսմարկի կողմից մղվող «մշակույթային պայքարը» Գերմանիայի կաթոլիկների դեմ, որոնք ֆիզիկական և բարոյական բռնության էին ենթարկվում և պիտակվում որպես պետության առաջին թշնամիներ: Ֆոնտանեի քննադատությունը այս ամենի հանդեպ թաքնված է իր վեպերում՝ կաթոլիկ կանանց կերպարների մեջ, որոնք գրեթե միշտ խոսում են Աստծո ողորմածության և ներողամտության մասին: Նրանց մեջ մարմնավորված է Մարիամ Մագդաղենացու՝ որպես մեղք գործած, բայց և այնպես Աստծո ներմանը արժանացած կնոջ կերպարը: Ի դեպ, Հիսուսի այս խոսքերը, այն է. «Ձեզանից ով անմեղ է, թող առաջի՛նը քար զցի նրա վրա»⁹, որպես մոտիվ

⁷ Fontane, Theodor-. Stechlin. Werke in zwei Bänden (Hanser s.d.), Bd II, S. 27

⁸ Ebd., S. 59

⁹ Ավետարան ըստ Հովհաննեսի: Գլուխ 8

անընդհատ կրկնվում է Ֆոնտանեի վեպերում: Օրինակ, նրա քահանաները հաճախ են մեջբերում Ավետարանից հենց այս խոսքերը, իսկ կաթոլիկ կանայք որպես կանոն միակ կերպարներն են լինում, որոնք ունակ են լինում ներել: Հիշենք միայն Ռոզվիթային «Էֆֆի Բրիստ» վեպում, որը երես չի թեքում Էֆֆիից, երբ վերջինս դատապարտվում և արհամարհվում է հասարակության կողմից:

Այն հանգամանքը, որ Ֆոնտանեն ներողամտությունը և հանդուրժողականությունը դիտում է որպես առավելապես կաթոլիկ դավանանքին հատուկ հատկանիշ, թույլ չի տալիս ենթադրել, որ նա նախապատվություն է տալիս այս կամ այն կրոնական ուղղությանը: Պարզապես Ֆոնտանեն բարձրաձայնում է այն վտանգավոր հետևանքների մասին, որին կարող է բերել կրոնական անհանդուրժողականությունը: Այդ հետևանքներին Ֆոնտանեն չհասցրեց ականատես լինել, որովհետև նա վախճանվեց 1878 թվականին, սակայն այն, ինչ տեսան Գերմանիայի ապագա սերունդները 20-րդ դարում, անմիջականորեն կրում էր նախորդ սերունդների կրած սխալների արդյունքը: Մեր օրերում Ֆոնտանեի այս զգուշացումները մարգարեություն են հիշեցնում, և սա պատճառներից մեկն է, որ նա այսօր շատ մեծ հետաքրքրությունն է վայելում թե՛ ընթերցողների, թե՛ գրականագետների կողմից: Ինչ վերաբերում է նրա կերտած քահանաների կերպարներին, ապա այստեղ Ֆոնտանեագետները միակարծիք են. Ֆոնտանեն, հիրավամբ, մեծ հուշարձան է կանգնեցրել իր ժամանակի Գերմանիայի լուսերական եկեղեցու և նրա սպասավորների համար՝ սերունդներին փոխանցելով առաքինի և մարդասեր քահանայի կերպարը, որը, եթե նույնիսկ շատ դեպքերում հեռու էր իրականությունից, այնուամենայնիվ, հավերժ է պահում քրիստոնեության հիմնական պատգամը՝ սերը դեպի մարդ արարածը:

Армине Мкртчян

ОБРАЗ СВЯЩЕННИКА В ПРОИЗВЕДЕНИЯХ Т.ФОНТАНЕ

Статья посвящена анализу образов священников, представленных в романах великого прозаика 19-го века Теодора Фонтане. В результате исследования выявляются те особенности, которые характеризуют образы священников. Писатель, в основном, создает такие образы, которые не соответствуют реальным образам священников своего времени. Фонтане, тем самым, осуждает консервативность церкви и воплощает в героях своего воображаемого идеала христианина, который руководствуется истинными ценностями.

Armine Mtrtchyan

THE PRIEST'S CHARACTER IN THE WORKS BY TH.FONTANE

This article is devoted to the analysis of the portraits of priests presented in the 19th century novelist and poet Theodor Fontane's novels. In the results of studies those features are revealed which characterize the portraits of priests and which

serve the questions and explanations made by the writer. Making mostly such portraits of priests which don't match with the real portraits of priests of that time Fontane thus condemns the conservatism of church and sees in his heroes the Christian who is guided by the real values - his imaginary ideal.

ԴԱԴԱԻՉՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ
(տրամանաբությունը, նշանագիտությունը)

Այս հոդվածի նպատակն է համառոտ նկարագրել դադաիզմի էությունը, տրամաբանությունը և նրա պայքարը էքսպրեսիոնիզմի դեմ:

1.0 Դադաիզմը Շվեյցարիայում և եզրույթի ծագման խնդիրը

Հայտնի է, որ դադաիզմը ծագում է ոչ թե «կենտրոնում»՝ քաղաքական իրադարձությունների առումով, այլ «ծայրամասում»՝ Յյուրիխում՝ «ամենամռայլ փողոցներից մեկում՝ ճարտարապետական ողերի ստվերում», որն, ըստ Հյուլզենբեկի, դառնում է նրանց «էքսպրեսիվնետալ բեմը» [Dada Almanach 1987:105]:

Նկատենք, որ «մարգինալ» դադաիստների համար փակ էին մեծ քաղաքների թատրոնները, դասախոսությունների համար նախատեսված սրահները: Դա էր պատճառներից մեկը, որ Յյուրիխի ռեստորաններից մեկը վերածվում է կաբարեի ու ստանում «Կաբարե Վոլտերի» անվանումը: Իսկ, օրինակ, Քյոլնում դադաիստների ցուցասրահ մարդիկ կարող էին մտնել միայն բուրավետ զուգարանի միջով անցնելուց հետո [Даданизм в Цюрихе 2001:7-8]: Անշուշտ, այսպիսի շարակարգը՝ ցուցասրահ-զուգարան, արվեստ-զուգարան, ավանդական հասցեատիրոջ համար անսպասելի էր, բայց նման շարակարգը խորթ չէր դադաիստների տրամաբանությանը (ալոգիզմ, անսպասելիություն, սկանդալայնություն, խաղ հասցեատիրոջ հետ և այլն):

Այժմ տեսնենք, թե ինչպես է Հ. Բալը ներկայացնում «Կաբարե Վոլտերի» հիմնադրումը:

Հ. Բալը իր «Երբ ես Վոլտեր կաբարեն հիմնադրեցի» (Als Ich das Cabater Voltaire grndete, 1926) նախաբանում գրում է, որ «մի քանի երիտասարդներ» ուզում էին «ոչ միայն իրենց անկախությունը վայելել, այլ նաև փաստել» [Ball ...:9754 (vgl. Ball-Schriften, S. 36)]: «Փաստագրումը» սկսվում է երգով, պարով, բանաստեղծություններ, մանիֆեստներ կարդալով, էպատաժով և այլն: Ինչպես նկատում ենք, դադաիզմի մեկնարկը չի գիտակցվում իբրև հակառեկացիա համաեվրոպական քաղաքական դաշտում տիրող իրավիճակին: «Պետք է նշել, - գրում է Հյուզո Բալը, - կաբարեի գործունեության և հետաքրքրության նպատակների մասին: Այն ուղղված էր պատերազմից ու հայրենիքից անդին մի քանի անկախներին հիշողության մեջ պահելու, որոնք այլ գաղափարներով էին ապրում» [Ball ...:9755 (vgl. Ball-Schriften, S. 37)]: Նույնիսկ հենց Հ. Բալի տեքստերում նկատելի է հակասականությունը, ինչը մոտեցնում է իր մտածողությունը դադաիզմին: Ասվածը հիմնավորում ենք նրանով, որ իր «Փախուստ ժամանակից» (Die Flucht aus der Zeit) վերնագրված օրագրերում՝ 1916 թ. հունիսի 12-ին, գրառումը ամբողջովին հակասում է նախորդ մեջբերված տեքստին. «Դադան պայքարում է ժամանակի և

մահվան շմուքի (Todestaumel) դեմ: ...Փորձում են անհնարինը հնարավոր դարձնել, այս քաղաքակիրթ ոճիրը՝ դավաճանությունը առ մարդը, գիշատչային վերաբերմունքը ժողովուրդների հոգու և մարմնի նկատմամբ, փորձում են քարոզել իբրև եվրոպական բանականության հաղթանակ» [Dada Zürich: Texte 2006:17,18]:

Անգամ դադաիստների պահվածքը պատճառաբանված էր «աշխարհիկ կրոնի» արժեքներով. «Դադան, - գրում է Հանս Արպը, - անհավատների բողոքն է անհավատության դեմ: Դադան հավատքի կարոտն է»¹:

Պատերազմ-դադա ակնհայտ կապը կարելի է տեսնել նաև Հանս Արպի մեկ այլ տեքստում: Նա իր «Դադաերկրում» (Dadaland) գրում է. «Տիաճություն զգալով 1914 թ. համաշխարհային պատերազմի մսաղացի նկատմամբ՝ մենք տրվեցինք Յյուրիխում գեղեցիկ արվեստներին: Մինչ հեռուներում կրակում էին թնդանոթները, մենք ամբողջ ուժով երգում, նկարում, սոսնձում և բանաստեղծություններ էինք գրում: Մենք փնտրում էինք պարզունակ արվեստը, որը բուժում էր մարդկանց ժամանակի խելագարությունից և վերակառուցում էր նոր կարգ՝ հավասարակշռություն երկնքի և դժոխքի միջև» [Expressionismus 1965:181]²: Մեջբերված հատվածները հստակ ցույց են տալիս ցյուրիխյան դադաիստների գիտակցված գրական-գեղագիտական խաղի անինքնանպատակության մասին: Նրանց գործունեությունը միտված էր կատարելու հոգեթերապևտիկ դեր («բուժում էր մարդկանց ժամանակի խելագարությունից»): Դադաիստական գործունեությունը ինքնանպատակ խաղ չէր: Նրա շարժառիթը համաեվրոպական սոցիալ-քաղաքական իրադարձություններն էին: «Դադայի ակունքները, - գրում է Տ. Յարան, - սրտխառնոցից էր, զգվանքից» (Die Anfänge von Dada waren die Anfänge eines Ekels)³:

Բացի այդ՝ խաղայինը դադաիզմում իմաստների սերման հնավորություն է տալիս: Հանս Արպը իր մի բանաստեղծության միջոցով «պատմում» է դադաիզմի ծագման մասին և միաժամանակ ներկայացնում դադային բնորոշ պոետիկան ձայնանմանության միջոցով. «Vor 50 Jahren war dada da, // da dada da war, // eh dada da war // war dada da, // als dada da war»⁴:

Ըստ Հյուզենբեկի՝ դադան չունի սկիզբ ու վերջ: Այս պնդումը հակասում էր Հանս Արպի դիրքորոշմանը: Սակայն նկատենք, որ դադաիզմի պատմությունը պետք է համարել 1916 թ. փետրվարը, երբ ծնվում է «դադա» եզրույթը: Հուգո Բալի «Բացման մանիֆեստ. 1916 թ. հուլիսի 14-ի

¹ Մեջբերումը՝ ըստ [Richter 1988:118]:

² Ռուսերեն թարգմանությունը Վ.Դ.Սեդելնիկի մենագրության հավելվածում: Տե՛ս [Седельник 2010]

³ Մեջբերումը՝ ըստ [Richter 1988:117]

⁴ «Հիսուն տարի առաջ դադան այստեղ էր // քանի որ դադան այստեղ էր // Էհ դադան այստեղ էր, այստեղ էր դադան // երբ դադան այստեղ էր»: Մեջբերումը՝ ըստ [Illustrierte Geschichte 1990:290]:

Յյուրիխում դադաիստների առաջին երեկո»-յի (Eröffnungs-Manifest 1916) ժամանակ հնչեցված տեքստում տրվում է «Դադա» բառի բացատրությունը:

Դադաիզմի տրամաբանությունը կարելի է տեսնել հենց նրա անվան մեջ: Ինչպես էքսպրեսիոնիզմի պարագայում, այնպես էլ դադաիզմի՝ «դադա» բառի նշանակությունը անհստակ է, այսինքն՝ նշանակիչի և նշանակյալի, նշանակյալի և ռեֆերենտի միջև առկա է ահռելի անդունդ: Ըստ Հյուգո Բալլի՝ «դադա» ֆրանսերեն նշանակում է «փայտե ձի», գերմաներենում՝ «դեհ» (հաջողություն մաղթելիս), կանգնիր, խնդրում եմ, իմ հետևում, մինչ նոր հանդիպում մյուս անգամ, ռումիներենում՝ «Այո իրավամբ, դուք իրավացի էք, այդպես է» կամ մատնանշում երեխայական աշխարհը:

Ուշագրավ է Մարինա Իգյումսկայի հոդվածում նշված մի փաստը: Յյուրիխում՝ 1981 թ., գոյություն ուներ օժանելիքներ արտադրող մի ֆիրմա «Bergmann & Co» անվամբ, որն արտադրում էր «Դադա» կոչվող օճառ և մազերի համար բալզամ: Այս ֆիրմայի խորհրդանիշը իրար հատող ձիերն էին [Dada Almanach 2000:125]: Եվ հենց այս պատճառով էլ Հ.Բալլը իր առաջին մանիֆեստում դադան բնութագրում է իբրև «աշխարհի լավագույն շուշանահոտ օճառ» (Dada ist beste Lilienmilchseife der Welt) [Manifeste und Proklamationen 1995:121]:

«Դադա» բառին Տ. Յարան հանդիպել է Լյարուսի բառարանը թերթելիս: Ըստ այլ վարկածի՝ դադա նշանակում է երեխայի դեռևս անհողաբաշխ խոսքը, որում, իհարկե, հասուն աշխարհի համար ոչինչ հասկանալի չէ, բայց իմաստազուրկ վանկերը երեխայի օնտոգենեզում վկայում են նրա բնականոն զարգացման մասին: Դա մի յուրօրինակ «խոստում» է նրա՝ մոտ ապագայում զարգացման մասին՝ վանկից բառի, բառից բառակապակցության, բառակապակցությունից նախադասության անցնելու առումով: Ինչպես նկատում ենք, հենց «իզմ»-ի անվան (նշանակիչի) և նրա իմաստի (նշանակյալի) միջև առկա է արդեն «աղմուկը»:


Այս «աղմուկը» լավագույնս երևում է Ռ. Հյունզենբեկի «Դադա այլմանախի» «Նախաբանում» (մայիս, 1920), որտեղ կարդում ենք. «դադան աշխարհի բարոյականությունների վրա պարող ոգի է, ...դադան աքսիոմա չէ, դադան հոգեվիճակ է՝ անկախ դպրոցներից ու տեսություններից..., դադան անմիջական ու բնական է: Եթե ողջ ես, դադաիստ ես: ...Դադան իր ժամանակի ամենամիջական և կենդանի արտահայտությունն է, մերժում է ամեն ինչ՝ համարելով հնացած, մումիֆիկացված, լճացած: Նա ձգտում է ռադիկալության...: ...Դադան ստեղծում է հակամշակույթի որոշակի քարոզչություն: ...Դադան պայքարում է, օրինակ, մշակույթի գաղափարախոսության դեմ, որը համարում է ամենամեծ ու նողկալի սուտը: ...Դադան նպատակ չունի ստեղծել համակարգ, որը դիմում է մարդկանց հետևյալ բառերով՝ «դու պետք է»: ...Դադան բնական ստեղծագործական ակտ է: Դադայի գլխից ծնվում է և՛ լույսը, և՛ արգելակումը, և՛ արդիականության տեմպը» [Dada Almanach 1987:3-9]: Ինչպես նկատում ենք, մեջբերված հատվածները հնարավորություն են տալիս հասկանալու,

թե ինչ միտում ունի դադան, ինչ համատեքստում է գործառնում, ինչի դեմ է ուղղված: Սակայն, ասվածի կողքին հանգիստ կարող է ապրել նաև այն միտքը, որ այս ամենը սուտ է: Սա նույնպես դադաիզմի տրամաբանության մաս է կազմում:

Այժմ տեսնենք, թե ինչպիսին էր դադայի տրամաբանությունը:

1.1 Դադաիզմի տրամաբանությունը

Դադաիզմի նշանակերտումը բացատրելու համար նպատակահարմար ենք համարում նկարագրել այն նշանագիտական եռանկյունու վրա:



Ինչպես հայտնի է, դադաիստական տրամաբանությունը մերժում է ամեն ինչ, անգամ ինքն իրեն: Տրամաբանության լեզվով դա ենթադրում է, որ A-ն B-չէ, B-ն C-չէ, C-ն էլ D-ն չէ և այլն և անգամ A-ն էլ A-չէ: Այսինքն՝ դադաիստական տրամաբանությունը գործառնում է (ինքնա) մերժման սկզբունքով, խաղային ձևով: Դա հստակ երևում է Տրիստան Յարայի «Դադա մանիֆեստ 1918» (Manifest Dada 1918) տեքստում, որտեղ կարդում ենք. «Ես գրում եմ մանիֆեստ և ոչինչ չեմ ուզում, այնուամենայնիվ, ասում եմ ինչ-որ բաներ, և ես սկզբունքորեն դեմ եմ մանիֆեստներին, միաժամանակ սկզբունքների դեմ եմ: Ես գրում եմ այս մանիֆեստը, որ ցույց տամ, որ կարելի է միաժամանակ անել հակառակ գործողություններ» [Dada Almanach 1987:117-118]:

Տ. Յարայի տրամաբանությունը բացահայտ կարելի է տեսնել նաև 1918 թ. դեկտեմբերի DADA 3 սուարեում. «Քանդենք կլինենք խելամիտ ստեղծենք նոր գրավիտացիա ՈՉ=ԱՅՈ» [Dada Almanach 1987:22]⁵: Հենց այս նոր «գրավիտացիոն» դաշտում է գործառնում Տ.Յարայի մանիֆեստը: Բայց հետաքրքրականն այն է, որ Տ. Յարայի մանիֆեստում հակասական տրամաբանությունը արտահայտվում է հենց նույն մանիֆեստում նաև բանաձևի տեսքով՝ «կարգավորվածություն=քաոս, ես=ոչ-ես, հաստատում=մերժում. այսինքն՝ բացարձակ արվեստի բարձրագույն արտացոլում» [Dada Almanach 1987:122]: Ստացվում է, որ հակասականությունը ոչ միայն դադաիզմի առաձնահատկությունն է, այլ նաև արվեստի: Սեմիոտիկ առումով Տ. Յարայի ասածը հիմնավորված է, քանի որ գեղարվեստական ստեղծագործությունը էնտրոպիայի հաշվին է դառնում «շնչող» և ոչ թե՛ կարգավորվածության, միանշանակության:

⁵ Նույնը՝ [Альманах Дадa 2000:19]:

Այո և ոչ-ի համերաշխ համագոյակցումը դադաիզմում ինքնին վկայում է հարաբերական արժեքների դաշտի ձևավորման, տրամաբանականի թուլացման և խաղայինի, իռացիոնալի, պահվածքի⁶ մակարդակում տարօրինակության առկայության մասին: Պետեր Սլոտերդայկը իր գրքի «Վայմարյան ախտանշան» բաժնում անդրադառնում է դադաիզմի տրամաբանությանը: «Դադաիստական քառասագիտությունը. իմաստաբանական ցինիզմներ» (Dadaistische Chaotologie. Semantische Zynismen) հատվածում քննադատում է դադաիզմը, որ «դադաիզմը ցույց էր տալիս ցինիկ շոուներ» [Sloterdajk 1983:726]: Սլոտերդայկի ուշադրության կենտրոնում է հայտնվում Ռ.Հյուլզենբեկի «Դադա մանիֆեստ 1918»-ում հնչեցված հետևյալ միտքը. «Մենք դեմ էինք պացիֆիստներին, որովհետև պատերազմը մեզ հնարավորություն տվեց ամբողջ փառքով գոյություն ունենալ» [Sloterdajk 1983:713]: Այս արտահայտությունը Սլոտերդայկի համար անընդունելի է և՛ բարոյական, և՛ հոգեբանության տեսանկյունից: Այս տեքստի ընկալման համար առաջարկում է նախևառաջ պատրաստվել հասկանալու «հեզնա-բանավիճային խոսելաճը» (ironisch-polemische Sprechweise) [Sloterdajk 1983:713]:

Կարծում ենք, որ Սլոտերդայկը Հյուլզենբեկի տեքստը քննադատում է «մասի» մակարդակում և ոչ թե «ամբողջի»: Ճիշտ չէ ընտրված Սլոտերդայկի մեկնաբանության կողը (էթիկան, հոգեբանությունը): Կարծում ենք՝ Հյուլզենբեկի և մյուս դադաիստների նպատակը իրենց հոետորաբանությամբ (նշանակիչների մակարդակ) հանրության ուշադրությունը գրավելն էր: Անշուշտ, նման արտահայտությունը բարոյականության տեսանկյունից անընդունելի է, իսկ դադաիստների գործաբանական չափման համատեքստում՝ ընդունելի: Եթե Սլոտերդայկը ուշադրություն դարձնեք հենց Ռ.Հյուլզենբեկի և բեռլինյան դադաիստների պահվածքին և ասույթին, ապա իր՝ «մասի» շուրջ ծավալված մեկնաբանությունները ամբողջովին այլ ուղով կընթանային: Խնդիրն այստեղ այն է, որ Հյուլզենբեկի նման արտահայտությունը ոչ թե մատնանշում է իր դենոտատի («դեմ էին պացիֆիստներին, իր հերթին՝ կողմ պատերազմին»), այլ հենց դադաիստական կողի վրա, այն է՝ հեզնա-սաբոտաժային լեզվով ազդել հանրության վրա, հանրության ուշադրությունը գրավել, ինչպես երեխան է իր չարաճճիությամբ գրավում մեծերի ուշադրությունը:

Այլ խոսքով ասած՝ նշանակիչներում արտահայտված իմաստները, արժեքները հիմք չեն դադաիզմի էությունը հասկանալու համար (օբյեկտ,

⁶ Այս առումով հետաքրքրական է Բաադերի արարքը, երբ կես ժամ առաջ սկսվող դադաիստական ներկայացումից առաջ Պրահայում գողանում է ձեռագրերը և Հյուլզենբեկին ու Հաուզմանին թողնում երեք հազար հանդիսատեսի առջև՝ նրանց խայտառակելու ու «հոշոտելու» (Հանս Բաումանի «Մի մասնավոր դադաիստական գործի վերաբերյալ» (Eine dadaistische Privatangelegenheit) [Dada Almanach 1987:29-35]:

ռեֆերենտ): Եվ միաժամանակ, տեքստերում տեղ գտած արժեքները, իմաստները հիմք չեն դառնում հասկանալու, թե վերջապես ինչ է դադաիզմը: Փաստորեն, ստացվում է, որ դադաիզմի կողմը⁷ կառուցված է «աղմուկի» հիման վրա: Հակված ենք պնդելու, որ Պ.Սլոտերդայկը հենց այս դադաիստական ծուղակն է ընկնում, երբ մեկնաբանում է Ռ.Հյուզենբեկի մանիֆեստի միայն մի հատվածը: Դադաիզմի ընկալման «բանալին» երևան է գալիս ոչ թե «մասի» ուսումնասիրության մեջ, այլ, երբ «մասը» բացվում է «ամբողջի» տրամաբանության մեջ: Հակառակ դեպքում՝ մեկնաբանության ժամանակ առաջանում է «աղմուկ»:

Դադաիզմում «աղմուկի» մասին գրել է Սերգեյ Կուդրյավցևը. «Դադան ներառում է ունիվերսալ էնտրոպիայի՝ անորոշ արտահայտության (շեղատառերը Կուդրյավցևին են.- Տ.Ս.) մեթոդը» [Альманах Дада 2000:3]: Ասվածը ենթադրում է, որ դադայի հիմնական ասելիքը կողավորված է ոչ թե նրա միանշանակության մեջ, այլ ընդհակառակը՝ էնտրոպիայի չափով է որոշվում ասելիքի կարգավորվածությունը/չկարգավորվածությունը⁸: Դադան ձգտում է էնտրոպիայի բարձր մակարդակի: Ինչու՞:

Յո.Բաադերը «Դադա ակումբի դեկլարացիայում» գրում է. «Դադան քառսն է, որից առաջանում են հազարավոր կարգավորվածություններ, որոնք նորից վերամարմնավորվում են դադայի քառսում» [Dada Almanach 1987:132]: Ինչպես նկատում ենք, քառս-կարգավորվածություն բևեռները Բաադերը տեսնում է դիալեկտիկ կապի մեջ: Այսինքն՝ դադաիստական քառսայնության հետևում թաքնված է կոսմոսը: Ուսումնասիրողի խնդիրն է հենց այս դադաիստական քառսի մեջ (կամ առաջին հայացքից չկարգավորվածության մեջ) մտցնել կարգավորվածություն, այսինքն՝ «կարգավորել» բանականությամբ: Այս տրամաբանությունը տեսնում ենք նաև Հ.Բալի՝ 1916 թ. հունիսի 12-ին կատարած գրառման մեջ. դադան «խեղկատակային խաղ էր ոչնչից» (ein Narrenspiel aus den Nichtst): Բալը իր նման ձևակերպմամբ կարգավորում է չկարգավորվածը:

Նկարագրված նշանագիտական առումով իմաստաբանական «աղմուկը» ուղեկցվում է նաև իսկական աղմուկով: Դադաիստական ներկայացումների՝ սուարենների ժամանակ: Օրինակ՝ դադաիստական երեկոների ժամանակ օգտագործվում էին արվեստի տարբեր տեսակներ (երաժշտություն, պար, գրականություն, գեղանկարչություն): Օրինակ՝ 1917 թ. մարտի 17-ին ցուցադրվում են երեխաների կտավներ, ինչպես նաև Կամպենդոկի, Կանդինսկու, Կլեեի, Մենզեի: Հնչում էին սևամորթների երաժշտություն, պար [Dada Almanach 1987:16,19], կարելի էր տեսնել նաև սևամորթների քանդակագործություն: Այս «քառսայնությունը» ունի նաև իր

⁷ Կող ասելով հասկանում ենք նշանակիչի և նշանակյալի միասնությունը:

⁸ Մենք մեր վերլուծության ընթացքում օգտագործում ենք հաղորդակցության տեսության հետևյալ մետալեզու հակադրությունները՝ կոսմոս // քառս, տեղեկատվություն // աղմուկ/էնտրոպիա:

տրամաբանությունը, այն է՝ քանդում են մշակութային եվրոպակենտրոնությունը:

Սուարենների ժամանակ բեմական ատրիբուտներ էին (դիմակներ, հանդերձանք) օգտագործվում: Սիմուլտանային պոեմներ էին գրվում, երբ միաժամանակ մի քանի կատարողներ տարբեր լեզուներով կարդում էին այդ ստեղծագործությունները դադա երեկոների ժամանակ⁹: Այս «աղմուկի» հետևում թաքնված է ևս մի կարևոր մի միտում, այն է՝ դադախստները խաղում են հասցեատիրոջ, հանդիսատեսի ընկալման, սպասումների հետ:

Նույնիսկ առաջին հայացքից թվացյալ պատահականություններում կարելի է տեսնել տրամաբանություն: Պատահական չէ ընտրված դադախստական առաջին կաբարեի անվանումը, նրա ժամանակային մեկնարկը: Պատահական չեն ընտրված դադա շարժման և" անունը, և" դադաիզմի մեկնարկը, և" Հուգո Բալի խոսքը («Բացման մանիֆեստ. 1916 թ. հուլիսի 14-ի Յյուրիխում դադախստների առաջին երեկոյի» (Eröffnung-Manifest 1916): Եթե Վոլտեր անունը մատնանշում է լուսավորական գաղափարների, հասարակության մոդեռնիզացման ջատագովին, ապա հուլիսի 14-ը հիշեցնում է Ֆրանսիական մեծ հեղափոխության մեկնարկի մասին [Manifeste und Proklamationen 1995:119]:

Փաստորեն, «կարգավորողը» պետք է գտնի ալոգիզմի, չկարգավորվածության ներքին տրամաբանությունը: Ֆր. Նիցշեն մի առիթով՝ «Այսպես խոսեց Զրադաշտը» երկում, գրում է. «Սիրո մեջ միշտ խելագարության պահ կա: Բայց նաև խելագարության մեջ միշտ որոշ չափով բանականություն կա» [Nietzsche 1976:44]: Կարծում ենք, որ այս խոսքերը լիովին մոտ են դադաիզմի տրամաբանությանը:

Դադախստական այս հոետորաբանությունը երկար չի տևում: Աստիճանաբար դադախստները ներքաշվում են մեկ այլ «իզմ»-ի մեջ: Եթե Ֆրանսիայում դադախստները (Տ. Յարա, Ի. Գոլ, Մ. Էրնստ, Հանս Արփ, Էմմի Հենինգս, Ռիխարդ Հյուլզենբեկ, Մարսել Յանքո և այլոք) միաձուլվում են բեղուն սյուրռեալիզմին, ապա Գերմանիայում այն իր տեղը զիջում է «Նոր օբյեկտիվությանը»:

1.3 Դադախստների պայքարը էքսպրեսիոնիզմի դեմ

Բեռլինյան գրական դաշտում դադախստները ակտիվ պայքար են սկսում մղել նախորդող բոլոր «իզմերի» դեմ. հիմնական թիրախը էքսպրեսիոնիստներն էին:

Այս պայքարի լավագույն տեքստերից են «Դադախստական մանիֆեստը» և Ռիխարդ Հյուլզենբեկի՝ մանիֆեստին նախորդող տեքստը՝ «Ի՞նչ էր ուզում էքսպրեսիոնիզմը» (Was wollte der Expressionismus?, 1918), Ռաուլ Հաուզմանի «Վերադարձ առարկայականությանը արվեստում»

⁹ Անշուշտ, այս «հայտնագործությունը» պատկանում էր Մարինետին, սակայն դադախստները այս «մեթոդը» կատարելագործում են:

(Rückkehr zur Gegenständlichkeit in der Kunst, 1920) և Ալեքսանդեր Պարտենսի¹⁰ «Դադա-արվեստ» (Dada-Kunst, 1920) տեքստերը:

Ռիխարդ Հյուլզենբեկի «Ի՞նչ էր ուզում էքսպրեսիոնիզմը» տեքստի վերնագրում անցյալով հարուցված հարցը (wollte) վկայում է էքսպրեսիոնիզմի անցյալում լինելու մասին: Ռ.Հյուլզենբեկը քննադատում է էքսպրեսիոնիզմի ուղղվածությունը դեպի մարդու ներքին աշխարհ և իր ժամանակաշրջանը: Դադաիզմը ընկալվում է իբրև էքսպրեսիոնիզմին ներհակ երևույթ. «էքսպրեսիոնիզմը ուզում է ներայնացնել (ինտերիորիզացիա.- S.U.), ընկալում է իրեն՝ իբրև ռեակցիա ժամանակի դեմ, մինչդեռ դադան ոչ այլ ինչ է, քան ժամանակի արտահայտություն» [Dada Almanach 1987:35]:

Բեռլինյան դադաիստները էքսպրեսիոնիստներին մեղադրում են ապաքաղաքական լինելու մեջ, նրանց ստեղծագործությունը համարում են «հոգնած մարդկանց ժեստ, որոնք ուզում էին դուրս բերել հենց իրենց իսկ միջից՝ մոռանալով ժամանակը, պատերազմը և տանջանքները», չնայելով «ժամանակի ահավոր դեմքին» [Dada Almanach 1987:35]: Բացի այդ, երբ էքսպրեսիոնիզմը դառնում է ժամանակակից (մոդայիկ), «բոլոր իր դիրքորոշումներով նպաստում է գերմանական ոգու թուլացմանն ու հոգնեցմանը» [Седельник 2010 (En avant dada)]:

Ինչպես նկատելի է, էքսպրեսիոնիզմի ապաքաղաքական կողմնորոշմանը դադաիստները հակադրում են իրենք իրենց. «Դադան, - գրում է Հյուլզենբեկը, - մտնում է իրերի մեջ: Էքսպրեսիոնիզմը ուզում է ինքն իրեն մոռանալ, դադան ուզում է հաստատվել» [Dada Almanach 1987:36]: Ստացվում է՝ դադաիստները, դասական կերպով հիմնական «թշնամի» «իզմը» քննադատելով, հաստատում ու օրինականացնում են իրենց գրական դաշտում:

Ըստ Կուրտ Շվիտտերսի՝ անգամ 1918 թ. հետո էքսպրեսիոնիզմը «կոկետությամբ էր կերտում հեղափոխական ծամաձոռությունը», ապա ի հակադրություն դադաիզմի՝ այն «կերտում էր հեղափոխական գործեր՝ ներկայանալով հնարավորինս վճռական» [Седельник 2010 (Дадаизм)]: Անշուշտ, այս դադաիստների հնչեցված տեսակետները միակողմանի են, քանի որ արդեն իսկ էքսպրեսիոնիստների հրատարակվող օրգանների անունները¹¹ «Sturm» (գրոհ), «Aktion» (գործողություն), «Revolution» (հեղափոխություն), «Die freie Straße» (Ազատ ճանապարհ), «Das neue Pathos» (Նոր պաթոս), վկայում են էքսպրեսիոնիստների գաղափարական, քաղաքական բարենորոգումների մասին:

«Դադաիստական մանիֆեստում» էքսպրեսիոնիզմին մեղադրում են ոչ միայն ապաքաղաքական լինելու մեջ, այլ նաև ապաստցիալականության:

¹⁰ Այս տեքստի իրական հեղինակներն էին Տ.Յարան, Հ.Արպը և Վ.Սերները: Սա դադաիստներին բնորոշ միստիֆիկացիայի արդյունք էր:

¹¹ Այս երևույթի վրա ուշադրություն է դարձրել Կորտե Հեմանը իր «Դադաիստները» աշխատության մեջ: Տե՛ս [Korte 1994:21]:

«Մամուլի, գովազդի, սենսացիաների նկատմամբ եղած ատելությունը խոսում է այն մասին, որ նրանց բազկաթոռները ավելի կարևոր են, քան փողոցի աղմուկը» [Dada Almanach 1987:37]: Դադաիստների քննադատություններից կարելի է եզրակացնել, որ նրանք քննախոսում էին «այջ» էքսպրեսիոնիստներին, որոնք կենտրոնացած էին «Շտուրմ» օրգանի շուրջ, բայց նույնը չի կարելի ասել «Ակցիոնի» շուրջ հավաքվածների մասին: Այս առումով կարելի է փաստել, որ բեռլինյան դադաիստների, «ծախ» էքսպրեսիոնիստների և «նոր օբյեկտիվության» ներկայացուցիչների քաղաքական դիրքորոշումները համընկնում էին:

Այժմ տեսնենք, թե դադաիստական վերոնշյալ մյուս տեքստերում ինչպես է քննադատվում էքսպրեսիոնիզմը:

«Դադա-արվեստ»-ում (Dada-Kunst, 1920) դադաիստների քննադատությունը «ընդլայնվում է»: «Էքսպրեսիոնիզմի կեղծավորությունը, ֆուտուրիզմի կեղծ պաթոսը, կուբիզմի սալոնայնությունը» դառնում են արդեն «հնացած» (abgelebt), «շաբլոն դարձած» (Schablon-Gewordene): Ինչպես նկատում ենք, այս բնութագրումները զգայականի տարածքում են, սակայն այս նույն տեքստում հիմնական հարվածը ստանում է «ամենագերմանական» «իզմը»՝ էքսպրեսիոնիզմը:

ա. Էքսպրեսիոնիզմը ընկալվում է այս հեղինակների կողմից՝ իբրև «պլակատային ոճ» (Plakatsstil): Այն համարում են «ողորմելի նորարարության» փորձ (arme Neuerung), ընդամենը «սիմվոլիզացիա էր», որն իր վերջնական տեղը գտնում է պատի վրա [Dada Almanach 1987:85]: Փաստորեն, դադաիստները էքսպրեսիոնիստական գրականությունը մի յուրօրինակ սիմուլյակր են համարում, որտեղ «համակարգված հոգեբանությունը, հոգեվերլուծական սիմվոլիզացիան (էքսպրեսիոնիզմը) ի վիճակի չէին բոլորի կողմից պահանջվող հույզերը փոխանցելու» [Dada Almanach 1987:88]:

Նման ձևակերպումների հետ համաձայն չենք, քանի որ դադաիստ հեղինակները էքսպրեսիոնիզմը իջեցնում են զուտ հոգեվերլուծական մի գրականության մակարդակի, որում նշանակյալները բացակայում են, ինչի արդյունքում այս «իզմը» դատապարտվում է պատին փակցված լինելու: Էքսպրեսիոնիստական գրականության մեջ տեղ գտած անհատի հոգեկան ապրումների նկարագրությունները միջոց են դառնում տվյալ ժամանակաշրջանի մարդկաց ապրումները հասկանալու համար:

Ըստ դադաիստների՝ էքսպրեսիոնիզմի ապաքաղաքական, ապասոցիալական լինելուց բացի՝ նրանց մեղադրում են նաև անգործունակության մեջ: Այս մոտեցումը տեսանելի է «Դադաիստական մանիֆեստում», որի հեղինակներն էին Տ.Ցարան, Մարսել Յանկոն, Ռ. Հյուլզենբեկը, Ռաուլ Հաուզմանը, Վալտեր Մերինգը և այլն: Ըստ նրանց՝ նատուրալիզմի դեմ պայքարի դուրս եկած էքսպրեսիոնիստները հայտնվում են «վերացական-պաթետիկ ժեստերի» տարածքում, ինչը «նախադրյալ է ստեղծում անիմաստ, հարմարավետ, և անշարժ կյանքի» արտացոլման համար [Dada Almanach 1987:37]:

«Կոնֆորմիստական» էքսպրեսիոնիստական գրականությանը և նրա «ստատիկ» պոեզիային դադան հակադրում է իր ձեռքբերումները՝ բրուիստական, սիմուլտան¹² բանաստեղծությունը: Ֆուտուրիստական արմատներ ունեցող բրուիստական բանաստեղծությունը վերադարձնում է ընթերցողին իրականություն, որտեղ «տրամվայի վագոնը պատկերվում է ինչպես որ է, տրամվայի էությունը թռչակառու Շուլցեի հորանջի և արգելակման գոռոցի հետ» [Dada Almanach 1987:39]: Բացի այդ՝ էքսպրեսիոնիստական պոետիկային հակադրում է սիմուլտան («աղմկոտ») բանաստեղծությունը, որն ըստ դադաիստների՝ «սովորեցնում է բոլոր իրերից առաջացած քառասյին վիճակի իմաստը, որի ժամանակ պարոն Շուլցեն կարդում է, որ բալկանյան գնացքը անցնում է Նիշի մոտի կամրջով և խոզը, բողբոջով խոխոացնում է, մագործ Նուտտկեի նկուղում» [Dada Almanach 1987:39]: Ինչ վերաբերում է «բոլոր իրերից առաջացած քառասյին վիճակի իմաստը» դուրս բերելուն, ապա այս մոտեցումը կինոյում, եթե անգամ անմիջական տեղ չի գտնում գրականության մեջ, անժխտելի է. օրինակ՝ «Բեռլին՝ մի մեծ քաղաքի սիմֆոնիա» (Berlin- Die Sinfonie einer Großstadt, 1927), Ջիգա Վերտովի «Մարդը ֆոտոապարատով» (Человек с фотоаппаратом, 1927) ֆիլմերը ասվածի լավագույն օրինակներն են:

Վերջին մեջբերված հատվածից կարող ենք նաև եզրակացնել, որ բեռլինյան դադաիստները կողմ էին գրականության մեջ իրականության պատկերմանը: Այս քննադատությունը «լսում» են Նոր օբյեկտիվության ներկայացուցիչները՝ իրենց արտացոլման ու քննադատության թիրախ դարձնելով Վայմարյան Հանրապետության կյանքն ու բարքերը:

Այս հեղինակները իրենց վեպերում արտացոլման մոդուս են դարձնում նաև դադաիստների հիմնական «զենքը»՝ հեգնանքը: Վերջինս հստակ երևում է վերջին մեջբերման մեջ, որտեղ «բոլոր իրերից առաջացած քառասյին վիճակի իմաստի» կերտման սկզբունքը հակադրվում է նկարագրական արձակին: Ասիմետրիկ հակադրությունների միջոցով (բալկանյան գնացք / խոխոացող խոզ, պարոն Շուլցե/մագործ Նուտտե) արտահայտված միտքը ներկայացվում է հեգնաբար:

Ամբողջությամբ հեգնանքով է քննադատում էքսպրեսիոնիզմը Ռաուլ Հաուզմանն իր մի քանի հոդվածներում: Օրինակ՝ «Վերադարձ առարկայականությանը արվեստում» նա «իզմերը» քննադատում է ուտելիքի հետ կապելով: Օրինակ, Ֆրանսիայում կուբիզմի առաջացումը կապում է նրանց «ջրիկ ճաշերի ուղղվածության հետ»: «Գերմանիան՝ արևմտակետրոնական պետությունը, տատանվելով արևմտյան բանաձևերի և արևելյան անձնության միջև, վերջապես ծնում է էքսպրեսիոնիզմը, որում գերմանական ոգու ամբողջ անհասկանալին, անընկալելին ազատ ու խաղաղված լողում է, ինչպես մագնդիկները բուլիոնում» [Dada Almanach

¹² Սիմուլտան բանաստեղծությունները կարդում էին բեմի վրա միաժամանակ մի քանի մարդ «տարբեր լեզուներով, ուրիշով, տոնայնությամբ» [Dada Almanach 1987:106]:

1987:148]: Հաուզմանը ուտեստային համանմանություններով է բնութագրում նաև էքսպրեսիոնիզմի կայացման պատճառները: Ըստ նրա՝ «իտալացիները իրենց հորթի մսի, պալենտայի և կարմիր գինու շնորհիվ, պետք է միշտ ցանկացած համաշխարհային (պատմական.-S.U.) իրավիճակներում հակված լինեն դեպի հստակությունը, դրան հակառակ՝ գերմանացիները իրենց ապուրով, բուտերբրոդներով և գարեջրով հանգեցին իրերի՝ էքսպրեսիոնիզմ կոչվող զզվելի մթագնման» [Dada Almanach 1987:148]:

Մեկ այլ տեղ էլ Հաուզմանը գերմանացիներին մեղադրում է «անփառունակ փորլուծության և փորկապության փոխհերթափոխի մեջ, որն արտահայտվում է Կանտի փիլիսոփայության մեջ և Գյոթեի «Ֆաուստի» երկրորդ մասում, կամ, ասենք, Շտրամի բառերի դասավորության (շարակարգի) մեջ» [Dada Almanach 1987:150]: Մեջբերումները ցույց են տալիս, թե Հաուզմանը ինչ հեզնական, անգամ սարկազմի հասնող մոդուսի մեջ է դիտարկում էքսպրեսիոնիստական գրականությունը: Նկատելի է նաև դադաիստի անհանդուրժողականությունը իրենց նախորդող գրողների, փիլիսոփաների նկատմամբ: Այս միտքը հաստատվում է Ռաուլ Հաուզմանի «Ի սկզբանե էր դադան» գրքի նախաբանում տեղ գտած գրառումների հիման վրա. «Դադա-շարժումը ամբողջական խզում էր անցյալի հետ, ամենից առաջ տիրող 19-րդ դարի գաղափարների, ինչպես նաև 17-րդ և 18-րդ դարի դեմ: ...Դադան կոնֆլիկտ էր ԱՄԵՆԻ հետ: Թաքնված նոր գիտակցության մեջ» [Hausmann 1992:7]:

Նկատենք, որ հեզնանքն ու սարկազմը ոչ միայն հեղինակային, այլ նաև դադայի ագրեսիվության նշաններն են: Հաուզմանի այս սուր քննադատության ձևը դադաիստական մտածողության լավագույն օրինակներից է: Նույն տոնայնությունը Հաուզմանը պահպանում է նաև «Գերմանացի քաղքենին զայրանում է» (1919) հոդվածում, որտեղ նույնպես ճաշայինի և աղի-ստամոքսային տրակտի համատեքտում է ծաղրում էքսպրեսիոնիզմը¹³ անվանելով այն «թեյի համար նախատեսված կեղծ աստվածաբանական-գերմանական օղակաբլիթ» [Дадаизм в Цюрихе 2001:285]: Հաուզմանը անգամ մեղադրում է էքսպրեսիոնիզմին «բացարձակապես անընդունակության մեջ», քանի որ այն ի վիճակի չէ «որևէ բան ասելու, իրերի էությունը հասկանալու, հաղթելու»: Այն մի «խոնավ հոգևոր կոմպրես է փթած ներքին օրգանների համար...» [Дадаизм в Цюрихе 2001:286]: Մեկ այլ հոդվածում Հաուզմանը նույն հռետորաբանությամբ է արտահայտվում էքսպրեսիոնիստ նկարիչների հասցեին, որոնք, իր կարծիքով, «հանգում են համարյա աստրալ թուլամտության գույնի ու զծերի արժեքի շուրջ, որ մեկնաբանեն այսպես կոչված հոգու ձայները» [Дадаизм в Цюрихе 2001:286]:

¹³ Այստեղ քննադատության թիրախ են դարձել բանաստեղծներ Կարլ Այնշտայնը, Ֆերդինանտ Հարդբուխը, տեսաբան Կուրտ Հիլերը և «Շտումի» խմբագիր՝ Հերվարթ Վալդենը [Дадаизм в Цюрихе 2001:503]:

Եթե Հաուզմանի մինչ այժմ մեջբերված տեքստում էքսպրեսիոնիզմի քննադատությունը կրում է սպեկուլյատիվ, ոչ կառուցողական, խիստ զգայական բնույթ, ապա գերմանական քաղաքական էլիտայի հավակնությունների առումով բավական դիպուկ է: «Գերմանացիներին, - գրում է Հաուզմանը, - խորհուրդ է տրվում զբաղվել պլանավորված մսագնդիկներով, մսագնդիկների ու բուն բուլիոնի տարանջատմամբ, հակառակ դեպքում՝ ոչինչ չեն տեսնի, բացի կանացի երշիկատքերից, աշխարհը տիրելու պլաններից (Weltbeherrschungspläne) և էքսպրեսիոնիզմից, այսինքն՝ բացի կեղծ հիմարության մշակույթից» [Dada Almanach 1987:151]:

Մեջբերված հատվածում կառուցողական ենք համարում դադաիստական մտածողության՝ գերմանական քաղաքականության անխնա քննադատությունը: Հայտնի է, որ ցանկացած քննադատություն ենթադրում է խնդիրների վերանայում, վերաբժանում, վերահաստատում, մերժում, այլ խոսքով՝ ռեֆլեքսիվ դիտարկում: Ռ.Հաուզմանի քննադատությունը հնարավորություն է տալիս տեսնել նաև գերմանական քաղաքական էլիտայի հավակնությունները: Պատմական իրադարձությունները ցույց տվեցին, որ առնվազն գերմանական քաղաքական էլիտան ժամանակ չունեցավ ո՞չ Առաջին, և ո՞չ էլ Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ «բուլիոնն ու մսագնդիկը»¹⁴ իրարից հստակ տարաջատելու համար:

Այսպիսով, դադաիստները (հատկապես Ռ.Հաուզմանը) անխնա քննադատում են էքսպրեսիոնիզմը: Քննադատության հոետորաբանությունը ձևավորվում է ազատ, ուտիլիտար, ճաշային («ներքև») համանմանություններով: Միաժամանակ քննադատվում է դադաիզմի հիմնական «թշնամի» էքսպրեսիոնիզմն ու գերմանական քաղաքականությունը:

1.4 Վեպը և դադաիստները

Թեև դադան մեծ ազդեցություն չի ունեցել գերմանական վեպի զարգացման վրա, այնուամենայնիվ դադաիզմը առաջին ավանգարդիստական «իզմերից» էր, որը կիրառում է ավտոմատիզացված առարկաների, իրերի, երևույթների ֆիքսումը և մոնտաժի տեխնիկան: Բեռլինյան դադաիստների հիմնական զենքերից էր կոլաժը (Հաննա Խյոխ) և ֆոտոմոնտաժը (Յո.Բաադերը), որոնց շարակարգը կառուցվում էր ոչ թե պատճառահետևանքայնության (տրամաբանություն), այլ պատահականության հիման վրա, որովհետև մերժում էին աշխարհում պատճառականությունը, ինչի արդյունքում էլ ծնվում է «դատարկ», աղմկոտ դադաիստական պոեզիան:

Դադաիստական պոետոլոգիական միջոցները (հատկապես մոնտաժը) իրենց կիրառությունն են ստանում 1920-30-ական թթ.

¹⁴ Բեռլինյան դադաիստների հակապատերազմական ասույթի քննադատության մասին տե՛ս [Համատեքստ 2013]:

գրականության մեջ, հատկապես՝ «Նոյե զախլիխքայտի» (Նոր օբյեկտիվություն) համատեքստում գրված վեպերում: Այս ամենին նպաստում է նաև կինոն, կինոարվեստի զարգացումը:

Դադաիստներից Հուգո Բալը այս տարիներին գրում է երկու վեպ՝ «Ֆլամենտոսի կամ աղքատների դենդիզմի մասին» (Flametti, oder vom Dandysmus der Armen, 1918), «Ֆանտաստ Տենդերենդա» (1914-1920, հրատ.՝ 1967), որտեղ ուղղակի ձևով պատմվում է տվյալ «իզմի» հոգևոր կայացման մասին¹⁵: Այս ասույթին են պատկանում նաև Ռիխարդ Հյուզենբեկի «Դոկտոր Բիլլիգի անկումը» (Doctor Billig am Ende. 1921)¹⁶ և Օտտո Ֆլակեի (1880-1963) «Այո և ոչ» (Ja und Nein. 1920) վեպերը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ դադաիզմը կարևոր ու մեծ նշանակություն է ունեցել գրական դաշտում իր «ազդեցիվ» մարտավորությամբ: Գերմանալեզու երկներում (Շվեյցարիան, Գերմանիա) նրանք իրենց պահվածքով, տրամաբանությամբ «ցնցում» էին հասցեատերերին՝ ուշադրության կետրոնում պահելով Կայզերական Գերմանիայի վարած ռազմականացված անխոհեմ քաղաքականությունը: Դադաիզմը իր քաղաքական և գրական (էքսպրեսիոնիզմ) «հակառակորդներին» քննադատել է իռացիոնալ հնարանքներով, ժամանակի անտրամաբանական լեզվով, որը տիրապետող էր հատկապես քաղաքական ասույթում: Թեպետ այս «իզմ»-ը չի ստեղծում «կենտրոնական» վիպական տեքստեր, սակայն իր ազդեցությունը պոետոլոգիական առումով (մոնտաժ) բավական ուժեղ է եղել գրական դաշտի այլ «իզմ»-երի, գրական հոսանքների (Նոր օբյեկտիվություն) ձևավորման վրա:

Тигран Симаң

ДАДАИЗМ В ГЕРМАНИИ (логика, семиотика)

¹⁵ Այս վեպերի մասին մանրամասն տե՛ս [Седельник 2010: (гл. 4 Поэтика (Проза))]:

¹⁶ Վեպի մի հատվածը ռուսերենով հասանելի է՝ [Дадаизм в Цюрихе 2001:303-312]: Այս վեպից հետո Ռիխարդ Հյուզենբեկը գրում է ճանապարհորդական վեպի ասույթում տեղավորվող մի շարք վեպեր՝ «Աֆրիկան հեռանկարում» (Afrika in Sicht, 1928), «Թռիչք դեպի Արևելք» (Der Sprung nach Osten, 1928), «Չինաստանը խժռում է մարդկանց» (China frißt Menschen, 1930), «Բլեք-փոինթի արևը. Սիրավեպ արևադարձային գոտուց» (Die Sonne von Black-Point. Ein Liebesroman aus den Tropen, 1932/33) և այլն: Վերջին վեպը Հյուզենբեկը գրում է արևմտյան Հնդկաստան ճանապարհորդությունից հետո: Այս սիրային վեպում պատմվում է Մարիա Դրակեի իքնադրոնման և էմանսիպացիայի մասին: Բեռլինյան դադաիստներից Վալտեր Մերինքը նույնպես վտարանդիության տարիներին 1934 թ. գրում է իր սատիրիկ վեպը՝ «Մյուլլեր՝ գերմանական ընտանիքի ժամանակագրություն» (Müller - Chronik einer deutschen Familie):

В статье проанализированы логические и семиотические особенности дадаизма, прежде всего – его «агрессивная» борьба на литературном поле. В роли «ведущего» врага дадаизма в Германии выступил экспрессионизм: дадаисты критикуют его преимущественно на эмоциональном, а не на рациональном уровне – критика такого рода не носит конструктивного характера. Отдельно в статье исследуется проблема самоидентификации дадаизма, его понимания/непонимания с позиции концептов «часть» и «целое». Для понимания дадаизма исключительно важным оказывается изучение его «начала», мотивов появления и становления эпатажного «изма». На примере работ Петера Слотердайка показаны возможные логические ошибки (а именно: генерализация) при анализе дадаизма вне исторического контекста.

Tigran Simyan

**DADAISM IN GERMANY
(logic, semiotics)**

In the present article the logical and semiotic characteristics of Dadaism are analyzed, first of all its aggressive “struggle” in the literary field. Expressionism takes on the role of the “leading” enemy of Dadaism in Germany. Dadaists criticized it on the emotional, rather than on the rational level, which deprived their criticism of any constructive character. Particular attention is drawn to the analysis of the problem of self-identification in Dadaism, its comprehension/non-comprehension through the concepts of “part” and “whole”.

In order to understand Dadaism, it is extremely important to study its “beginning”, motivation, and the formation of its startling “ism”. Possible logical mistakes (particularly, generalization) in analyzing Dadaism outside of the historical context are shown based on examples drawn from Peter Sloterdijks' works.

**ԳԻՐՔԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՂ ԱՆՁ ՈՒ.ԷԿՈՅԻ «ՎԱՐԴԻ ԱՆՈՒՆԸ»
ՎԵՊՈՒՄ**

Vivi adunque: nullo ti può di questo privare; ed essempro eterno
a' felici e a' miseri dimora dell'angoscie della tua donna.

G.Boccaccio, «Elegia di Madonna Fiammetta»¹

Գնա՛, իմ խեղճ գիրք՝ գնա՛ մարդամեջ.
Գլուխդ քաշ քցի՛ր, մի՛ նեղանար հեչ,
Անկաջդ փակի՛ր, սիրտդ լեն բռնի՛ր,
Ինչ ասեն, խոսին, տա՛ր ու համբերի՛ր:

Խ.Աբովյան, «Պարապ վախարի խաղալիք»

Գիրքը վաղուց արդեն հանդիսանում է արևմտյան քաղաքակրթության մշակութային կարևորագույն կոդերից մեկը: Ինչպես հայտնի է, գրքի պաշտամունքը տարածվում է նաև Հայաստանում դեռ հինգերորդ դարում՝ հայագիր գրքերի հայտվելուց ի վեր: Դարեր շարունակ հենց գիրքն է հանդիսացել գիտելիքի, հավատքի, ավանդույթների փոխանցման միջոցը: Տեխնիկական մեծ առաջընթացին զուգահեռ ի հայտ են գալիս մի շարք այլ՝ գիտելիքի պահպանման և փոխանցման միջոցներ, ինչպես, օրինակ, համակարգիչը: Սակայն հենց պոստմոդեռնիզմի շրջանում է, որ գիրքը սկսվում է գիտակցվել որպես առանձին, հեղինակից անկախ գոյություն ունեցող մի երևույթ: Մի շարք այլ հեղինակների նման այս խնդրին բազմիցս անդրադարձել է նաև պոստմոդեռնիզմի տեսաբան և գրող Ու.Էկոն: Մեր հոդվածի սահմաններում, կանդրադառնանք մեր կարծիքով մեծ հետքերություն ներկայացնող մի խնդրի՝ գիրք՝ որպես գործող անձ Ու.Էկոյի «Վարդի անունը» վեպում, զուգահեռներ անցկացնելով պոստմոդեռնիստական այնպիսի գործերի հետ, ինչպիսիք են Խ. Բորխեսի «Բաբելոնյան գրադարան» պատմվածքը և Ի.Կալվինոյի «Եթե մի ձմեռային գիշեր մի ճանապարհորդ» վեպը: Այս խնդրի քննարկման համար կօգտագործենք նաև տեքստ հասկացությունը, որը սերտորեն կապված է գիրք հասկացության հետ, այսինքն գիրքը՝ որպես ֆիզիկական «անձ», առարկա, որն իր մեջ ներառում է տեքստը: Եվ իհարկե, գիրք-տեքստ հասկացությունները առավել խորհրդանշական են դառնում հենց պոստմոդեռնիզմի լույսի ներքո, հիշելով, օրինակ, Բարտի, Էկոյի՝ սրան վերաբերող աշխատությունները:

¹ Ապրիր ուրեմն՝ անկարող է քո կյանքին խանգարել որևէ բան, և օրինակ դու ծառայիր թե՛ երջանիկներին և թե՛ դժբախտներին՝ որպես տիրուհուդ տանջանքների վկայություն /թարգմ. հեղ./

Եթե «Վարդի անունը» դիտարկենք որպես դետեկտիվ, ապա կարելի է ասել, որ առեղծվածային սպանությունների, իսկ ապա վանքի փլուզման պատճառը գիրքն է: Դեռ «Բնականաբար, ձեռագիր» նախաբանում (որի վրա հավանաբար շատ ընթերցողներ, գոնե «միամիտ ընթերցողները», ուշադրություն չեն էլ դարձնում) հեղինակը նշում է. «Այս պատմությունը ոչ թե խղճուկ առօրյայի, այլ գրքերի մասին է, որոնց ընթերցանությունը ստիպում է մեզ կրկնել մեծ նմանակող Կեմպիսցու խոսքերը. «Ես ամենուր հանգիստ փնտրեցի և միայն մի տեղ այն գտա՝ անկյունում, գիրքը ձեռքի»²: Այս տողերով հեղինակն ակնարկում է վեպում գրքի կենտրոնական դերը և միևնույն ժամանակ ընդգծված կերպով այն ամենից բարձր դասում՝ հակադրելով «խղճուկ» առօրյային: Ու չնայած սրան՝ ընթերցողը, վեպի հերոսների նման, այդ մասին բավականին ուշ է գլխի ընկնում, իսկ կասկածն առաջանում է վանքի գրադարանի գերպաշտպանվածության պատճառով: Եվ այսպես, այդ առեղծվածային գրքի որոնման հետ են կապված յոթ օրերի տարօրինակ իրադարձությունները և հատկապես այն թեման, որից խուսափում և միևնույն ժամանակ ձգտում էին խոսել վանականները: Պարզվում է, որ գիրքը Արիստոտելի «Պոետիկայի» երկրորդ՝ կատակերգությանը նվիրված մասն է, իսկ վանականների շրջանում վախ տարածողը՝ կույր գրադանավար Խորխեն: Եվ ինչպես շատ դիպուկ կերպով նկատում է Թ.Կոլետին. «Այս առեղծվածային պատմության մեջ վանքում եղած ամեն բան և ամեն ոք կազմում են այն տեքստի մասը, որ Վիլիելմն ու Ադսոն փորձում են մեկնաբանել: Նրանց այն ենթադրությունը, որ գրքի հայտնաբերումը կբերի նաև մարդասպանների հայտնաբերմանը, մի գերբնական ուժով է օժտում տեքստը: Որոշ իմաստով գրքի ընթերցումը կյանքի ու մահվան հարց է»³: Վանականներն ակամա, իսկ Խորխե Բուրգոսին, կարելի է ասել այս պատմության անտագոնիստը, նաև գիտակցաբար, տարբեր ակնարկներ, իսկ երբեմն էլ ծուղակներ են դնում Վիլիելմի համար, որոնք հուշում են, թե որ տեքստի մասին է խոսքը, կամ էլ հակառակը՝ շփոթեցնում: Սա է պատճառը, որ Վիլիելմը գտնում է, որ այն ամենն, ինչ ասվում է գրքերի մասին վանքի պատերի ներսում, կարևոր է. «քանի որ մենք գործ ունենք մարդկանց հետ, որ ապրում են գրքերի մեջ, գրքերի հետ և հանուն գրքերի»⁴: Այստեղ հարկ է նշել, որ այստեղ ակնհայտ հղում կա Բենեդիկտյան կանոնակարգին: Բենեդիկտյան եղբայրության վանականների գործունեությունը սերտորեն կապված էր գրքերի

² U.Eco “Il nome della rosa” Bibliotex, S.L., Barcellona, 2002, p. 9, *In omnibus requiem quaesivi, et nusquam inveni nisi in angulo cum libro* Հեղինակը նկատի ունի *De Imitatione Christi* աշխատության հնարավոր հեղինակներից մեկի՝ հոլանդացի վանական Թոմմաս Կեմպիսցուն (մոտ 1380-1471):

³ Coletti T., “Naming the rose” Eco, medieval signs, and modern theory” Cornell University Press, Ithaca and London, Washington D.C., 1988, p.112.

⁴ Eco U. Il nome della rosa. Bibliotex, S.L., Barcellona , 2002 p. 106

պահպանման և փոխանցման հետ, ինչն ամրագրված էր հենց վերոհիշյալ Բենեդիկտյան կանոնակարգում:

Առաջնորդվելով էկոյի սահմանած այն ճշմարտությամբ, որ յուրաքանչյուր գիրք պատմում է այլ գրքերի մասին, Վիլիելմը փորձում է հայտնաբերել առեղծվածային գիրքը այլ գրքերի օգնությամբ, վերստեղծել փնտրվող տեքստը այլ տեքստերի միջոցով: Ինչպես արդեն նշվեց, խոսքը վերաբերում է Արիստոտելի «Պոետիկայի» կատակերգությանը նվիրված երկրորդ մասին: Հայտնի է, որ, ի տարբերություն «Պոետիկայի» ողբերգությանը նվիրված առաջին մասի, որը թարգմանված և խորապես ուսումնասիրված է, երկրորդ մասը երբեք չի գտնվել, շատերն են փորձել առաջին մասի օրինակով վերականգնել գրքի մոտավոր տեքստը: Ինչպես տեսնում ենք, հեղինակն օգտագործում է նաև այս բանասիրական դետեկտիվը՝ հերոսների միջոցով փորձելով վերականգնել անհետացած տեքստը: Հետ նայելով՝ կարելի է տեսնել բոլոր այն հուշող տարրերը, որոնք Վիլիելմին պիտի բերեին այս գրքի հայտնաբերմանը՝ սկսած Ադելմոյի գրոտեսկային մանրանկարներից, վերջացած ծիծաղի ու կատակերգության շուրջ զրույցներով, որոնք այդքան դատապարտում էր Խորխեն:

Այսինքն, գիրքը դառնում է փաստորեն ինքնուրույն, իր սեփական կյանքն ունեցող «գործող անձ»: Արիստոտելի գրված տեքստն է, որ ստիպում է վանականներին մեծ ռիսկի դիմելով և խախտելով վանքի կանոնները՝ շրջել գիշերով գրադարանում, և հենց այդ գրքի միջոցով է Խորխեն պատժում հետաքրքրասերներին: Այստեղ, իհարկե, ակնհայտ է տեքստի ընկալման պոստմոդեռնիստական մոտեցումը, քանի որ «Պոետիկայի» տեքստով է պարուրված վեպի ողջ տեքստը, բացի այդ՝ խոսքը դարեր առաջ գրված տեքստի մասին է, որը սակայն իր հեղինակից անկախ ապրում է և որոշիչ դառնում մի շարք մարդկանց ճակատագրերի համար:

Անդրադառնալով վեպի հերոսներին՝ նշենք, որ թե՛ Խորխեն, թե՛ Վիլիելմը բազմագիտակ են, երկուսն էլ աչքի են ընկնում իրենց ընդունակություններով ու գիտելիքներով, սակայն առաջնորդվում են հակառակ գաղափարներով: Այսպես, իր գաղափարը պաշտպանելու համար Խորխեն չի խնայում ոչ մարդկանց, ոչ էլ իրեն. նա ոչնչացնում է իր իսկ ստեղծած կայսրությունը՝ արբայությունն ու գրադարանը: Խորխեն ուսում է թունավորված գիրքը: Իրեն կործանելով, նա ոչնչացնում է նաև Արիստոտելի «Պոետիկայի» երկրորդ մասի միակ օրինակը՝ իր մարմինը դարձնելով դրա գերեզմանը: «Տեսնու՛մ ես, ահա ես կնիք եմ դնում այն բանի վրա, որը չպետք է հնչեր...»⁵: Այս դրվագը հիշեցնում է Վիլիելմի մեկ այլ առիթով ասվածը. «Գրքի համար բարին կայանում է նրանում, որ այն կարդան: Գիրքը կազմված է նշաններից, որոնք խոսում են այլ նշանների մասին, որոնք էլ իրենց հերթին խոսում են իրերի մասին: Առանց կարդացող աչքերի՝ դրանք պարզապես նշաններ են, որոնք չեն առաջացնում գաղափարներ և, ուրեմն, այն /գիրքը - Հ.Ե./ համր է: Այս գրադարանը ստեղծվել է,

⁵ Նույն տեղում, էջ 454

հավանաբար, հանուն դրանում եղած գրքերի պահպանման, սակայն այժմ այն ապրում է դրանք թաղելու համար»⁶: Բերված երկու հղումների մեջ էլ առկա է թաղելու, անհայտ թողնելու, վերացնելու գաղափարը: Վիլիելմը ասես կանխատեսում էր գրադարանի տխուր վախճանը, մինչդեռ Խորխեի համար դա միանգամայն ցանկալի ավարտ է: Այսպես հեղինակը, մի կողմից հարգանքի տուրք մատուցելով անտիկ մշակույթի պահպանման գործում անգնահատելի դեր խաղացած բենեդիկտյան միաբանությանը, մյուս կողմից ցույց է տալիս վերջինիս անկումն ու ժամանակավրեպությունը:

Վեպի միայն ամենավերջում, յոթերորդ օրվա վերջին տեսարանում, Խորխեն խոստովանում է, որ մարդկանց կյանքերի գնով է թաքցնում գիրքը և բացատրում, թե ինչու էր իր կարծիքով վտանգավոր հենց այդ գիրքը. «Քանի որ դա Փիլիսոփայի գիրքն է: Այդ մարդու յուրաքանչյուր գործ ավերել է հարյուրամյակների ընթացքում քրիստոնեության կուտակած գիտելիքների մի բնագավառ: ...Աստվածաշնչում ասվում է այն ամենը, ինչ պետք է իմանալ տիեզերքի մասին: Բայց բավական էր բացել Փիլիսոփայի՝ Ֆիզիկային նվիրված աշխատությունները, որպեսզի տեղի ունենար աշխարհի կազմակերպման վերահիմաստավորում, այս անգամ՝ նյութական եզրաքառերով, խուլ ու լարձուն մատերիայի կատեգորիաներով...»⁷: Այստեղ նույնպես Էկոյի ընտրությունը պատահական չէ. Խորխեի վերը նշված խոսքի միջոցով հեղինակը մեկ անգամ ևս մեզ հիշեցնում է այն մասին թե ինչպես են գրքերը, իսկ մեր դեպքում Արիստոտելի աշխատությունները, հիմնովին փոխել աշխարհի մասին պատկերացումները, նա ասես ընթերցողին կոչ է անում խորհել այս մասին:

Եթե նայենք պոստմոդեռնիստական տեսանկյունից, ապա ըստ իտալացի պոստմոդեռնիստ փիլիսոփա Վատիմոյի, այստեղ «Պոետիկան» ներկայանում է որպես մետադիսկուրս, կամ «ուժեղ միտք», որը, եթե շարունակենք Վատիմոյի տեսությունը, պիտի հերքեր կամ էլ հակասեր նախորդ տեսությանը, այս դեպքում քրիստոնեության որոշ դրույթներին և Բենեդիկտյան կանոնադրությանը, և հենց դա էլ ցանկանում էր կանխել Խորխե Բուրգոսին:

Շեռաքրքիր է, որ «անտարբեր» Վիլիելմը գրադարանի հրդեհի ժամանակ խելագարի պես փորձում է փրկել գրքերը՝ չմտածելով սեփական կյանքի մասին: Նա հասկանում է այդ հարստության իրական արժեքը. «Գրքերը գրվում են ոչ թե նրա համար, որ դրանց հավատան, այլ այն բանի համար, որ դրանց շուրջ խորհեն: Իր առաջ գիրք ունեցող յուրաքանչյուր ոք պետք է ձգտի հասկանալ ոչ թե այն, ինչ գիրքը ասում է, այլ այն, ինչ ուզում է ասել»⁸: Ինչպես տեսնում ենք, չնայած այս միտքը հնչեցվում է միջնադարյան վանականի կողմից, շատ հատուկ է պոստմոդեռնիստական մոտեցմանը. այն կոչ է անում մեկնաբանել տեքստը, և իհարկե, հուշում է նաև

⁶ Նույն տեղում, չֆ 374

⁷ Նույն տեղում, էջ 448:

⁸ Նույն տեղում, էջ 298

ընթերցողին նույն կերպ վերաբերել մասնավորապես «Վարդի անունը» վեպին: Հիշեցնենք, որ, ըստ պոստմոդեռնիստական սկզբունքի, հեղինակը դադարում է տեքստի պատասխանատուն լինել, և Բարտի հայտարարած՝ հեղինակի մահից հետո այն ապրում է իրենից անկախ: Հատկանշական է նաև այն, որ Վիլիելմը խոսում է գրքի մասին այնպես, ասես այն կենդանի էակ լինի:

«Վարդի անունը» վեպը քննելիս չենք կարող չհիշել Խորխե Բորխեսին, որին հաճախ նմանեցնում են վեպի հերոս Խորխե Բուրգոսուն, ինչ մասին վկայում են թե՛ նրա անունը, թե՛ կոյրությունը, թե՛ բազմագիտակությունը, և այն, որ լինելով կոյր՝ Բորխեսը երկար տարիներ եղել է Արգենտինայի ազգային գրադարանի տնօրեն, սրա մասին ակնարկում է նաև ինքը՝ Ու.Էկոն: Եվ այսպես, Էկոյի՝ գրադարանի շուրջ կառուցված ստեղծագործությունը հիշեցնում է Բորխեսի «Բաբելոնյան գրադարան» պատմվածքը, որտեղ հեղինակը պատկերում է մի կատարյալ գրադարան, ուր հավաքված են ողջ մարդկության գիտելիքները: Բորխեսի գրադարանը կատարյալ է, «անսահման ու պարբերական»⁹ և մարդու համար անհասանելի: Բորխեսը պատմում է մի գրքի մասին, որը բոլոր գրքերի էությունն է: Այն հայտնվում է բոլորի ուշադրության կենտրոնում, ինչպես Արիստոտելի «Պոետիկան»՝ «Վարդի անունը» վեպում: Բորխեսի պատմվածքում ասվում է, որ մի մարդ ընթերցում է այդ գիրքն ու հավասարվում Աստծուն: Նման հնարավորությունն է, որ սարսափեցնում է Խորխեսին. մարդիկ, կարդալով Գիրքը, էլ չեն վախենա Աստծուց: Այսպես, Էկոն իր ստեղծած իդեալական գրադարանը հսկելու համար այնտեղ տեղավորում է Բորխեսին:

Գիրքը, որպես այդպիսին, կենտրոնական դեր է խաղում նաև մեկ այլ պոստմոդեռնիստ իտալացի գրողի մի երկում՝ Ի.Կալվինոյի «Եթե մի ձմեռային գիշեր մի ճանապարհորդ» վեպում (1979): Այս վեպի գլխավոր հերոսը Ընթերցողն է: Ըստ հեղինակի՝ «Սա վեպ է որը պատմում է վեպ կարդալու հաճույքի մասին»¹⁰: Վեպի հերոսը՝ Ընթերցողը, ձեռք է բերում Ի.Կալվինոյի «Եթե մի ձմեռային գիշեր մի ճանապարհորդ» գիրքը, և իրական ընթերցողի հետ սկսում դրա ընթերցումը, սակայն մի քանի էջ կարդալուց հետո այս վեպն ընդհատվում է, և սկսվում է մեկ այլ վեպ: Ինչ-որ առեղծվածային պատճառով այս երևույթը կրկնվում է, և վեպն ավարտելու փոխարեն հերոսը կարդում է ազգությամբ տարբեր հեղինակների տարբեր ոճերով գրված տասը վեպերի առաջին գլուխները: Վեպի մի պլանում Ընթերցողի կարդացած վեպերի գլուխներն են, որոնցից յուրաքանչյուրը հաղորդում է մի ուրույն տրամադրություն, մյուս պլանում՝ ընթերցումներին զուգահեռ ծավալվող Ընթերցողի և Ընթերցողուհու սիրային պատմությունը: Սակայն այս սիրային պատմությունը ծնվում է հենց այն ժամանակ, երբ

⁹ **Բորխես Խ.Լ.** Երկու արքաներն ու երկու լաբիրինթոսները, «Ապոլոն» հրատ., Ե., 1992, էջ 56:

¹⁰ **Calvino I.**, Se una notte d'inverno un viaggiatore, Mondadori, Milano, 2006 p. 310

Ընթերցողն ու Ընթերցողուհին փնտրում են կիսատ մնացած տեքստի շարունակությունը և ամեն անգամ հայտնաբերում նոր վեպի սկիզբ: Այսպես, «Վարդի անունը» վեպի հերոսների պես Ընթերցողն ու Ընթերցողուհին գնում են գրքի հետևից և հանդիպում մի շարք արկածների: Երկու վեպերում էլ ասես հեղինակները մեկ անգամ ևս հիշեցնում են, որ մենք բոլորս ընթերցողներ ենք, և ընթերցում ենք մեկ մեծ տեքստ, փորձում մեկնաբանել նրա նշանները, և հեղինակներն ասես ցանկանում են սովորեցնել կամ հուշել ճիշտ ընթերցման ձևերը:

Ումբերտո Էկոն՝ որպես պոստմոդեռնիզմի տեսաբան և պոստմոդեռնիստ գրող, իր տեսական գործերում քննում ու բացատրում է պոստմոդեռնիստական գրականության մեխանիզմներն ու առանձնահատկությունները, և այս համատեքստում մեծ դեր է կատարում գիրքը՝ որպես առանձին միավոր, և ինչպես տեսանք «Վարդի անունը» վեպում, այն հանդես է գալիս նաև որպես գործող անձ:

Hasmik Eghiazaryan

BOOK AS A CHARACTER IN THE “THE NAME OF THE ROSE”

BY U.ECO

The article deals with the problem of the book as a character, an independent unit in the famous novel by U.Eco by drawing parallels between the works by J.L.Borges “The Two Kings and Their Two Labyrinths” and I.Calvino “If in a Winter Night a Traveller”.

Асмик Егиазарян

КНИГА КАК ПЕРСОНАЖ В РОМАНЕ У.ЭКО “ИМЯ РОЗЫ”

В статье рассматриваются особенности итальянской постмодернистской литературы на примере творчества У.Эко: анализируется роль книги как действующего лица романа “Имя розы”, проводятся сравнения с рассказом Хорхе Луис Борхеса «Два царя и два их лабиринта» и с романом Итало Кальвино “Если однажды зимней ночью путник”.

**ԷՔՁԻՍՏԵՆՑԻԱԼԻՉՄԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ
ԺՈՁԵ ՍԱՐԱՄԱԳՈՅԻ «ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆ» ՎԵՊՈՒՍ**

Քաղաքակրթությունից դուրս մղված մարդու հոգևոր անկման խնդիրը բավական հաճախ է հայտնվել 20-րդ դարի հատկապես երկրորդ կեսի գրողների ուշադրության կենտրոնում: Առավել վառ օրինակներից են Ուիլյամ Գոլդինգի «Ճանճերի տերը» (Lord of the Flies, 1963) և Դորիս Լեսինգի «Վերապրածի հուշերը» (Memoirs of a Survivor, 1974): 20-րդ դարի վերջին այս թեմային անդրադարձել է պորտուգալացի արձակագիր, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ժոզե Սարամագոն իր «Կուրություն» (Ensaio sobre a Cegueira, 1995) վեպում: Սակայն եթե Գոլդինգի և Լեսինգի ստեղծագործություններում, այսպես կոչված, աղետալի հետընթացը «բնական» հիմքեր ունի, քանի որ տեղի է ունենում երեխաների հետ, ապա Սարամագոն ցույց է տալիս հասուն, կայացած մարդկանց բարոյական անկումը:

The Paris Review-ին տված հարցազրույցում պորտուգալացի գրողը վեպի մտահղացման մասին խոսելով, պատմել է. «Ռեստորանում էի: Սպասում էի՝ մինչև ուտելիքս մատուցեն, ու հանկարծ մտածեցի՝ իսկ ի՞նչ կլինեք, եթե բոլորս կույր լինեինք: Ինքս իմ հարցին պատասխանելով՝ մտածեցի՝ բայց չէ որ մենք իրականում կույր ենք <...> [հերոսների կուրանալով] հետևանքները սարսափելի են, բայց տրամաբանական: «Կուրությունում» գրեթե չկա երևակայություն, միայն պատճառի ու հետևանքի համակարգված կիրառում»¹:

Տարբեր հրատարակություններ² «Կուրությունը» ներկայացնում են որպես «վեպ-հակաուտոպիա», «փիլիսոփայական առակ/այլաբանություն», «վեպ-զգուշացում»: Չհերքելով, որ Սարամագոյի վեպը կարող է պարունակել բոլոր նշված ժանրերին ու ձևերին բնորոշ տարրեր՝ կարծում ենք, որ, այնուամենայնիվ, վեպի փիլիսոփայական հենքը կազմում է էքզիստենցիալիզմը, թեև այն, գուցե, չի դրսևորվում նույնքան ամբողջական, որքան, օրինակ, տվյալ ուղղության ներկայացուցիչներ Ալբեր Բամյուի կամ Ժան-Պոլ Սարտրի ստեղծագործություններում:

Վեպի իրադարձությունների կենտրոնում անհայտ և անհավանական մի համաճարակ է՝ սպիտակ կուրություն, որը կայծակնային արագությամբ տարածվում է ողջ քաղաքում. «Կուրացած մարդը ձեռքերը բարձրացրեց աչքերի մակարդակին, շարժեց դաստակները, մատները: Ոչինչ չեմ տեսնում, միայն մշուշ, կարծես, կաթի մեջ լողալիս լինեմ: Ուրեմն կուրություն

¹<http://www.theparisreview.org/interviews/1032/the-art-of-fiction-no-155-jose-saramago>

²Հարկ է նշել, որ վեպի ժանրային առանձնահատկություններին նվիրված որևէ աշխատություն մինչ օրս գոյություն չունի:

չէ, արծագանքեց վարորդը: Ասում են, կուրությունն այն է, երբ աչքերիդ առաջ ամեն ինչ սև է: Իսկ ինձ մոտ սպիտակ է»³:

Վարակը փոխանցվում է յուրաքանչյուր տեսակի շփման հետևանքով, և ընթերցողն ականատես է դառնում, թե ինչպես է իրավիճակը հետզհետե ծեռք բերում աղետի մասշտաբներ, որից խուսափելու համար կառավարությունը որոշում է կայացնում մեկուսացնել վարակվածներին: Այսպիսով, նախկին հոգեբուժարանի շենքում հավաքվում են տարբեր սոցիալական խավերին պատկանող, տարբեր մասնագիտությունների տեր, տարբեր ազգության, տարիքի, սեռի մարդիկ, որոնց միայն մեկ նպատակ է միավորում՝ ողջ մնալ:

Սարամագոն առավելապես վերացարկում է վեպի գործողությունը: Հեղինակը նշում է, որ վարակը տարածվում է «ողջ քաղաքում», սակայն պարզ չէ, թե որ քաղաքի կամ ընդհանրապես երկրի մասին է խոսքը: Չի նշվում նաև գործողության ժամանակը. միայն որոշ դրվագներից կամ առարկաների ու երևույթների նկարագրությունից կարելի է ենթադրել, որ դեպքերը տեղի են ունենում 20-րդ դարի երկրորդ կեսին: Ակնհայտ է, որ նման կերպ պորտուգալացի գրողը ցանկանում է վեպին համամարդկային բնույթ հաղորդել: Մյուս կողմից՝ որոշակի պահին ժամանակը դադարում է հերոսների համար գոյություն ունենալ՝ նրանք սկսում են ապրել ժամանակից և տարածությունից դուրս:

Թեև կուրության գաղափարը կազմում է վեպի առանցքը, Սարամագոն ակնհայտորեն անտեսում է դրա հետ կապված հարցերը: Հեղինակը չի փորձում պատասխանել հարցին՝ որն է վարակի պատճառը, ինչու է այն տարօրինակ միջոցով փոխանցվում, ինչպես է պատահում, որ հերոսներից մեկը խուսափում է վարակվելուց: Դրանով իսկ Սարամագոն փորձում է ընթերցողի ուշադրությունը սևեռել բոլորովին այլ խնդրի վրա. նրան հետաքրքրում է մարդկանց հոգեբանությունն այն պահին, երբ առավել սուր են զգում միմյանց կարիքը:

Այսպիսով, կուրությունը վեպում հանդես է գալիս որպես այլաբանություն, ինչպես, օրինակ, ժանտափտը՝ Ֆրանսիացի էքզիստենցիալիստ Ալբեր Բամյուի համանուն վեպում: Երկու հեղինակներն էլ ներկայացնում են սոցիալական ու քաղաքական ճգնաժամ և ընդգծում այդ համատեքստում մարդու պատասխանատվության խնդիրը: Ակնհայտ է, որ Սարամագոն փորձում է ընդգծել կուրության ոչ թե ֆիզիկական, այլ հոգևոր բնույթը: Վեպի՝ տեսողությունը պահպանած միակ հերոսը՝ բժշկի կինը, գիտակցում է, որ նման տեսակի կուրությունն անբացատրելի է բժշկության տեսակյունից: «[նա] գիտեր, որ կուրությունը վարակիչ հիվանդություն չէ, վարակի միջոցով չի փոխանցվում: Հո խլվերա չէ: Մինչև հիմա ոչ մեկ չի կուրացել միայն նրանից, որ մեկ այլ կուր մարդ նրա վրա

³Saramago, Jose. Blindness. Harvest Book. 1999. P.15.

պարզապես նայել է, քանզի դա (կուրությունը – հեղ.) մարդու և իրեն ի ծնե տրված աչքերի փոխհարաբերությունն է»⁴:

Վեպի մի շարք դրվագներում ակնհայտ է էքզիստենցիալիզմի ազդեցությունը: Նախ, բոլոր հերոսները հայտնվում են «սահմանային իրավիճակում»:

Համաձայն էքզիստենցիալիզմի՝ իսկական «ես»-ը գտնեու համար մարդ պետք է հայտնվի «սահմանային իրավիճակում»: Ընդ որում՝ էքզիստենցիալիստներն այդ հասկացության մեջ տարբեր իմաստներ են դնում՝ սեփական կոչումը չգտնելու վախը (ըստ Մ.Հայդեգերի), մահացու վտանգը (ըստ Կ.Յասպերսի), սպասումների անիմաստության զգացումը (ըստ Ժ.-Պ.Սարտրի): Մի կողմից՝ «սահմանային իրավիճակը» կյանքի արտոլոգայնության վերապրումն է, մյուս կողմից՝ սեփական «ես»-ը բացահայտելու միջոց: Ըստ Սարտրի՝ մարդուն չի կարելի որևէ կերպ բնութագրել, քանի դեռ նա «ոչինչ» է, իսկ հետագայում մարդ «ինքն իրեն է կերտում»: Այս միտքն առավել ցայտուն արտահայտված է Սարամանովի վեպի առաջին իսկ էջերին, երբ հերոսներից մեկն օգնության է հասնում ճանապարհին հանկարծ կուրացած երիտասարդին ու պատրաստակամորեն նրան տուն է հասցնում, որից հետո, օգտվելով վերջինիս անօգնական վիճակից, որոշում է առևանգել նրա մեքենան:

«Կուրացած տղամարդուն օգնություն առաջարկելիս հետագայում նրա մեքենան առևանգած մարդն այդ պահին որևէ չար մտադրություն չունե: Հակարակը՝ նա առաջնորդվում էր վեհանձնությամբ ու մարդասիրությամբ, որոնք, ինչպես հայտնի է, մարդու էության լավագույն երկու հատկանիշներն են <...>»⁵, - մեկնաբանում է հեղինակը:

Ցույց տալով մարդու՝ գայթակղությանը դիմադրելու անկարողությունը՝ Սարամանով, միևնույն ժամանակ, ընդգծում է հասարակության կողմից սահմանված չափանիշների, մարդկանց «լավ» և «վատ» որակվող արարքների հարաբերական լինելը:

«Եկեք հարցնենք ինքներս մեզ՝ ի վերջո, կա՞ մեծ տարբերություն, երբ օգնում ես կույր մարդուն ու հետո նրա մեքենան առևանգում, և երբ խնամում ես ծեր, անօգնական պառավին՝ սպասելով, թե երբ շունչը կփչի, որպեսզի տիրանաս նրա ժառանգությանը»⁶, - հարց է բարձրացնում հեղինակը: Ըստ նրա՝ վերջին արարքը ոչ պակաս անբարոյական կարելի է համարել, մինչդեռ այն հասարակության քննադատությանը, որպես կանոն, չի արժանանում:

Այսպիսով, հետևելով էքզիստենցիալիզմի ավանդույթին, Սարամանովն բարձրացնում է ճգնաժամային պայմաններում մարդու բարոյական ընտրության խնդիրը:

⁴ Նույն տեղում, էջ 42

⁵ Նույն տեղում, էջ 21.

⁶ Նույն տեղում, էջ 23.

Հեղինակը փորձում է պատասխանել հարցին՝ ինչպիսին է դառնում «քաղաքակիրթ» մարդը՝ «քաղաքակրթությունից» դուրս: Հայտնվելով ճգնաժամային իրավիճակում՝ հերոսները աստիճանաբար մերկացնում են իրենց իսկական էությունը. երկրի ղեկավարությունը հիվանդներին պահում է անմարդկային պայմաններում՝ հրաժարվելով ապահովել դեղորայքով ու անհրաժեշտ խնամքով, զինվորները սպանում են անօգնական կույրերին, իրենք՝ կույրերը, բացահայտում են իրենց կենդանական էությունը: Առավել ճարպիկ հիվանդները զավթում են իշխանությունը, թալանում մյուս հիվանդներին, բռնաբարում կանանց: Ինչպես Գորլդինգն իր «Ճանճերի տերը» վեպում, Սարամագոն էլ մարդու իսկական էության վերաբերյալ հարցին հոռետեսորեն է մոտենում, չնայած վեպի «երջանիկ ավարտին»:

Ուշագրավ է, որ վեպում չկա և ոչ մի հատուկ անուն: Վեպի հերոսներին հեղինակն այս կամ այն կերպ է կոչում՝ հաշվի առնելով կամ նրանց արտաքինի մեջ աչքի ընկնող որևէ հատկանիշ, օրինակ, «մուգ ակնոցներով աղջիկը», «շղիկ տղան», կամ մասնագիտությունը, օրինակ, «բժիշկը», «դեղագործը», կամ ազգակցական կապը, օրինակ, «բժշկի կինը», «առաջին կուրացածի կինը»:

Հերոսների անունների բացակայությունը կարող է խորհրդանշել նրանց ներքին դատարկությունը, հոգևորի բացակայությունը: Ակնաբույժը, գիտակցելով, թե ինչ է կատարվում շուրջը, փաստում է. «Ես ողջ կյանքս նայել եմ մարդկանց աչքերի մեջ: Չէ որ աչքերը մարդկանց մարմնի միակ մասն են, որտեղ, հնարավոր է, ապրում է հոգին, և եթե դրանք էլ չլինեն, ապա...»⁷: Կարելի է ասել, որ Սարամագոյի վեպի հերոսները, զուրկ լինելով անհատականությունից, վեպում հանդես են գալիս որպես խորհրդանիշներ, որոնք մարմնավորում են միջին վիճակագրական հասարակությունը՝ իր տարբեր դրսումներով:

Մյուս կողմից՝ հեղինակը առաջ է քաշում այն գաղափարը, որ հերոսների կուրացումը օրինաչափական էր, այնպես, ինչպես, օրինակ, Ֆ.Կաֆկայի հերոս Գրեգոր Զամզայի՝ միջատի վերածվելն է ընկալվում որպես օրինաչափություն: Սարամագոն ցույց է տալիս, որ իր հերոսները նախքան «վարակվելը» չէն ապրել լիարժեք կյանքով, այլ պարզապես ֆիզիկապես գոյատևել են: Այս միտքն արտահայտված է արդեն վեպի բնաբանում, որը Սարամագոն փոխառել է «Առակաց գրքից»՝ «Եթե կարող ես տեսնել՝ նայիր, եթե կարող ես նայել՝ նկատիր»:

Հարկ է նշել, որ վեպում հերքվում է անցյալի գաղափարը, ինչը բնորոշ է վեպ-հակաուտոպիաներին: Բոլոր գործող անձինք (բացի բժշկի կնոջից, ով այդպես էլ չի կորցնում տեսողությունը) հայտնվում են հավասար պայմաններում: Փակ տարածության առկայությունը և արտաքին ազդակների ազդեցության բացակայությունը մի շարք առավելություններ կարող են ընձեռել, սակայն էքզիստենցիալիստական վախը հերոսներին ստիպում է դեստրուկտիվ գործել, ինչի հետևանքով այդ փակ համակարգում

⁷ Նույն տեղում, էջ 158.

հաստատվում են աստիճանակարգային հարաբերություններ՝ ուժեղները ճնշում են թույլերին:

Ըստ Սարամագոյի՝ նման հասարակության մեջ իրական բարոյական գիտակցությունն անհնար է, քանի որ միայն արտաքուստ «սոլիալականացված» և «քաղաքակիրթ» մարդը շատ արագ կորցնում է ազատ բարոյական ընտրության ունակությունը և, հետևաբար, չի կարող ուրիշների համար պատասխանատվություն կրել: Այսպիսով, վախը, որը մարդու էության անբաժան մասն է կազմում, ծնում է բռնապետական ռեժիմներ: Պալատներից մեկում գտնվող կույրերը նախ մյուսներից ուտելիքի դիմաց «տուրք» են պահանջում, հետո, երբ պաշարները սպառվում են, ուտելիքը բաժանում են որոշակի «ծառայությունների» դիմաց, օրինակ, բռնաբարում կանանց: «Չտաք՝ լափելիք չեք ստանա»⁸, - պայման են դնում «իշխանություն» ստանձնած կույրերը:

Այսպիսով, կույրությունը վեպում դառնում է թե անձնական ողբերգության, թե սոցիալական և քաղաքական աղետի խորհրդանիշ: Համաձայն Խորհրդանիշների բառարանի՝ կույրությունը, այլ նշանակությունների հետ մեկտեղ, ունի «լույսը և ճիշտ ճանապարհը տեսնելու անկարողություն»⁹ նշանակությունը: Այդ գաղափարն արտահայտված է բժշկի կնոջ հետևյալ խոսքերում. «Կարծում եմ՝ մենք չենք կուրացել, այլ կույր եղել ենք ու շարունակում ենք մնալ: Կույր, որը տեսնում է: Կույր, որը, տեսնելով, չի տեսնում»¹⁰:

Sonya Apresova

TRADITIONS OF EXISTENTIALISM IN JOSE SARAMAGO'S "BLINDNESS"

The novel "Blindness" by Portuguese writer Jose Saramago is often presented by critics as a philosophical parable, as a novel-warning, which preserves traditions of Dystopian literature. Without denying the presence of elements of the mentioned genres, the author of this article reveals in the novel a number of features of existentialism, such as "borderline situation", freedom of choice, etc. The article concludes that existentialism is the philosophical basis of the work.

София Апресова

ТРАДИЦИИ ЭКЗИСТЕНЦИАЛИЗМА В РОМАНЕ ЖОЗЕ САРАМАГО «СЛЕПОТА»

Роман "Слепота" португальского писателя Жозе Сарамаго часто представляется критиками как философская притча, как роман-предупреждение, сохраняющий традиции антиутопической литературы. Не опровергая наличие в романе элементов, присущих указанному жанру,

⁸ Լույն տեղում, էջ 289.

⁹ Трессидер Дж. Словарь символов. М. 1999. С.212.

¹⁰ Saramago, Jose. Blindness. Harvest Book. 1999. P.321.

автор данной статьи выявляет в нем ряд особенностей, присущих экзистенциализму, таких, как “пограничная ситуация”, свобода выбора и т.д., заключая, что именно экзистенциализм составляет философскую основу произведения.

РУССКАЯ ПОВЕСТЬ XVII ВЕКА И РОМАН ДОСТОЕВСКОГО «ПРЕСТУПЛЕНИЕ И НАКАЗАНИЕ»

В творчестве Ф.М.Достоевского обращает на себя внимание то обстоятельство, что в его романах часто можно столкнуться с легендарными мотивами, образами и ситуациями. В романе «Братья Карамазовы» – легенда «Великий инквизитор»; в «Идиоте» – легенда «О братании»; в романе «Бесы» – «Христов братец»; «Повесть о бражнике» в романе «Преступление и наказание».

Обращаясь к этим повестям и легендам, Достоевский особое внимание уделял народной трактовке этих тем и мотивов.

Уже в начале романа «Преступление и наказание» мы знакомимся с одним из героев произведения – Мармеладовым, во время его своеобразного «выступления» в кабаке, где он говорит о «прощении» «пьяненьких» в день «страшного суда». Достоевский вкладывает в уста своего героя слова о том, что в пьянстве он не искал радости и веселья, и жалеть его «не за что!»: «Да! Меня жалеть не за что! Меня распять надо, распять на кресте, а не жалеть! Но распни судия, распни и, распяв, пожалей его! И тогда к тебе пойду на пропятие, ибо не веселья жажду, а скорби и слез!»¹

Эта «речь» Мармеладова перекликается с блестящим образцом сатиры XVII века, выходящим за пределы обличения духовенства – «Повестью о бражнике, который попал в рай».

Сюжет этот встречается во французской и немецкой литературе, что дало повод А.Н.Веселовскому считать, что произведение это неоригинальное. Однако, «Повесть о бражнике» тесно связана с русской действительностью XVII века, при этом французский крестьянин и немецкий мельник в русском варианте заменены бражником. После учреждения в XVI веке «царевых кабаков», пьянство стало одним из народных бедствий, и тема обличения «пропойц» заняла значительное место в русской литературе этого периода.

Повесть не прославляет пьянство. Она направлена против религиозного аскетизма, против утверждения церкви, что «пьяницы царства божьего не наследят». Утверждалась мысль, что пьяницы не могут попасть в «райскую обитель»: «А вы, братия моя, сынове рустии, православныя христиана, богу молитесь, на блуд не бывайте, не упивайтесь без памяти, не

¹ Достоевский Ф.М. «Преступление и наказание» //Собрание сочинений. В десяти томах. Т. V. М. 1957. С.26 (Далее в тексте указывается страница)

будете без ума, и вы наследницы будете царствию небесному и райския обители»².

В повести ярко выражена критика некоторых догматов церкви. Неизвестный автор устами бражника высказывает смелые суждения в адрес святых, выражает сомнение в справедливости божьего суда. Это и было причиной того, что повесть была включена церковью в индекс запрещенной литературы.

В повести повествуется о том, как пьяница весь свой век пил, но каждый раз, поднимая ковш с вином, славил имя божье. Бог отметил этот «подвиг» бражника и после его смерти «поставил душу бражника» к райским вратам. Бражник начал стучаться в рай, требуя, чтобы его пустили пребывающие там святые. Между бражником и святыми, обитающими в раю, откликающимися из-за ворот на его стук, происходит диалог:

«Бражник же нача у врат рая толкаться и приде ко вратам верховный апостол Петр и вопросы: “Кто есть толкущийся у врат рая?” Он же рече: “Аз есмь грешный человек бражник, хощу с вами в раю пребыти”. Петр рече: “Бражникам zde не входимо”. И рече бражник: “Кто ты еси тамо? Глас твой слышу, а имени твоего не ведаю”. Он же рече: “Аз есть Петр апостол”. Слышав сие, бражник рече: “А ты помнишь ли, Петр, когда Христа взяли на распятие, а ты тогда трижды отрекся от Христа? А я, бражник, никогда не отрекся от Христа. О чем ты в раю живеши?” Петр же отиде прочь посрамлен»³.

Оказывается, рай населен святыми, совершившими столь тяжкие грехи, что они, собственно, недостойны пребывания в раю – суд божий был несправедлив. В самом деле, апостол Петр трижды отрекся от Христа. Апостол Павел убил камнем «первомученика» Стефана. Царь Давид слугу своего Урия на смерть послал, а жену его «взял к себе на постель». Царь Соломон поклонялся идолам, святитель Никола «убил рукою» (т.е. ударами – И.А.) «Ария треклятого». Все святые отошли от ворот посрамленные. Не зная как избавиться от бражника, святые послали к вратам рая евангелиста – Иоанна Богослова. Но и его бражник уличил в лицемерии, сказав ему: «В евангелии ты же написал: аще мы друг друга возлюбим, а бог нас обоих соблюдет. Почему ты, господине Иван Богослов, евангелист, сам себя любишь, и в рай не пускаешь?»

² «Сказание о роскошном житии и веселии» // ПЛДР XVII век. Книга вторая. М. 1989. С.190.

³ «Повесть о бражнике, который попал в рай» // ПЛДР XVII век. Книга вторая. М. 1989. С.222. (Далее в тексте указывается страница)

(С.224). Иоанну Богослову пришлось пустить бражника в рай: «Ты еси нам наш человек, бражник! Вниди к нам в рай» (С.224).

Таким образом, врата в рай открываются только после того, как бражник конкретными примерами из жизни святых осрамил их. Все это носит в какой-то степени анекдотический характер. Такое игривое повествование требует непредсказуемый сюжетный поворот. И автор повести находит такое решение: бражник не удовлетворился тем, что его пустили в рай. Он там сел на лучшее место. На что святые обратили внимание и отметили, что они к этому месту никогда не смели подходить. В ответ на это прозвучали следующие слова бражника: «Святые отцы! Не умеете вы говорить с бражником, не токмо что с трезвым!» (С.224).

Исходя из вышесказанного, можно отметить, что повесть не поучает, а развлекает и главный герой повести – «смех». Сатирическая сила повести в обличении бражником святых. Автор повести пересматривает традиционное представление о справедливости божьего суда, находит слова упрека для каждого обитателя рая, и бражник, с его единственным грехом – пьянством, выглядит, по сравнению со святыми, невинным агнцем. Повесть была направлена против культа святых, против официальной церковной морали.

Как отмечает Д.С.Лихачев, повесть может быть отнесена к тем отчасти пародийным и шутовским, отчасти обличительным и драматичным, созданиям XVII века, которые отразили размышления и разочарования среднего человека, испытавшего на себе трудности переходного времени и по-своему осмыслившего их.⁴

Такова эта повесть XVII века, которая легла в основу «выступления» Мармеладова, произнесенного в кабаке.

На наш взгляд, обращение Достоевского к этой повести не случайно, оно вызвано христианской проповедью любви к ближнему, прозвучавшей в словах бражника «...друг друга возлюбим, а бог нас обоих соблюдет», которая противопоставлялась аскетической церковной проповеди.

Достоевский, с его глубоким подходом к человеку, к его внутреннему миру, к нравственной оценке поступков людей, не мог пойти по пути досконального, как в сюжетном, так и в оценочном отношении использования повести XVII века. Отсюда и те различия, которые имеются в этих текстах, в частности, в трактовке основной темы и в образах бражника и Мармеладова.

⁴ Лихачев Д.С. Человек в литературе Древней Руси. М. 1970. С.111-112

Сходство между героем Достоевского и бражником в их социальном положении. Но если герой повести не говорит о своем положении в «земной жизни», То Мармеладов особо отмечает положение ему подобных в «земной жизни»: «Милостивый государь, начал он почти с торжественностью, - бедность не порок, это истина. Знаю я, что и пьянство не добродетель, и это тем паче. Но нищета, милостивый государь, нищета – порок-с. В бедности вы еще сохраняете свое благородство врожденных чувств, в нищете же никогда и никто. За нищету даже и не палкой выгоняют, а метлой выметают из компании человеческой, чтобы тем оскорбительнее было; и справедливо, ибо в нищете я первый сам готов оскорблять себя» (С.16). Отсюда и «питейное». И подобно герою повести, Мармеладов, человек «несостоятельный» в земной жизни, не имея и не надеясь на земное благополучие, предпочитает всем благам вино. Если бражник пил для «веселья», благословляя бога, поднимая «первый ковш» за Бога, то Мармеладов пьет не «от радости», а «от скорби», и выражает мысль, что его надо «распять на кресте», а не «впускать в рай».

Герой повести – человек, умеющий постоять за себя. Смелость его порождена уверенностью во всеобщей греховности. Он не отрицает своей порочности, но уверен, что коль скоро он ничего не добился в земной жизни, то он и «грехи имеет меньшие». Он не совершал тех грехов, которые совершены «святыми», не пускающими его в рай. Он утверждает, что простой человек достоин любви Бога более, чем цари и священники. Именно эта психология бражника и привлекла Достоевского. Достоевский вкладывает в уста своего героя следующие слова: «... в пьянстве не искал я радости, не веселья я жажду, а скорби и слез! Думаешь ли ты, продавец, что этот полуштоф твой мне власть пошел? Скорби, скорби искал я на дне его, скорби и слез, и вкусил, и обрел» (С.26).

Достоевский особое внимание обращает на ту часть текста, где говорится о недоумении Иоанна, обратившегося к Христу с вопросом, как поступить с бражником, где повествуется об удивлении святых отцов, увидевших бражника в раю и на том месте, куда не садилась даже святые. И как бы перекликаясь с этой частью повести, Мармеладов говорит: «И возглаголят премудрые, возглаголят разумные: “Господи! Почто сих приемлещи?” и скажет: “Потому их приемлю, разумные, что ни единый из сих сам не считал себя достойным сего...”» (С.27).

Сравнивая «выступление» Мармеладова с повестью XVII века, можем отметить следующее: Мармеладов, мечтая о восстановлении справедливости, видит ее в образе «страшного божьего суда», а в повести справедливость торжествует после водворения героя в рай. Если

герой повести мечтает лишь о своем личном блаженстве, то Мармеладов мечтает о воцарении правды и справедливости для всех людей и на все времена. Если Мармеладов мечтает о божественном вмешательстве в «запутанные земные дела», то бражник рассчитывает только на собственную изворотливость и добивается «покровительства» Христа силой своей изворотливости и хитрости.

Достоевский, обращаясь к повести, тонко понимая суть народного восприятия темы, своеобразно отражает эту тему. Бражник не считает себя грешником, Мармеладов же, оказавшийся в сложной жизненной ситуации, прекрасно понимал свою греховность и выражает уверенность, что Бог вмешается в сложные жизненные ситуации не только его самого, но и всех людей, которые «грешат» не по своей вине, а жизнь заставляет их оказаться на «греховном пути». Мармеладов уверен, что Бог простит всех, простит Соню, всех рассудит и простит, и добрых и злых, и премудрых и смиренных: «Выходите, скажет и вы! Выходите пьяненькие, выходите слабенькие, выходите соромники! Мы выйдем все, не стыдясь, и станем. И скажет: “Свиньи вы! Образа звериного и печати его; но придите и вы!” И возглаголят премудрые, возглаголят разумные: “Господи! Почто сих приемлеши?” И скажет: “Потому их приемлю премудрые, потому приемлю, разумные, что ни единый из сих не считал себя достойным сего...” (С.27). Но мечта Мармеладова не сбылась. Справедливость не восторжествовала. Если можно говорить, что главный герой повести – «смех», то в романе Достоевского – «горе» и «слезы», образно отраженные в «выступлении» Мармеладова, ставшие причиной «пьянства». Ведь Мармеладов трагически погиб, вскоре умерла Катерина Ивановна, и дети остались сиротами. Не верит в справедливость Бога и Катерина Ивановна: «Что? Священника?.. Не надо... Где у нас лишний целковый?.. На мне нет грехов!.. Бог и без того должен простить... Сам знает, как я страдала!.. А не простит, так и не надо!..» восклицает она перед смертью (С.453). Не верил в справедливость божьего суда, в то, что Бог простит, и сам Достоевский, у которого к Богу было двоякое отношение.

Чем же объясняется двоякое отношение Достоевского к Богу, его неверие? З.Фрейд в своей статье «Достоевский и отцеубийство», говоря о его вере и неверии, отмечает, что Достоевский до последней минуты своей жизни все колебался между верой и безбожием, что его ум не позволял ему не замечать те трудности осмысления, к которым приводит вера. Это внутренне колебание между верой и неверием он склонен объяснять Эдиповым комплексом, который, по его убеждению, был присущ Достоевскому. Его всю жизнь мучили угрызения совести в связи с его намерением убить отца, который был убит на восемнадцатом году

специфических познаний в человеческой психологии, что они успешно использовали вначале в каких-то обрядовых действиях, а потом, в преобразованном виде, - в коротеньких показах на забаву публике. Так возникает многоцветный клубок языческих проявлений, который они протащили в русскую действительность раннего средневековья и который они же тогда и позднее, постепенно переплетая с явлениями нового времени, сформировали в огромный пласт русской культуры. Скоморохи, ко времени расцвета их культуры в XVI–XVII вв., уже давно разделились на оседлых и «походных»,¹⁵ переходящих с места на место с разнообразным репертуаром, в котором, тем не менее, наиболее удававшиеся исполнителям и любимые публикой представления занимали ведущее место. С полем деятельности первых – с народными игрищами и праздничными гуляньями – связывается зарождение и становление одной из ветвей русского народного театра – театра живого актера. Вторые создавали мобильные формы театра, позволяющие давать представления в любых условиях и без предварительной подготовки. Таковыми были медвежья потеха, «Петрушка» и раек - еще один вид ярмарочного представления, когда публике демонстрировали различные картинки в небольшом ящике через два отверстия с увеличительными стеклами и сопровождали этот показ раешным стихом (акцентный стих с парной рифмовкой, которым произносились так же диалоги между петрушечником и шарманщиком в «Петрушке» –В.К.). Важнейшей особенностью творчества «походных» артистов стало соединение в одно целое традиционных фольклорных типов и неких необычных черт. Такой скорее осознанный, нежели случайный «союз», - особенно при наличии идущего от традиции ряженья условия изменения внешности с помощью масок, одежды и прочих аксессуаров, постепенно превратившегося в драматическое действие, - содержал огромные возможности для воздействия на публику. Одна из таких возможностей реализовалась в виде довольно быстрого формирования профессионального «инструментария». «Необычное – необходимое условие для возбуждения внимания зрителей. Традиционное – использование знакомой канвы, всего созданного ранее, форм юмора, сатиры, пародии и гротеска – столь же необходимое условие для того, чтобы быть понятным и принятым зрителями.»¹⁶ Подобное соединение, а так же народность основ культуры тех и других скоморохов не могли не привести к выработке социально-критического содержания

¹⁵ Термин приводится А.А.Белкиным в исследовании истории возникновения и деятельности русских скоморохов.: Русские скоморохи. М., 1975г., с.110

¹⁶ А.А.Белкин. Русские скоморохи. М., 1975г., с.117

представляемых действий, что, безусловно, не могло не выразиться в предпочтении определенных тем и любви к конкретным персонажам, первым в числе которых был Петрушка – участник пародийно-сатирических сценок. Это были сценки обучения солдатской службе, лечения, сценки торга с цыганом о беззубой лошади, с шавочкой, с квартальным, с «барашком» и т.д. Еще одним результатом реализации возможностей воздействия на публику явилось озвучивание скоморохами «злобы дня», права на которое все остальные «артисты» были лишены почти всегда и везде. Как отмечают авторы исследования «Смеховой мир» Древней Руси: «Смех...был сопряжен с особым самовозрастанием темы... Смеховой мир, становясь действительностью, неизбежно перестает быть смешным. Поэтому, ... чтобы сохраниться, имеет тенденцию ..., делиться надвое.»¹⁷ Нельзя не принять основополагающий вывод, который приводит на этом основании Н.М.Федь: «Для древнерусского смеха характерна ... направленность на наиболее чувствительные стороны человеческого бытия.»¹⁸

В справочной литературе существуют ставшие классическими определения и пояснения значения слова «Петрушка». Например, у В.И.Даля: «Петрушка - прозвище куклы балаганной, потешника и остряка...Зовут Петрушкой также весь шутовской, кукольный вертеп.»¹⁹. У С.Ожегова: «Петрушка - 1.главное комическое действующее лицо в народном русском представлении. 2. нечто нелепое, странное, смешное.»²⁰. Советский Энциклопедический Словарь поясняет: «Петрушка - главный персонаж русских народных кукольных представлений – неунывающий, непобедимый герой, защитник слабых и угнетенных»²¹. Большая Советская Энциклопедия рассказывает: «Петрушка – главный персонаж русских народных кукольных представлений. ... Петрушка нередко фигурирует и в лубках 18в. ... В них (представлениях –В.К.) принимали участие два человека: один играл на шарманке (ранее на гусях, гудке) и участвовал в диалоге, другой из-за ширмы показывал кукол, держа в правой руке Петрушку и на левой поочередно его партнеров. ... Пьеса состояла из юмористических бытовых сценок и диалогов сатирического характера. ...Об идейно-политическом значении представлений Петрушки говорит Н.А.Некрасов

¹⁷ Лихачев Д.С., Панченко А.М. «Смеховой мир» Древней Руси. Л., 1976г., с.148

¹⁸ Н.М.Федь. Искусство комедии или мир сквозь смех. М., 1978г., с.31

¹⁹ В.И.Даль. Толковый словарь живого великорусского языка. СПб.,1882г. переиздание М.,1980г. с.106

²⁰ С.И.Ожегов. Словарь русского языка.П/р.Н.Ю.Шведовой 20-е изд., М.,1988г., с.417

²¹ Советский Энциклопедический Словарь. Гл/ред. А.М.Прохоров. Изд.4 М.,1988г., с.999

в поэме «Кому на Руси жить хорошо»: «Комедия не мудрая, однако и не глупая, хожалому, квартальному не в бровь, а прямо в глаз!»²² Уже они предполагают объяснение еще одного прозвища задиры и балагура-острослова, сыплющего присказками и прибаутками Петрушки – Петр Иванович Уксусов, в котором ярко выразались любовь и уважительное отношение к нему малоимущих слоев общества, основных почитателей сцен с его участием, разыгрываемых на ярмарках и в балаганах. Определенная выборочность сюжетов и направленность внутреннего содержания сценок из «Петрушки» привели к выработке и отточенности конкретных личностных качеств этого героя, это – прежде всего, неудобные церковным и гражданским властям бесстрашие, стойкость, неутомимость и нескгибаемость, что сделало его персонажем почитаемым и популярным, несмотря на грубые манеры, невоспитанность и кривляние, писклявый, «металлический», далеко слышный голос и некрасивую внешность. Нахождение Петрушки-скомороха в ряду родственных «шута – дурака – юродивого», высказывающих, разумеется, по-разному, любую правду, нелицеприятную критику и делающих предсказания, сделало его героем непобедимым и бессмертным. Бессмертным не потому только, что он, как действующее лицо, погибал в конце одного представления и вновь появлялся в начале другого, но и потому, что самым излюбленным и необходимым средством выражения для него был смех, который, по утверждению академика Д.С.Лихачева, «заключает в себе разрушительное и созидательное начала одновременно».²³ Использование скоморохами в качестве трагикомического начала очистительного смеха, явившегося чудодейственным способом перерождения человека после нравственного разрушения и духовного катарсиса, переносило это возрождение и на образ самого Петрушки.

Еще одно объяснение обращения к образу Петрушки обусловлено его взаимосвязью с театром, в постановках которого участвовали реальные актеры, появлению и формированию которого содействовали эти сцены с участием куклы Петрушки. Синкретичность этого персонажа, его умение делать все – говорить, петь, плясать и всячески выражать необходимые по сюжету чувства, – превратили его как бы в символ, если не самого русского театра, то хотя бы импульса к его зарождению.

²² Большая Советская Энциклопедия. Гл/ред. Б.А.Введенский т.32 ПАНИПАТ-ПЕЧУРА Второе изд. Государственное научное издательство «Большая Советская Энциклопедия», 1955г., с.624-625

²³Лихачев Д.С., Панченко А.М. «Смеховой мир» Древней Руси. Л., 1976г., с.3

Эволюция образа Петрушки от персонажа балаганной перчаточной куклы до героя «классического» (то есть когда его роль исполнял живой актер) театра, в том числе, балетного спектакля, примечательна в связи с проблемой, к изучению которой обращена данная статья. Наивысшей точкой этой эволюции стал образ Петрушки в одноименном балете парижского сезона 1911 года. Именно здесь, как бы продолжая духовную связь с культурой русских скоморохов, соединивших в единое целое фольклор и сатиру (соединение традиционного и необычного –В.К.), произошло сложение привычных характерных черт предыдущих образов Петрушки с особенностями новыми, произошел переход от образа ершистого, острого, непримиримого - к образу романтическому, непривычно глубокому и трогательному. Это в значительной степени соответствовало также эстетической программе «Мира искусства». С одной стороны, в этом герое присутствовала изначальная колкость, «мастерство глума» и речевого комизма, связанные, как заметил А.Белкин, еще и с образами «рукописной» демократической драматургии XIX в. – гаера и райка.²⁴ С другой стороны, в нем стали проявляться качества, продиктованные тонкими эмоциями и переживаниями. Такое соседство должно было выигрышно подчеркнуть оба ряда качественного спектра и, тем самым, выявить краеугольное положение эстетики «Мира искусства» - создание нового отношения к действительности «путем пересмотра серии забытых мирозерцаний.»²⁵ Возможность интерпретации искусства прошлых эпох как призм для восприятия прошлого, настоящего и будущего, в чем именно, по мнению мирискусников, и заключалась «вся сила, вся будущность так называемого нового искусства»,²⁶ базировалась на мысли художника М.Врубеля (1856-1910) о «пересоздании» человека искусством. Мысли, которую в условиях исторической действительности начала XX-го века осознала вся русская интеллигенция. Михаилу Александровичу Врубелю, одному из немногих, удалось «иллюзионировать душу, будить ее от мелочей будничного величавыми образами»²⁷ вечными, навеянными не жизнью непосредственно, а литературой и искусством, которые уже выработали формулу красоты и гармонии в прошлом, особенно, если эти последние были выдержаны в едином стиле, выражающем дух самой эпохи.

²⁴ А.А.Белкин. Русские скоморохи. М., 1975г., с.162

²⁵ М.М.Алленов, О.С.Евангулова, Л.И.Лифшиц. Русское искусство X-начала XX века Архитектура Скульптура Живопись Графика М., 1989г., с.425

²⁶ М.М.Алленов, О.С.Евангулова, Л.И.Лифшиц. Русское искусство X-начала XX века Архитектура Скульптура Живопись Графика М., 1989г., с.425

²⁷ П.К.Суздальев. Врубель. Личность Мироззрение Метод М., 1984г.,с.414

Художник, какое-то время состоявший в раннем объединении «Мир искусства», провозглашал: «Мы, Мир Искусства, хотим найти для общества настоящий хлеб!».²⁸ И почти так же, как его работы, представленные наиболее полно и, говоря словами Сергея Судейкина, находились в центре²⁹ выставки на Осеннем салоне 1906 года в Париже, точно так же, по мнению того же живописца С.Судейкина, Михаил Врубель был «началом начал современной живописи.».³⁰ Философское осмысление этим художником взаимосвязей окружающей действительности и искусства стало отправной точкой сразу для двух явлений в русском изобразительном искусстве, поэзии, литературе и музыке, проявившихся наиболее зримо и последовательно в творчестве представителей «Мира искусства» и «Голубой розы». Последние в «духовном и эстетическом бунте против экономических и эстетических установлений буржуазного века»³¹М.Врубеля, в его художественном мировоззрении ближе разглядели тонкое, возвышенно-романтическое и эстетическое начало. А большинство мирискусников избрало путь выявления негативных и отрицательных черт прошлого, сатирического и даже гротескового преломления минувших эпохальных периодов истории европейской и русской культуры как способ отказа от прямой социальной тенденциозности и сохранения через трезвую иронию категорий красоты, изящества, грациозности, которых современная им действительность и не предоставляла и не предполагала.

Любопытно, в связи с трактовкой образа главного героя постановки «Петрушки», состоявшейся 13 июня 1911г. на сцене театра «Шатле», отметить, что один из организаторов и идеолог «Мира искусства» - художник Александр Николаевич Бенуа (1870 - 1960), высокопрофессионально пользующийся приемом комического ретроспективизма, к решению вопроса в данном случае подошел от противного, точнее, от противоположного. Персонаж популярного в народе представления, изначально носившего острокритический характер, уже сам по себе, был смешным и ужасным одновременно. Его ролевые качества, многократно усиленные и даже гипертрофированные еще и уродливой внешностью, придавали и самому образу и всему театральному действию в целом звучание пародии и гротеска. И такой герой, оказавшийся единственным и постоянным «раздражителем»

²⁸ П.К.Суздаев.Врубель.Переписка.Воспоминания о художнике. Л.,1976г., с.24

²⁹ «Зал Врубеля был центром. И когда мы входили ...точно крылья томления нового искусства, рожденного в муках Врубеля, мучили и пленяли.» там же, с.296

³⁰ П.К.Суздаев.Врубель.Переписка.Воспоминания о художнике. Л.,1976г., с.296

³¹П.К.Суздаев. Врубель Личность Мировоззрение Метод М., 1984г. с.135

публики, сам ничего, кроме негативных ощущений, как бы и не вызывал. Исследователь творческого наследия Игоря Стравинского И.Я.Вершинина, обращаясь к балету «Петрушка», заметила: «Порой всю индивидуальную неповторимость образа Петрушки сводят к так называемой «кукольности», которая «регламентирует» формы его жизнеповедения, а человеческое начало, ожившее в нем – любовь, гнев, отчаяние, - механизмирует и превращает в карикатуру.»³² Автор сценографии и соавтор либретто к балету, А.Бенуа, называвший Петрушку «другом с самого детства»,³³ предупреждая подобное восприятие, ввел в действие еще один персонаж – Арапа, к которому уходит глупая Балерина. Изначально, в балаганно-ярмарочных (где господствовала атмосфера³⁴ раскованности и фамильярного равенства, особой формы взаимоотношений между людьми, какая, по мнению М.М.Бахтина, была на карнавале – В.К.) «Петрушках», как правило, в конце, разыгрывалась сценка «Танец с невестой» или «Свадьба с Акулиной», в которой поведение самого героя и его невесты было столь развязанным и скабрёзным, особенно в ранний период, что женщины и дети в обязательном порядке уходили с представлений. Введение же в драматургию балета Арапа и сравнение с ним главного героя выпукло продемонстрировало его незаметные до этого черты, ярко подчеркнуло неожиданную положительную составляющую образа всегда резкого и ироничного Петрушки и изменило традиционное восприятие его внутреннего содержания. Легким отголоском подобного воздействия стало также включение Арапа в число персонажей работы Сергея Судейкина (1882 – 1958) «Петрушка» 1915 года (бумага на картоне, смешанная техника) из собрания Музея русского искусства (коллекция проф.А.Я.Абрамяна). «Если Петрушка был олицетворением всего, что есть в человеке одухотворенного и страдающего, иначе говоря, - начала поэтичного, ... то «роскошный арап стал олицетворением начала бессмысленно-пленительного, ... незаслуженно-торжествующего.»³⁵ Петрушка в решении Бенуа, неожиданно и как-то вдруг ставший близким и понятным, волнующим глубиной своих чувств и трогательно-беззащитным, повел за собой Петрушку Фокина-Нижинского и Петрушку Стравинского. Ведущий балетмейстер и хореограф Русских сезонов,

³² И.Я.Вершинина. Ранние балеты Стравинского. М.,1967г., с.115

³³ А.Бенуа. Воспоминания о балете.–в кн.:Александр Бенуа.Мои воспоминания. т.2 М.,1980г., с.521

³⁴ М.М.Бахтин.Франсуа Рабле и художественная культура средневековья и ренессанса. М., 1990г.

³⁵ А.Бенуа. Воспоминания о балете.–в кн.:Александр Бенуа.Мои воспоминания. т.2 М.,1980г., с.522

Михаил Фокин «гениально нашел (характерность пластики – В.К.) для хореографического воплощения Петрушки.»³⁶ Вспоминая, что они (авторы и исполнители балета – В.К.) «...рассказали о страданиях Петрушки каждый своим языком»,³⁷ он признавал, что этим спектаклем им удалось в совершенстве изменить весь современный балет – русский и европейский. Вацлав Нижинский – балетмейстер, танцор и актер – неповторимый исполнитель роли Петрушки, со всей психологической глубиной раскрыл ранимую и тонкую душу внешне уродливого шутоксомороха. «Его прекрасное лицо, хотя оно и не было красивым, могло становиться самой впечатляющей актерской маской. В роли Петрушки он был самым волнующим существом, когда-либо появлявшимся ... на сцене.»³⁸ Композитор Игорь Стравинский, которому принадлежала не только музыка, но и наименование балета, вспоминал, что при сочинении «этого страшного отрывка (небольшой концертной пьесы для оркестра с солирующим роялем, соревнование между которыми превращает их из музыкальных инструментов в самостоятельные действующие персонажи, благодаря чему, по мнению И.Вершининой, «обычная техническая задача порождает целую художественную концепцию.»³⁹ К 1911 году Сергей Дягилев привлечет композитора к созданию хореографической драмы о смешном и несчастном герое и убедит его положить эту пьесу в основу 2-ой картины балета – В.К.) ...перед глазами у меня был образ игрушечного плясуна, внезапно сорвавшегося с цепи ... я часами гулял, ... стараясь найти название, которое выразило бы в одном слове характер моей музыки, а следовательно, и моего персонажа ... Петрушка!»⁴⁰ Это было единственное произведение в его творчестве, в котором музыка пробуждала сочувствие к страдающему герою. Интересно, как отмечают музыковеды, что при ее создании композитор применил принципиально новый – полифонический, опирающийся на тембровый контрапункт, полиритмию и политональность, – прием, открывающий широкие пути для использования интонационно-выразительных возможностей тех музыкальных средств, которые до этого считались лишь вспомогательными. Но балет, несмотря на это, получил признание прежде в художественно-театральных кругах и только потом – в музыкальных. В авторитетном в художественной среде того времени

³⁶ И.Я.Вершинина. Ранние балеты Стравинского. М.,1967г., с. 114

³⁷ М.Фокин. Против течения. Воспоминания балетмейстера. М.-Л., 1962г., с. 278

³⁸ Стравинский И. Диалоги. Л., 1971г., с. 68

³⁹ И.Я.Вершинина. Ранние балеты Стравинского. М.,1967г., с.69-70

⁴⁰ И.Стравинский. Хроника моей жизни. Л., 1963г., с.72

журнале «Аполлон» в статье Я.Тугендхольда высказывалось всеобщее мнение о «... замечательном достижении на поприще синтеза искусств. «Петрушка» - прежде всего живопись, музыка и пластика.».⁴¹ О безоговорочной творческой удаче постановки сезона 1911 года говорит и то, что А.Бенуа и М.Фокина позднее приглашали ставить «Петрушку» на сцене Мариинского театра и в Стокгольме. Общим постановкам так и не суждено было состояться, т.к. пришлось они на осень 1917 года, а в советское время «Петрушку» в той же «редакции» часто ставили на ведущих театральных подмостках.

Успех парижского «Петрушки», ставшего образцом в области синтеза искусств, и еще нескольких спектаклей Русских сезонов, был бы невозможен без того примечательного и чрезвычайно важного начинания, которое вновь возвращает нас к личности и творчеству Михаила Александровича Врубеля, который, как отметил А.Бенуа, «хотел и единственный, который мог состязаться с великими мастерами Ренессанса.».⁴² В своем постоянном стремлении (которое было для него настолько актуальным в 1890-х годах, что он писал в одном из своих писем: «Поиски мои исключительно в области техники ... остальное все сделано уже за меня, только выбирай.».⁴³ - В.К.) найти адекватные средства выражения красоты и гармонии, он обратился, - чему очень способствовало его пребывание в подмосковном имении Абрамцево С.И.Мамонтова и активное участие в фольклорных кружках и в оформлении спектаклей Частной оперы, - к различным изобразительным техникам и видам - станковым и монументальным, сценографии, иллюстрации, скульптуре, прикладным искусствам и народным ремеслам. Выработка синкретичности характера исполнения и невероятное расширение профессионального инструментария привели к выработке гибкости и многогранности его художественного языка, обогатившего формообразующее и смысловое содержание всего его творчества. Необходимость многосторонней развитости, умение русских художников начала XX века мастерски справиться с любой задачей, с равным совершенством выразить свое видение с помощью самых разных художественных средств, способность правильно, к месту, точно и смело использовать их «языковую» специфику, все это было выдвинуто Врубелем, привито и выработано, прежде всего, его примером и опытом.

⁴¹ «Аполлон», 1911, №6 с.74

⁴² Цит. по кн.:М.М.Алленов, О.С.Евангулова, Л.И.Лифшиц. Русское искусство X-начала XX века Архитектура Скульптура Живопись Графика М., 1989 с.425

⁴³ Врубель.Переписка.Воспоминания о художнике. Л.,1976 с.55

А практические шаги на этом пути становления синкретического начала и выработки синтетических принципов русского искусства конца XIX – начала XX века одним из первых, наряду с М.Врубелем, предпринял еще один русский гений – Константин Алексеевич Коровин (1861 – 1939), что, как известно, оказалось незаслуженно сдвинутым на второй план в оценке его творчества, которое по мнению А.Бенуа, «было самым передовым и самым европейским. Это был наш первый «импрессионист.»». ⁴⁴ Впервые именно К.Коровин в 1898 году на петербургских гастролях мамонтовской оперной антрепризы, по свидетельству того же А.Бенуа, «решительно покончил со всеми традиционными формулами декорационной «профессии» и... сумел приспособить свою «картинную» технику к покрытию сотен квадратных аршин ... Это было первое соединение костюмера и декоратора в одном лице, в результате чего получалась изумительная, до тех пор невиданная гармония.» ⁴⁵ Опыт сценографии московской Частной оперы, где «рядом с Шаляпиным ошеломили тогда Коровин и Врубель», ⁴⁶ за тринадцать лет до парижских Русских сезонов, обозначил конкретную дорогу к осуществлению той самой несостоявшейся мечты Новерра, о которой уже говорилось выше.

Маленькая рыжеволосая кукла с дубинкой в руке, в шутовском красном колпаке с кисточкой и серо-желтой скоморошьей рубахе-«перчатке», побудила собой создание большой и неповторимой театральной постановки и, став в ней главным действующим персонажем, пережила истинную драму и взлет человеческих эмоций, прожив жизнь в черно-звездной палатке у театрала и качелей балагана на ярмарочной площади, на фоне матово-синей порталльной арки, выступающей из-под красного занавеса (эскизы А.Бенуа исполнил в натуральную величину другой мирискусник – Борис Анисфельд. –В.К.), и покорила искушенных в искусстве музыки и театра, утонченных и взыскательных французов, а также знавшую блестящие взлеты и печальные падения в области пластических искусств Европу.

Организаторы и исполнители Русских театральных и балетных сезонов (именно 1908-1914 годов, потому что сохранить совершенство синтеза искусств в постановках последующих сезонов уже не удастся никому – В.К.) в Париже, по признанию А.Бенуа, «со школьной скамьи

⁴⁴ А.Н.Бенуа. Русские художники. Константин Коровин. По поводу его юбилея в кн.: Александр Бенуа размышляет... Вступительная статья и комментарии И.С.Зильберштейна и А.Н.Савинова. М., 1968г., с.209

⁴⁵ Там же, с.211

⁴⁶ Там же, с.210

соединенные друзья, сближенные сходством творческих талантов и своим культом театра»,⁴⁷ благодаря профессиональному мастерству и блестящему знанию национальной истории, неповторимой влюбленности в мир театра, окрыленные его поэтической эстетикой, созданием образа Петрушки утвердили за русской культурой достижения, обогатившие мировую хореографию, музыкальную культуру и пластические искусства нового времени. Они не просто подкупали публику настойчивостью в достижении художественной цели, покоряли виртуозным исполнением, удивляли национальной спецификой и неопробованной новизной. Спустя годы Александр Бенуа, оценивая «головокружительный успех дягилевского дела», так объяснил его: «Мы показали какую-то «подлинность всего театрального зрелища». Снобический Париж был покорен, главным образом, нашей...«наивностью» и нашей, основанной на собственном убеждении, искренностью.»⁴⁸

Образ Петрушки, в котором, по определению А.М.Горького «гармонически сочетается рация и интуиция, мысль и чувство»,⁴⁹ оказался благодатным для великолепного проявления совершенной, неповторимой и изумительной музыки, хореографии, театральной драматургии и изобразительного искусства России первой трети XX века.

Վերա Կալչուրինա

**ՊԵՏՐՈՒՇԿԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ԴՅԱԳԻԼԵՎՅԱՆ
ԽԱՂԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ (ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ,
ԿԱՏԱԿԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՈՆՁԻԱ) ԵՆԹԱՏԵՔՍՈՒՄ**

Ռուսական խաղաշրջանները, որ Սերգեյ Դյագիլևը կազմակերպում էր ու հաջողությամբ անցնում էին Փարիզում, արտացոլում են այդ դարերի սահմանագծի արվեստների՝ ազգային բանահյուսության, թատրոնի ու գեղագիտության համադրումը՝ «Արվեստի աշխարհը» գեղարվեստական միավորման հովանու ներքո: Հատկապես «Պետրուշկա»՝ տոնավաճառային ներկայացումների ժողովրդի կողմից սիրված համանուն հերոսի ու բարեկենդանային զվարճահանդեսների պարազլիխ մասին բալետն էր ցուցադրում ռուսական գեղանկարչության ու բեմագրության, երաժշտության ու պարարվեստի վարպետների՝ կերպարվեստի ու թատրարվեստի

⁴⁷ А.Н.Бенуа.Дягилевская выставка. в кн.: Александр Бенуа размышляет... Вступительная статья и комментарии И.С.Зильберштейна и А.Н.Савинова. М., 1968г., с.505

⁴⁸ Там же., с.507-508

⁴⁹ А.М.Горький. Советская литература. Доклад на Первом всесоюзном съезде советских писателей 17августа 1934г.- Собр.соч. в 30тт. т.27, М.,1953г., с.305

ամենատարբեր տարատեսակների համադրման հնարավորությունները, բացահայտում այդ ձեռքբերումները սնող հիմքերը, ինչպես նաև որոշակիորեն սահմանագծում ռուսական մշակույթի տեղն ու նշանակությունը՝ եվրոպական մշակույթի հարևանությամբ:

Պետրուշկայի կերպարի զարգացումը սկիզբ է առնում հեթանոսական, հին սլավոնական ծեսերի մասնակցից, խեղկատակների մշակույթի հիմնավորողից ու կրողից՝ ընդհուպ ռուսական ժողովրդական թատրոնի ու թատերագրության տարբեր ձևերի ամենաժողովրդական գործող անձը: Դրա հետ միաժամանակ 1911 թ.-ի փարիզյան համանուն բալետային ներկայացումում տեղի է ունենում Պետրուշկայի նախկին կերպարների բնորոշ գծերի զուգակցումը նորերի հետ, որն այդ կերպարը դարձնում է անսովոր ռոմանտիկ, հուզիչ ու խորը: Միաժամանակ կերպարն իր մեջ ներառնում է ռուսական բազմադարյան ազգային մշակույթի բացառիկ առանձնահատկությունները:

Vera Kakchurina

THE CHARACTER OF PETRUSHKA IN THE CONTEXT OF DYAGILEV SEASONS' AESTHETICS AND CONTEMPORARY RUSSIAN ART

Sergey Diaghilev's Russian Seasons, held in Paris, reflect the combination of ethnic folklore, theater and aesthetics. Particularly, the ballet "Petrushka" displayed the opportunities of combining main features of Russian painting and staging art.

The development of Petrushka's character goes back to pagan, ancient Slavic rituals participant, buffoons and supporting bearer of culture, including the various forms of folk theater. In 1911's Parisian performance the character of Petrushka enriched and obtained new features that made the image romantic, touching and profound. At the same time the character remains the bearer of Russian centuries-old culture.

**ՀԱՅՈՑ ՀԻՆ ՀԱՎԱՏՔԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԻՍ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՐԳՈՒՄ
(համառոտ ակնարկ)**

Հայաստանը, գտնվելով Արևմուտքի և Արևելքի քաղաքակրթությունների խաչմերուկում, ուրույն և զարգացած հոգևոր մշակույթ է ունեցել վաղնջական ժամանակներից ի վեր: Հայ ժողովուրդը հազարամյակների ընթացքում պահպանել է ազգային դեմքը, հեթանոս անցյալից ժառանգած ավանդույթները՝ քրիստոնեությամբ սրբազրված, դարձրել ապրելակերպ և սերնդե-սերունդ փոխանցել:

Հայերիս արդի հոգևոր մշակույթում որոշակի տեղ են զբաղեցնում ժողովրդական տոները, որոնց մեջ ավանդաբար պահպանվել են հնամենի շատ ծեսեր, սովորույթներ, պատկերացումներ, որոնք կենսունակ են եղել շնորհիվ ժողովրդի ավանդապահության: Ներկայումս ժողովրդի տոնական կյանքի կարևոր մաս են կազմում այնպիսի տոներ, որպիսիք են Ամանորը, Ս. Ծնունդը, Տրնդեզը, Ծաղկազարդը, Զատիկը, Համբարձումը, Վարդավառը, Խաղողօրհները, Սրբխեչը և այլք, որոնք մեզ են հասել դարերի խորքից, կենցաղում արմատավորվելով և յուրահատուկ երանգ հաղորդելով առօրյային: Այս տոների նախատիպերը կարելի է գտնել քրիստոնեական տոնացույցում, իսկ հնատիպերը՝ նախաքրիստոնեական ծիսա-սովորույթային համակարգում¹:

Վերոնշյալ տոները ոչ միայն ժողովրդական, այլև եկեղեցական տոնացույցի բաղկացուցիչներ են, ինչին կանդրադառնանք ստորև: Մինչ այդ հարկ է նշել, որ եկեղեցական ու ժողովրդական տոների փոխառնչությունների հարցերը վաղուց են հետաքրքրել հայ մշակույթով զբաղվող մասնագետներին: Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանը Հայ եկեղեցու տոներին նվիրված իր աշխատության մեջ նկատել է, որ «Տոնական օրերի հանդիսությունների մեջ, բացի եկեղեցական արարողություններից, իրենց գոյությունն են պահել ժողովրդական որոշ սովորույթներ և հեթանոսական շրջանից մնացած կրօնական ու ազգային ասանդություններ. յաճախ հեթանոսական ազգային սովորույթները և քրիստոնեական տոները միասնաբար ընդելուզուած ներկայանում են եկեղեցում և ժողովրդի բարեպաշտական զգացումների մեջ: ...Դժբախտաբար, հեթանոսական շրջանից մնացած ազգային

¹ Որպես համեմատական նյութ տես՝ Фрезер Д.Д., Золотая ветвь, М., 1980; Календарные обычаи и обряды народов Восточной Азии, М., 1985; Календарные обычаи и обряды народов Западной Азии, М., 1997; Календарные обычаи и обряды народов Зарубежной Европы, М., 1973, 1977, 1978, 1983; Brian M., Anthropological Studies of Religion, Cambridge, 1990; Bell C., Ritual Theory, Ritual Practice, N.Y., 1992; Арутюнов С.А., Рыжакова С.И., Культурная антропология, М., 2004.

ասանդութիւնների մասին կցկտուր և անորոշ գաղափար ունենք: ...մնացել է միայն ժողովրդական սովորութիւնը, որն իր արտայայտութիւնը գտնում է քրիստոնէական տօների հետ միաժամանակ»²: Եվ այս ամենից ելնելով ինքը՝ հոգևորական հեղինակը, յուրաքանչյուր տոն ուսումնասիրելիս նկատի է ունեցել նաև հեթանոսական շրջանի հետ նրա կապը և ըստ այդմ բացատրել տոնի բնույթն ու նպատակը³:

Շետագա ուսումնասիրողները նույնպես հայ ժողովրդական տոնացուցում փաստում են նրա հնագույն շերտերը՝ բնապաշտական հավատալիքներից ակունքվող ծիսա-պաշտամունքային տարրերը, որոնք հեռավոր անցյալից մեր օրերն են հասցրել նախաքրիստոնէական տոնահանդեսների շունչն ու ոգին: Ազգագրագետ Հ. Խառատյան-Առաքելյանը հայ ժողովրդական տոներին նվիրված իր աշխատությունում գրում է. «Քրիստոնէության ընդունումից հետո, ինչպես աշխարհի շատ ժողովուրդների մոտ, հայ ժողովրդի ավանդական տոնացույցը ևս վերածնվեց քրիստոնէական աշխարհայացքի և համակարգված օրացույցի կաղապարով և այդ կերպ գոյատևեց ավելի քան մեկուկես հազարամյակ: Այսօրվա եկեղեցական տոնացույցն անվանապես արտացոլում է այդ մեկուկես հազարամյակի ընթացքում մեր ժողովրդի կենցաղում լիարյուն կյանքով ապրած բուն ժողովրդական և եկեղեցական տոների ամբողջությունը»⁴: Ավելին, հեղինակը կարծում է, որ ժողովրդական տոները «լիիրավ կարող են կոչվել ազգային-եկեղեցական տոներ»⁵:

Ողջ վերը ասվածից հետևում է, որ հայոց նախաքրիստոնէական ժամանակների հավատքային, դիցապաշտական և առասպելաբանական համակարգի բազում բաղադրիչներ շարունակել են գոյատևել նաև քրիստոնյա միջնադարում, կերտելով ժողովրդական ծիսա-պաշտամունքային մի ուրույն աշխարհ, որն իր հետագա դրսևորումներն է գտել այժմյան տոնակարգում ևս, որում ազգային հանդիսակարգը զուգակցվում է պետական տոներին և հիշատակի օրերին: Տոները և հիշատակի օրերը սահմանված են «Տոների և հիշատակի օրերի մասին ՀՀ ՕՐԵՆՔ»-ով, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թ. հունիսի 24-ին⁶:

Ժողովրդական տոների մի մասը ներառված է տոների վերաբերյալ նշված պաշտոնական փաստաթղթում, սակայն մի մասն էլ՝ ոչ, քանզի դրանք զուտ եկեղեցական են համարվում: Ընդ որում, վերջիններիս մի մասը անշարժ տոներ են՝ ամրագրված նշման օրով, մյուս մասը՝ շարժական, որոնց նշման օրը փոփոխական է՝ պայմանավորված եկեղեցական

² Մանուկեան Ա. արքեպ., Հայ եկեղեցու տօները, Թեհրան, 1969, էջ 10:

³ Անդ:

⁴ Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Եր., 2005, էջ 7:

⁵ Անդ, էջ 8:

⁶ Շետագա լրացումներից տոնացույցի պատկերը չի փոխվել. տես՝ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1274&lang=arm>

տոնացույցով: Այդ տոներն են՝ Նոր տարի (Ամանոր, հունվ. 1), Ս. Ծնունդ և Հայտնություն (հունվ. 6), Անվանակոչություն (հունվ. 13), Տեառնընդառաջ (Տրնդեգ, փետր. 14), Ս. Սարգիս (Ջատիկից 63 օր առաջ), Բարեկենդան (Մեծ Պասից առաջ), Մեծ Պաս (Ջատիկից 9 շաբաթ առաջ), Ս. Վարդանանց (Բարի գործի և ազգային տուրքի օր, Ջատիկից 8 շաբաթ առաջ), Ծաղկազարդ (Ծառզարդար, Մեծ Պասի նախավերջին կիրակի), Ջատիկ (Հիսուսի Հրաշափառ Հարության օր, գարնանային գիշերահավասարին հաջորդող լիալուսնի կիրակի), Կանաչ կիրակի (Կրկնազատիկ, Ջատիկ հաջորդ կիրակի), Կարմիր կիրակի (Կանաչի հաջորդ կիրակի), Մայրության ու գեղեցկության (ապր. 7), Յեղասպանության Ս. զոհերի հիշատակի օր (ապրիլ 24), Ս. Էջմիածնի օր (Ջատիկից 64 օր հետո), Համբարձում (Վիճակ կամ Կաթնապրի օր, Ջատիկից 40 օր հետո), Ս. Սահակ և Սբ. Մեսրոպ (հունիս 12), Վարդավառ (Հիսուսի Պայծառակերպություն կամ Այլակերպություն, Ջատիկից 98 օր հետո), Նավասարդ (օգոստ. 11), Խաղողօրհներք (Վերափոխում Ս. Աստվածածնի, օգոստ. 15-ին հաջորդող կիրակի), Ս. Խաչ (Խաչվերաց, Սրբխեչ կամ Ուլնոց, սեպտ. 14-ին հաջորդող կիրակի), Վարագա Ս. Խաչ (սեպտ. 28) Սբ. Գևորգ (սեպտ. վերջին շաբաթ), Ս. Թարգմանչաց (հոկտ. երկրորդ շաբաթ), Նախրաթող (աշնանային Նավասարդ):

Ներկա աշխատանքում համառոտ ներկայացված են հայոց տոնակարգի բնորոշ գծերը հնում, միջնադարում և ներկայում, դիտարկելով յուրաքանչյուր դարաշրջանի առանձնահատկությունները մեկ-երկու տոնի քննությամբ:

Ա/ Հնագիտական, բանահյուսական, մատենագրական, ազգագրական և այլ աղբյուրների համակողմանի հետազոտման արդյունքում հայտնի է դարձել, որ հեթանոս անցյալում մեր նախնիների տոնական կյանքն ընթացել է բնության երևույթներին ու փուլերին համաքայլ, մարդկանց տնտեսական գործունեությանը սերտորեն կապակցված և գործող օրացույցով կարգավորված: Հնադարում տոնակատարությունը, դատելով աղբյուրների տվյալներից, նշում էին աղմկալի ու խրախճալի ձեսերով, երգ ու պարով, ժողովրդական խաղերով, մրցույթներով, թատերական մանրապատումներով, հանդիսավոր ու կատակային զանազան միջոցառումներով: Տոնն ուղեկցվում էր աշխարհախումբ հավաքներով ու ելույթներով, զորավարժություններով, ձիավազքով, այլազան ուրախ ու խառնամբոխ հանդեսներով: Տոնահանդեսը կիզակետին էր հասնում աստվածներին ընծաներ ու զոհեր մատուցելով՝ անմիջաբար կամ քրմական դասի միջնորդությամբ: Բույսեր, կենդանիներ, թռչուններ էին զոհաբերվում՝ աստվածների բարեհաճությունը նվաճելու, նրանց գթառատ վերաբերմունքին արժանանալու համար:

Տոնակատարումն սկսվում էր տաճարի, բազիլի, մեհյանի կամ այլ սրբատեղի ներսում ու շրջակայքում, շարունակվելով բակերում, տներում, մերձակա դաշտերում և այլուր: Տոները հիմնականում բնապաշտական պատկերացումներին էին առնչվում՝ երկնային լուսատուների ու

մոլորակների, բնության տարրերի (հող, ջուր, օդ, կրակ) ու տարերքի (որոտ-կայծակ, երկրաշարժ, հրաբուխ ևն), կենդանական ու բուսական աշխարհի հետ կապված հավատալիքներին: Դրանք հաճախ նվիրված էին լինում տոնի հովանավոր աստծուն կամ աստվածներին, որոնց սրբավայրում էլ հավաքվում էր ժողովուրդը և որոշակի ծիսակատարություններ անում: Հին տոներից քննության առնենք Նավասարդը և Տրնդեզը:

Նավասարդ.- նկարագրված է Ագաթանգեղոսի կողմից որպես «նոր պորոց» տոն, տարվա ամենակարևորը լինելով, նվիրված էր Անահիտ, Արամազդ, Աստղիկ, Վահագն, Նանե, Միհր, Տիր դիցերին ու դիցուհիներին, որոնց յոթ զոհասեղանները գտնվում էին Աշտիշատում՝ Արածանի գեղի ափի նշանավոր պաշտամունքային կենտրոնում: Նավասարդ ամսվա արեգ օրը, այսինքն օգոստոսի 1-ին, հին հայերը բերքահավաքի, հունձքի տոնախմբություններ էին կատարում, կազմակերպում ոսկմական խաղեր, արքայական որսարշավ, գուսանների մրցույթներ, հողագործը ներկայացնում էր իր հավաքած բերք-բարիքը, խաշնարածը՝ իր սպացած մթերքը, արհեստավորը՝ իր ձեռքի գործը: Հաղթողների գլխին վարդահյուս պսակ էին դնում ու անվանում պսակավորներ: Հավատում էին, թե աստվածներն այդ օրը լողանում են Եփրատ և Արածանի գետերում, հեղու բարձրանում մոտակա սարերն ու դիպում տոնահանդեսը, հովանավորում ուխտավորներին, որոնց օթևան էր տալիս Վանատուր հյուրընկալ աստվածը⁷:

Հին Հայաստանում Նավասարդյան խաղեր էին կազմակերպում, որոնք շատ նման էին հունական Օլիմպիական խաղերին: Նավասարդի առավոտն ու արքայական որսարշավն է կարոտով հիշում Արտաշես արքան մահվան մահճում.

*«Ո՛ր տայր ինձ զծուխ ծխանի
Եվ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց եւ զվարգելն եղջերուաց,
Մէք փող հարուաք եւ թմբկի հարկանեաք,
Որպես օրէն է թագաւորաց»⁸:*

Նավասարդը ազդարարում էր տարեսկիզբը, որը հայոց մեջ տարբեր դարաշրջաններում տարվա տարբեր եղանակներին է նշվել և տարբեր անվանումներ ստացել՝ Ամանոր, Նոր տարի, Կաղանդ (արևմտահայ միջավայրում): Վաղնջական ժամանակներում տարին սկսվել է գարնան առաջին՝ Արեգ ամսվա գիշարահավասարի օրը (մարտի 21-ին), երբ բնության զարթոնքի հետ կարծես վերածնվում էր ձմեռվա ցրտերին

⁷ Տոնի մասին տես՝ Ագաթանգեղայ Պատմություն Հայոց (քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ա. Կնունյանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի), Եր., 1983, էջ 466; Вардумян Г., Дохристианские культы армян,- Հայ ազգագրություն և բանահյուսություն, 18, Եր., 1991, էջ 120-121; Արծրունի Գ., Դիցարան հայոց. հանրագիտարանային բառարան, Եր., 2003:

⁸ Տես՝ Կոստանեանց Կ., Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, թ. 33, էջ 87:

ընդհատված կյանքը: Տարեգրությունն ազդարարվում էր փող փչելով ու թմբուկ զարկելով, ճոխ տոնահանդեսներով, սկիզբ էր առնում տնտեսական տարին, երկրագործական, անասնապահական, արհեստավորական աշխատանքները: Հնագույն և հին դարաշրջանում, ինչպես վերը նշվեց, տարին սկսվում էր Նավասարդի 1-ից՝ այն օրվանից, երբ պատմական ավանդության համաձայն, Հայկ նահապետը ահեղ մարտում հաղթեց բռնակալ՝ Բելին, հայոց պատմության սկիզբը դնելով⁹: Միջնադարում Նոր տարին տոնվել է Արեգ ամսվա առաջին օրը՝ մարտի մեկին (Նաղաշ Հովնաթան՝ «Այսօր գարուն է, Նոր տարի...»): Ուշ միջնադարում Նավասարդը աշնան վերջերում էր նշվում՝ այգեկույթից ու նախրաթողից հետո, երբ բերքահավաքն ու խաշնարածական աշխատանքներն անդեն ավարտված էին, և հայ մարդը հանգիստ կարող էր վայելել տոնը: Ամանոր-Նավասարդյան բազմաբնույթ ծիսակարգը միտված էր ոչ միայն նոր տարվա սկիզբն ազդարարելուն, այլև բնության բերրիությունն ու հասարակության բարօրությունն ապահովելուն¹⁰:

Թեև եկեղեցական տոնացույցի մեջ չի ներառվել հնագույն Նավասարդը, ժողովրդական ծիսակարգում այն դարեր շարունակ պահպանվել է որպես ամենասիրելի տոներից մեկը, տարբեր գավառներում հանդես գալով տարբեր անուններով: Ներկայիս եկեղեցական տոնացույցում այն դրսևորվում է որպես Բուն Հայոց թվականի սկիզբ: Մայր Աթոռի օրացույցի առաջին էջում ամեն տարի նշվում է նաև Հայկյան կամ Բուն Հայոց թվականը՝ մ.թ.ա. 2492-ից հաշված¹¹:

Տրնդեգ.- նշվում է փետրվարի 14-ին, արևի և լուսի աստված Միհրին էր նվիրված, և փետրվար ամիսն էլ հայկական օրացույցում կոչվում էր Մեհեկան: Տոնը արևի, լուսի, կրակի, ընդհանրական օջախի տոնն է եղել, կապված լինելով հուր երկնային՝ արևի և հուր երկրային՝ կրակի պաշտամունքի հետ: Տոնը նշվել է ձմեռվա ցուրտ ժամանակ, քանզի Տրնդեգի խարույկով մեր նախնիները նպատակ ունեին փաքացնելու հողը, որպեսզի գարունը շուր գա: Ժողովուրդը խարույկ էր վառում ու դրա շուրջը պտրվում, երգում-պարում, իսկ վերջում էլ, երբ կրակը հանդարտվում էր, իրար ձեռք բռնած ցատկում վրայով: Մարմրող խարույկի վրայով թռչում էին հաղկապես նորապսակ զույգերը՝ պսակի զգեստը հագած («մի տեսակ կրկնապսակ էր կատարվում, երկրորդ հարսանիք»¹²), որպեսզի կրակի սրբագործող ուժը նորակազմ ընդհանրից հեռացնի չարը և զույգին

⁹ Հայկ նահապի պատմությունը տես՝ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց (քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի), Եր., 1991, գիրք 1, գլ. Թ-ԺԳ:

¹⁰ Խառատյան-Առաքելյան Հ., նշվ. աշխ., էջ 21-39 (Ամանոր, Նոր տարի), 249-254 (Նավասարդ-Նախրաթող):

¹¹ Օրացոյց, 2014, Ս. էջմիածին, Մայր Աթոռ, էջ 1

¹² Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, էջ 54:

պողաբերություն ապահովի: Կրակի մոխիրը շաղ էին փայխ դաշտերում, որ բերքն առափ լինի, խարույկի ծխի ուղղությամբ էլ գուշակություններ անում¹³:

Բ/ Քրիստոնեությունը 301 թ. պետական կրոն հռչակելուց հետո հայոց առաջին հայրապետ Գրիգոր Լուսավորիչը հեթանոսական գրեթե բոլոր տոները հարմարեցրեց նոր հավատքին և եկեղեցական տոնացույցին: Միջնադարի տոնակարգն արդեն կապվեց Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի, ինչպես նաև Մարիամ Աստվածածնի, Ս. Խաչի և սրբերի հետ: Ուղեկցվելով հանդիսավոր ու խորհրդավոր արարողություններով՝ տոները նշվում էին եկեղեցում, վանքում, մատուռում, ժամատանը կամ այլ սրբավայրում ու դրա մերձակայքում: Նաև նշվում էին տոներ ի հիշատակ պատմական, ազգային կամ եկեղեցական դեպքերի, իրադարձությունների, ինչպես Վարդանանց, Թարգմանչաց տոները կամ Հռիփսիմյան կույսերի օրերը:

Ներկայումս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ինչպես վկայում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ամենամյա օրացույցը, ամեն տարի նշում է 50-ից ավելի շարժական ու անշարժ տոներ, որոնք բաժանվում են երեք խմբի՝ տոներ (ուրախ կամ տխուր առիթով), Սրբոց օրեր, Պահոց օրեր: Տոներն իրենց հերթին լինում են ա/ Տերունի (Ս. Ծնունդ, Տեառնընդառաջ, Ծաղկազարդ, Զատիկ, Համբարձում ևն), բ/ Աստվածածնի (Վերափոխումն Աստվածածնի, Ծնունդ Ս. Կույսի ևն), գ/ Խաչի (Խաչվերաց, Վարագա Ս. Խաչ), ինչպես և եկեղեցական կամ ազգային դեմքերին նվիրված (եկեղեցուն կամ պատմությանն առնչվող որևէ նշանակալի իրադարձություն ոգեկոչող): Եկեղեցական կարևոր տոները կոչվում են *տաղավար*. դրանք հինգն են՝ Ծնունդ և Հայտնություն, Զատիկ կամ Ս. Հարություն, Վարդավառ կամ Պայծառակերպություն, Վերափոխումն կամ Ս. Աստվածածին, Խաչվերաց կամ Ս. Խաչ: Տաղավար տոներին սովորաբար հաջորդում են ննջեցյալների հիշատակի օրերը՝ մեռելոցները: Եկեղեցական տոները որպես կանոն սկսվում են նախորդ օրվա՝ նախատոնակի երեկոյան ժամերգությամբ: Անդրադառնանք տոներից երկուսին՝ Տեառնընդառաջին և Պայծառակերպությանը:

Տեառնընդառաջ («Տոն քառասնօրյա գալստեանն Քրիստոսի ի փաճարն»¹⁴):- ժողովրդական Տրնդեզը քրիստոնեության դարաշրջանում փեղը զիջում է մանուկ Հիսուսի փաճարընծայման փոնին, որի հիմնական բովանդակությունը հետևյալն է. Մարիամն ու Հովսեփը քառասնօրյա որդուն փանում են փաճար՝ Աստուծոն ընծայելու, որպեսզի նրանց ընդառաջ է գալիս խոր ծերության հասած և փիրոջ գալստյանը սպասող Սիմոն ծերունին, որպեսզի էլ գալիս է փոնի քրիստոնեական անունը՝ Տեառնընդառաջ: Մանուկ Հիսուսին դիմավորում են ջահերով, իսկ Սիմոն ծերունին իր գիրկն է առնում նրան ու գոհություն հայտնում Աստուծուն, որ փեսավ Օծյալ Փրկչին:

¹³ Տոնի մանրամասն նկարագրություններ տես՝ Լալայան Ե., Ազգագրական Հանդէս, 1-26 գրքեր, Շուշի-Թիֆլիս, 1896-1917, ինչպես նաև՝ Խառատյան-Առաքելյան Հ., նշվ. աշխ., էջ 53-75:

¹⁴ Օրացոյց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 14 փետրվարի:

Տեանընդառաջի նախադրոնակին՝ փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությանը, եկեղեցում երգվում են տոնի շարականները, որից հետո ներկաներին բաժանվում են մոմեր, իսկ հանդիսադիր եկեղեցականը վառում է խորանի սեղանին դրված մոմերը: Ժամերգությունից հետո հավաքացյալները վառում են իրենց մոմերն ու փանում տուն: Երեկոյան թե եկեղեցու, թե տների բակերում խարույկներ են վառվում, որոնց շուրջը տեղի են ունենում այն ծեսերը, որոնք ժառանգվել են հինավուրց Տրնդեզից:

Տեանընդառաջի հիմնական խորհուրդը լույսի ներբողն է՝ «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց», Հիսուս Քրիստոսի փառաբանումը՝ որպես Օծյալ Փրկչի, «անսկիզբ բանի» Ս. Կոյսից մարմին ստանալը՝ Աստծո որդու մարդեղանալը և տաճարին ընծայվելը¹⁵:

Հիսուսի Պայծառակերպություն կամ Այլակերպություն.- Հիսուսն իր Պետրոս, Հակոբոս և Հովհաննես առաքյալների հետ հեռանում է քաղաքից ու բարձրանում Թաբոր լեռ՝ աղոթելու: Մինչ ինքն աղոթում էր, աշակերտները օրվա աշխատանքից հոգնած՝ քնում են: Հանկարծ Հիսուսի դեմքը արևի լույսի նման փայլում ու պայծառանում է, զգեստը՝ սպիտակում ձյունի պես: Քիչ հետո երևում են Մովսեսն ու Եղիան և խոսում Հիսուսի հետ: Ողջ լեռը ողողած լույսից աշակերտները զարթնում են ու լսում Աստծո ձայնը՝ «Դա՛ է իմ սիրելի որդին, իրե՛ն լսեցեք»: Օրվա շարականը գովերգում է Թաբոր լեռան վրա պատահածը՝ «Լեռան վրա այլակերպվելով, ցոյց տուցիր Քո աստուածային զօրութիւնը: Քեզ փառաւորում ենք, ո՛վ իմանալի լոյս»¹⁶:

Հնագույն Վարդավառին փոխարինելու եկած Պայծառակերպության տոնի ավանդույթներն աղերսվում են հնուց եկող ջրատոնին, որն անհիշելի ժամանակներում, ավանդության համաձայն, կարգվել է Նոյ նահապետի կողմից՝ ի հիշատակ աշխարհակործան ջրհեղեղի, որից փրկվելով՝ տապանը հանգրվանել է Արարատ լեռան վրա: Հայոց սրբազան լեռան փեշերին վերընձյուղվել է մարդկության պատմությունը, սկիզբ դնելով նաև հայ ժողովրդի պատմությանը: Ամառվա տապին իրար ջրցողելով, մարդկության երկրորդ սկզբի խորհուրդը գոյատևել է դարեդար, վերածվելով տոնահանդեսի, որի հնադարյա հովանավորները Անահիտ և Աստղիկ դիցուհիներն էին, իսկ միջնադարյան խորհուրդը՝ պայծառակերպված Քրիստոսը և Աստծո որդուն հետևելու պատգամը¹⁷:

Դ/ Թե՛ հեթանոս հնադարում, թե՛ քրիստոնյա միջնադարում և թե այսօր որևէ տոնի պաշտոնական մասը կատարվել ու կատարվում է տաճարի կամ եկեղեցու ներսում, խիստ կանոնարկված ձևով և հոգևոր դասի անմիջական գլխավորությամբ, իսկ ժողովրդական տոնախմբությունը

¹⁵ Տոնի առավել մանրամասն նկարագրությունը տես՝ Մանուկեան Ա., Հայ եկեղեցու տօները, էջ 59-70:

¹⁶ Մանուկեան Ա., Հայ եկեղեցու տօները, էջ 177-178:

¹⁷ Տոնի մանրամասն նկարագրությունը տես՝ Մանուկեան Ա., նշվ. աշխ., էջ 177-190; Խառատյան-Առաքելյան Հ., նշվ. աշխ., էջ 201-226:

շարունակվում բնության գրկում, ժողովրդի կողմից սրբազնացրած բացօթյա վայրում, կամ էլ՝ տանը, բակում: Ժողովրդական տոնակատարման ու կենցաղավարման ավանդույթներն ազգաբանության մեջ ընդունված է անվանել *ժողովրդական քրիստոնեություն*, քանզի հենց ժողովուրդն է դրանց կենսականություն հաղորդողը:

Ե/ Անցյալում հայոց բոլոր տոներն ուղեկցվել են տոնաձառով, որի արմատները հասնում են Կենաց ծառի հնագույն պաշտամունքին, և որի քրիստոնեական արձագանքները Աստվածաշնչյան դրախտի Անմահության և Իմացության ծառերն են: Ներկայիս տոնակարգում Նոր տարվա տոնն է զարդարվում փշատերև ծառով և Ծաղկազարդը՝ ուռենու նորաբողբոջ ճյուղերով ու պսակներով: Սակայն միտում է նկատվում վերականգնելու միջնադարից եկող տոնաձառային ավանդույթը, յուրաքանչյուր տոն ուղեկցելով իրեն հատուկ ծառով՝ հաճախ հասկահյուս (*խաչքուռ*) կամ ծաղկահյուս խաչի տեսքով, թարմ պտուղներով կամ չոր մրգերով զարդարված:

Հայոց արդի տոնակարգն, այսպիսով, ներառում է ինչպես անցյալից ժառանգած ավանդական, այնպես էլ՝ արդի պատմական իրավիճակում ձևավորված տոներն ու տոնահանդեսները, որոնք մեկ ամբողջություն կազմելով, յուրովի արտացոլում են մեր ազգային մտածելակերպը և հասարակական-մշակութային կյանքը:

Gohar Vardumyan

**THE REFLECTIONS OF ANCIENT ARMENIAN BELIEFS
IN PRESENT FOLK CELEBRATIONS
(brief survey)**

Nowadays, in social life of the Armenians a significant role is played by folk celebrations which have preserved, owing to national traditions, many rituals and customs tracing back to the deep past. Among them especially popular are: Christmas, Presentation of Jesus at the Temple, Resurrection, Ascension and Transfiguration of Jesus and others. Their prototypes may be observed in medieval Christian, and archetypes – in ancient pre-Christian (heathen) mythology and worship-cult systems of the Armenians.

Гоар Вардумян

**ОТРАЖЕНИЕ ДРЕВНЕАРМЯНСКОЙ ВЕРЫ В СОВРЕМЕННЫХ
НАРОДНЫХ ПРАЗДНЕСТВАХ
(краткий обзор)**

В современной духовной культуре армян особое место занимают народные празднества, в которых сохранилось множество обрядов, обычаев, дошедших до нас из глубин веков благодаря народной традиции. Особо знаменательны такие праздники, как Новый год, Рождество, Сретение Господне, Воскресение, Вознесение и Преображение Иисуса Христа и др. Их прототипы прослеживаются в средневековой христианской, а архетипы – в древней дохристианской (языческой) мифологических и культово-обрядовых системах армян.

НАСКАЛЬНЫЕ ИЗОБРАЖЕНИЯ ВЕЛИКОЙ АРМЕНИИ: АСТРОНОМИЧЕСКИЕ РИСУНКИ И СТРОЕНИЯ

